ՔԵՆԵԹ Է. ՀԵԳԻՆ

ԾՐԱԳՐԵՐ, ՆՊԱՏԱԿՆԵՐ, ԶԳՏՈՒՄՆԵՐ

ԾՐԱԳՐԵՐ, ՆՊԱՏԱԿՆԵՐ, ԶԳՏՈՒՄՆԵՐ

ՔԵՆԵԹ Է. ՀԵԳԻՆ

Plans, Purposes, and Pursuits, Kenneth E. Hagin, Armenian
Ծրագրեր, նպատակներ և ձգտումներ, Քենեթ Է. Հեգին, հայերեն

Հեղինակային իրավունքները պատկանում են © 1988, 1989
«Rhema Bible Church»-ին,
նաև հայտնի որպես «Kenneth Hagin Ministries, Inc.»
Բոլոր իրավունքները պաշտպանված են.
առաջին հրատարակություն՝ 1988 թ.
երկրորդ հրատարակություն՝ 1989 թ.
Տպագրված է ԱՄՆ-ում

ԱՄՆ-ում՝
«Kenneth Hagin Ministries»
Փ/Ա 50126,
Թալսա, Օկլահոմա, 74150-0126
1-888-28-FAITH
www.rhema.org

Կանադայում՝
«Kenneth Hagin Ministries of Canada»
Փ/Ա 335, բաժանմունք D
Էթոբիկո (Տորոնտո), Օնտարիո,
Կանադա M9A 4X3
1-866-70-RHEMA
www.rhemacanada.org
1-866-70-RHEMA
www.rhemacanada.org

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ.....5

1. ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ.....7

2. ԾՐԱԳՐԵՐ, ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ՁԳՏՈՒՄՆԵՐ 15

3. ԵԹԵ ՏԵՐԸ ՉԿԱՌՈՒՑԻ ՏՈՒՆԸ.....31

4. Ո՞ՐՆ Է ՁԵՐ ՆՊԱՏԱԿԸ.....53

5. ՔԱՅԼԵՔ ԼՈՒՅՍԻ ՄԵՋ.....91

6. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ՄԵՋ.....95

7. ՄԱՐՄՆՈՎ ՊԱ՞Ր, ԹԵ՞ ՀՈԳՈՎ ՊԱՐ.....103

8. ԱԿՆԱԾԱՆՔ. ԱՍՏԾՈ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՁՈՐՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԼԻՆ 121

9. ՇԱՐՈՒՆԱԿԱԲԱՐ ԼՑՎԵԼ ԵՎ ԽՈՍԵԼ.....137

10. ՀՈԳՈՒԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ.....151

11. ՃՇՄԱՐԻՏ ՆՈՐԿՏԱԿԱՐԱՆՅԱՆ ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆ.....165

12. ԳԻՆԸ, ՈՐ ՊԵՏՔ Է ՎՃԱՐԵՆՔ.....175

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

Հատուկ շնորհակալություն եմ հայտնում տկն Էնջլա Քիթոնին՝ իմ և Լինեթի ադմինիստրատիվ օգնականին՝ գրքի վերջնական խմբագրման համար: Ունենալով խիստ սեղմ վերջնաժամկետ՝ Էնջլան վերցրեց մեկ ձեռագիր, մեկ այլ ձեռագրի մաս, հարյուրավոր էջերից բաղկացած նշումներ, քարոզների լսաժապավենների սղագրություններ և այդ ամենից կազմեց այս գիրքը՝ «Ծրագրեր, նպատակներ և ձգտումներ»: Վստահ եմ՝ կհամաձայնեք ինձ հետ, որ այս գրքի ուղերձը, որն Էնջլան այսքան գեղեցիկ ներկայացրել է, կենսական է եկեղեցու համար այսօր:

Kenneth W. Hagin

1 ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ

Ոչ իբր արդեն բռնած լինեմ կամ թե արդեն կատարյալ եղած լինեմ [հասուն կամ ամբողջապես հասունացած], *բայց հետևում եմ, որ իցե թե հասնեմ նրան, ինչպես որ էլ հենց Քրիստոս Հիսուսից բռնված եմ:*
Եղբայրնե՛ր, ես իմ անձը չեմ համարում, որ հասած լինեմ, բայց մեկ բան կա, ետևի բաները մոռանալով՝ դեպի առաջի լինողներն եմ նկրտում:
Հետևում եմ դեպի նպատակը՝ Աստծո վերին կոչումի մրցանակին Քրիստոս Հիսուսում:

– Փիլիպեցիս 3.12–14

Եվ ես էլ, եղբայրնե՛ր, որ ձեզ մոտ եկա, ոչ թե խոսքի կամ իմաստության գերազանցությունով եկա՝ Աստծո վկայությունը ձեզ պատմելու:
Որովհետև միտքս չէի դրած մի ուրիշ բան գիտենալ ձեր մեջ, բայց միայն Հիսուս Քրիստոսին և այն էլ խաչվածին:
Եվ ես տկարությունով և վախով և շատ դողով եղա ձեզ մոտ:
Եվ իմ խոսքը և քարոզությունը ոչ թե մարդկային իմաստության պատիր խոսքերով եղավ, այլ Հոգու և զորության ապացուցությամբ.

Որ ձեր հավատքը մարդկանց իմաստությունով չլինի, այլ Աստծո զորությունով:

– Ա Կորնթացիս 2.1–5

1987 թվականի մեր ամենամյա ճամբարային հավաքույթից մի քանի օր առաջ Տերն ինձ այցելեց: Հիմա, երբ հիշում եմ այդ այցելությունը, տկարությամբ, ակնածանքով և դողով եմ պատմում ձեզ այդ մասին՝ Աստծո զարմանահրաշ զորության և ներկայության պատճառով: Պողոսն ասում է. «*Եվ ես տկարությունով և վախով և շատ դողով եղա ձեզ մոտ...*» (Ա Կորնթ. 2.3): Սա, իհարկե, չի նշանակում, որ նա այնպիսի վախ էր զգում, ինչպիսին է, օրինակ՝ վախը բոժոժավոր օձից կամ պտտահողմից: Պողոսը խոսում էր աստվածային երկյուղի՝ Աստծո հանդեպ ակնածանքի և խորին հարգանքի մասին: Այդ նույն ակնածանքով է, որ հիմա պատմում եմ ձեզ այն զարմանահրաշ այցելության մասին, որ Տերն արեց ինձ մեր ճամբարային հավաքույթից մեկ շաբաթ առաջ:

Նախ և առաջ թույլ տվեք պարզաբանել և ասել, որ ես մեծ մասամբ գիշերվա ժամերին եմ աղոթում: Կյանքիս մեծ մասը գիշերային մարդ եմ եղել: Հիմա տարիքս առել և փոքր-ինչ փոխվել եմ, սակայն միշտ կեսգիշերին ավելի աշխույժ եմ եղել, քան օրվա որևէ այլ ժամի: Այդ պատճառով ուսումնասիրություններս հիմնականում գիշերն էի անում: Հաճախ պատահում էր, որ ամբողջ գիշեր ընթերցանությամբ և ուսումնասիրությամբ էի զբաղվում:

Գիշերվա ժամերին աղոթելու սովորությունն իմ մեջ ձևավորվել է 1933 և 1934 թվականներին, երբ գամված էի անկողնուն: Քանի որ վեր կենալ չէի կարող, անկողնուց բացի աղոթելու այլ վայր չունեի: Հիշում եմ մասնավորապես մի գիշեր, երբ ոչ մի րոպե չքնեցի. ամբողջ գիշեր աղոթեցի: Եղել են դեպքեր, երբ գրեթե ողջ գիշեր աղոթել եմ: Շատ է պատահել, որ մեկ-երկու ժամ աղոթեմ մինչև քնելս:

Միշտ անհամբեր սպասում էի գիշերվան, երբ բոլորը անկողին կմտնեին, և ամեն բան կհանդարտվեր, որ կարողանայի աղոթել: Օրվա ընթացքում սենյակում ինձ հետ ինչ-որ մեկը միշտ լինում էր: Եվ այդպես՝ ամիսներ շարունակ. քանի որ կարծում էին, թե ցանկացած պահի կարող եմ հեռանալ, ուստի թույլ էին տալիս, որ ինչ-որ մեկը մնա ինձ հետ սենյակում: Այդպես սովորություն դարձրի աղոթել գիշերները, երբ կարող էի մենակ մնալ, և այդ սովորությունը տարիներ շարունակ ուղեկցեց ինձ: Շատ անգամներ Աստված ինձ հետ խոսել է գիշերվա ժամերին:

Մեր ամենամյա ճամբարային հավաքույթին նախորդող հինգշաբթի՝ հուլիսի 16-ի գիշերը, արթնացա և այլևս չկարողացա քնել, ուստի սկսեցի Հոգով աղոթել: Հոգով՝ այլ լեզուներով աղոթելու ընթացքում պարբերաբար անգլերեն կրկնում էի «ծրագրեր, նպատակներ» բառերը: Ծրագրեր և նպատակներ: Ասացի Տիրոջը՝ «Տե՛ր, սա ամենը չէ. գիտեմ, որ ամենը չէ», և շարունակեցի լեզուներով աղոթել: Ի վերջո իմ շուրթերից հնչեց հետևյալը՝ «ծրագրեր, նպատակներ և ձգտումներ»: Ծրագրեր, նպատակներ և ձգտումներ:

Հոգու մեջ հափշտակություն զգացի և սկսեցի տեսնել ու հասկանալ մարդկային ծրագրերն ու դրանց առնչությունը Աստծո ծրագրերին: Տեսնում էի, որ շատ անգամներ մարդիկ բարի ու նույնիսկ լիովին սուրբգրային ծրագրեր էին կազմում, բայց դրանք *Աստծո* ծրագրերը չէին:

Անսովոր վերապրում էր, որը տևեց մոտ երեք ժամ: Մասամբ հայտնություն էր, մասամբ՝ տեսիլք: Սկսվեց գիշերը ժամը երեքին, իսկ երբ վերջին անգամ ժամացույցին նայեցի, արդեն առավոտյան վեցին մոտ էր:

Հոգու հափշտակությամբ հայտնվեցի այնտեղ, որտեղ Հի-

սուսն էր կանգնած. այնպիսի տպավորություն էր, կարծես ես և Հիսուսը Թալսայի հավաքույթի կենտրոնի առաստաղից մի փոքր վեր կանգնած նայում էինք ներքև՝ մեր ճամբարային հավաքույթի ծառայություններին, որոնք պլանավորված էր անցկացնել գալիք երկուշաբթի օրվանից: Տեսա, թե ինչպես մեր առջև բացվեց երկուշաբթի երեկոյան անցկացվող ծառայությունը, տեսա նաև շատ բաներ, որոնք տեղի էին ունենալու շաբաթվա ընթացքում մյուս ծառայությունների ժամանակ: Մինչ ես նայում էի, Հիսուսն ինձ պատմում ու բացատրում էր տեղի ունեցող բաները:

Երբ այդտեղ, Հիսուսի հետ կանգնած, լսում էի, թե ինչպես էր Նա պատմում ու բացատրում ծառայությունների ընթացքում տեղի ունեցող բաները, տեսնում էի, որ այդ ճամբարային հավաքույթը լինելու էր ամենափառահեղ և նշանակալից հավաքույթներից մեկը, որ երբևէ անցկացրել էինք: Տեսնում էի, որ դրա արդյունքները շատ հեռահար էին լինելու:

Երբ Հիսուսի հետ կանգնած նայում էի, թե ինչպես էր այդ ամենը բացվում իմ առջև, հարցրի Նրան. «Տե՛ր, ինչո՞ւ ավելի վաղ չհայտնվեցիր ինձ, որպեսզի կարողանայինք գովազդել մարդկանց, որ այս ճամաբարային հավաքույթն արտասովոր է լինելու: Եթե իմանային դրա մասին, ավելի շատ մարդիկ կգային»:

Հիսուսը պատասխանեց. «Եթե այդպես լիներ, ապա կգային հետաքրքրասերներ և այնպիսիք, որոնք սենսացիա են ուզում տեսնել: Իսկ ես ուզում էի, որ այստեղ լինեին այն մարդիկ, որոնց Ես եմ ուղղորդել»:

Ցավալի է, բայց Քրիստոսի Մարմնում կան այնպիսիք, որոնք պարզապես սենսացիա են փնտրում. միշտ գնում են ցանկացած բանի հետևից, ինչը նոր է: Այդ մարդիկ կգային՝ սխալ *նպատակ* հետապնդելով: Նրանք կասեին. «Եկե՛ք գնանք եղբայր Հեգինին լսելու: Աստված նրան էլի այցելել է.

գնանք լսենք դրա մասին»: Այդպիսիք սովորաբար վերցնում և աղավաղում են խոսքերդ:

Կան մարդիկ, որոնք վերցնում են ասածիդ մի մասը, աղավաղում այն, ավելացնում, պակասեցնում և շփոթմունք ստեղծում Քրիստոսի Մարմնում: Հավանաբար կլինեն այնպիսիք, որոնք կկարդան այս գիրքը, խոսքերս կկտրեն համատեքստից և սխալ կներկայացնեն դրանք: Սակայն որքան էլ մոլորված մարդիկ հակված լինեն սխալ ներկայացնելու որևէ բան, դա *չպետք է* հետ պահի մեզ աստվածաշնչյան և ճշմարիտ ընթացքին հետևելուց: Դա չպետք է հետ պահի մեզ ընդունելուց այն, ինչը Սուրբ Հոգին ցանկանում է այս օրերում սովորեցնել Քրիստոսի Մարմնին: Ես հավատում եմ, որ նրանք, որոնք լսելու ականջ ունեն, կլսեն, թե ինչ է Հոգին ասում եկեղեցուն այս օրերում, կհամագործակցեն Նրա հետ և կօգնեն մտնելու Աստծո շարժի մեջ, որին ամբողջ սրտով փափագում ենք:

Երկար տարիների իմ ծառայության մեջ միայն երկու կամ երեք անգամ եմ ունեցել այնպիսի վերապրում, ինչպիսին ունեցա 1987 թվականի ճամբարային հավաքույթից առաջ: Առաջին անգամ նման վերապրում ունեցել եմ 1953 թվականին:

Մի ուրբաթ երեկո Հոգով աղոթում էի, երբ տեսա կիրակնօրյա երեկոյան հավաքույթս: Երբ եկավ այդ հավաքույթի ժամանակը, արեցի այն, ինչ տեսել էի, որ անում եմ: Զարմանահրաշ, սքանչելի բաներ տեղի ունեցան այդ ծառայության ժամանակ:

Հաջորդ նման փորձառությունն ունեցել եմ 1954-ին, երբ քարոզում էի Կալիֆոռնիայում՝ Ամբողջական Ավետարանի մի հարանվանության հավաքույթին: Մի գիշեր արթնացա հրատապ աղոթքի անհրաժեշտության զգացողությամբ: Մինչև առավոտյան ժամը չորսը տեղումս պառկած հանգիստ աղոթեցի Հոգով՝ առանց որևէ մեկին անհանգստություն

պատճառելու: Եվ հանկարծ տեսա այդ երեկո անցկացվելիք իմ ծառայությունը: Այլ բաների թվում տեսա մի կնոջ, որին բերել էին պատգարակով. բոլորի աչքերի առջև նա վեր կացավ պատգարակից և հեռացավ՝ լիովին բժշկված: Երբ եկավ այդ ծառայության ժամանակը, արեցի այն, ինչ տեսել էի այդ գիշեր, ամեն բան կատարվեց հենց այնպես, ինչպես տեսել էի. պատգարակի վրա դրված մի կնոջ բերեցին, նա ոտքի կանգնեց և բժշկված հեռացավ:

1987 թվականի Իր այցելության ժամանակ Տերը պատմեց *Իր ծրագրերը*՝ այն, ինչ ցանկանում է անել եկեղեցում այս օրերում, և ասաց, թե ինչու չի կարողացել անել դրանք: Եթե Քրիստոսի Մարմինը համագործակցի Աստծո հետ, գնա Նրա *ծրագրի* և Նրա *նպատակների* համաձայն և *ձգտի* այդ ծրագրին, ապա Աստված կկարողանա իրականացնել այն, ինչ *Ինքը* ցանկանում է անել այս օրերում:

Վերջին երկու-երեք տարիների ընթացքում Քրիստոսի Մարմինը նոր սկզբի ծանծաղ ջրերում է եղել: Հիմա էլ շարժվում ենք դեպի մեկ այլ նոր սկիզբ: Մենք նոր ենք հասնում այն վայրը, որտեղ Տերը կարող է սկսել անել այն բաները, որ ցանկացել է անել այս ժամում և այս օրերում:

Այն բաները, որոնք Հիսուսը բացատրեց ինձ այդ այցելության ժամանակ, նախատեսված էին օգնելու Քրիստոսի Մարմնին՝ նախապատրաստվելու Աստծո Հոգու հաջորդ մեծ շարժին երկրի վրա: Այն հոգևոր ճշմարտությունները, որոնց մասին ասաց Հիսուսն Իր այցելության ժամանակ, այսպես ասած, ցատկահարթակ են, որի օգնությամբ Քրիստոսի Մարմինը մուտք կգործի գերբնականի մեջ այնպես, ինչպես նախկինում երբևէ չի արել, և դեպի այնտեղ, որտեղ երբևէ չի եղել: Ինչո՞ւ, որովհետև հետևելու ենք Նրա *ծրագրերին* և Նրա *նպատակներին* ու *ձգտելու* ենք դրանց:

Աստծո օրհնությունների այն ալիքը, որ գալիս է երկրի վրա, Քրիստոսի Մարմնում սովորական կդարձնի այն դրսևորումները, որոնք նախկինում հազվադեպ են եղել: Եկեղեցու գլուխը՝ Հիսուս Քրիստոսն է ուղղորդում Իր մարմնի գործողություններն այսօր երկրի վրա, և Նա պետք է ստանա ամբողջ գովաբանությունը, պատիվը և փառքը:

Օ՜, ընկերնե՛ր, Աստծո Հոգու մեջ շարժ է տեղի ունենում: Սակայն մենք չենք կարող պարզապես ցատկել դրա մեջ: Աստված է ցանկանում հասցնել մեզ այդտեղ. այդ իսկ պատճառով մենք պետք է հետևենք Նրա *ծրագրերին*, Նրա *նպատակներին* և *ձգտենք* դրանց: Այս այցելության ժամանակ Հիսուսն ասաց ինձ. «Այս շարժը կկորչի, եթե մարդիկ չսովորեն շարժվել Իմ Հոգուն *համընթաց*»:

Կլինեն մարդիկ, որոնք կընթերցեն սա և կմնան նույնքան անկենդան, որքան մինչ այդ էին: Ուրիշները կասեն՝ «Արդյոք սքանչելի՞ չէ», սակայն ոչինչ չեն անի իրենց կյանքում Աստծո *ծրագրերին*, *նպատակներին* և *ձգտումներին* հետևելու համար: Սակայն կլինեն նաև մարդիկ, որոնք կգիտակցեն և կվերցնեն այն, ինչ Տերը ցանկանում է տալ Քրիստոսի Մարմնին այս օրերում. նրանք *կստանան Աստծո ծրագիրն իրենց կյանքերի համար* և կհետևեն դրան: Այն մարդիկ, որոնք այդպես կվարվեն, պատրաստ կլինեն այն շարժին, որն Աստված այս օրերում ցանկանում է բերել երկրի վրա:

Քրիստոսի Մարմինը երբևէ չի տեսել այնպիսի բաներ, ինչպիսիք կտեսնենք, երբ հասնենք այն կետին, որտեղ կիմանանք Աստծո *ծրագիրն* ու *նպատակը* ոչ միայն մեր կյանքերի, այլև եկեղեցու համար և *կձգտենք* այդ ծրագրին:

2 ԾՐԱԳՐԵՐ, ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ՁԳՏՈՒՄՆԵՐ

Ինչպես արդեն ասացի, Տիրոջ այս այցելության սկզբում աղոթելիս շարունակաբար ասում էի հետևյալ բառերը՝ «ծրագրեր, նպատակներ և ձգտումներ»:

Երբ այդ վերջին անգլերեն բառը դուրս եկավ շուրթերիցս, ես հափշտակվեցի Հիսուսի հետ և սկսեցի տեսնել, թե ինչպես են մարդիկ մշակում իրենց ծրագրերը: Նայում էի մարդկային ծրագրերին, և գլխումս հետևյալ մտքերն էին պտտվում. սրանք լավ, գուցե լիովին սուրբգրային ծրագրեր են, սակայն Աստծո ծրագրերը չեն նրանց համար:

Ի հակադրություն մարդկային ծրագրերի՝ տեսնում էի նաև Աստծո ծրագիրը: Տերն ինձ հետևյալն ասաց. «Ես Իմ ամբողջ ժողովրդին օրհնում եմ այնքան, որքան կարող եմ: Սակայն այսօր չկա Աստծո շարժը, Հոգու խոր հոսանքը և Սուրբ Հոգու դրսևորումների ամբողջությունն այն պատճառով, որ մարդիկ ժամանակ չեն հատկացնում Ինձնից լսելուն: Ժամանակ չեն հատկացնում Խոսքում գրված Իմ ծրագրին հետևելուն: Որքան ավելի ճշգրիտ հետևեն Իմ ծրագրին, այնքան ավելի շատ կդրսևորվի և կերևա Իմ զորությունը»:

Շատ հաճախ մարդկանց և ծառայությունների ձախող-

ման պատճառն այն է, որ նրանք սխալ ծրագրի, նպատակի և դրդապատճառների են հետևում:

Ինչ էլ անելիս լինեք Աստծո համար, ինքներդ ձեզ հարց ուղղեք. «*Արդյո՞ք սա Աստծո ծրագիրն է*»:

Մի քանի տարի առաջ մասնակցում էի մի հավաքույթի, որից հետո մի քանի քարոզիչ կանգնած զրուցում էին: Նրանցից մեկը, որ մեծ եկեղեցու հովիվ էր, ասաց. «Մտածում եմ իմ եկեղեցու հովվությունը թողնելու և արվարձանում եկեղեցի հիմնելու մասին»: Հետո ավելացրեց. «Այդ եկեղեցին իմ շուրջը կկառուցեմ»: Ես հետևում էի, թե ինչպես էր նա կառուցում այդ եկեղեցին, և տեսա, որ այն այդպես էլ հաջողության չհասավ: Այն *չէր կարող* հաջողության հասնել, որովհետև կառուցված չէր ըստ Աստծո ծրագրի: Այդ հովվի *ծրագրերն* ու *նպատակները* սխալ էին, նա սխալ բանի էր *ձգտում*: Եկեղեցին պետք է կառուցվի *Հիսուսի* շուրջը:

Երբ մարդկանց ծրագրերն ու նպատակները սխալ են, նրանք կարող են նույնիսկ բաժանում բերել եկեղեցում: Նման բաներ են անում, իսկ հետո ասում, թե Տերն էր իրենց ասել անել դա: Ես չեմ հավատում, որ Աստված երբևէ որևէ մեկին կասի գողանալ մեկ ուրիշի եկեղեցու անդամներին, քանի որ գիտեմ, որ Աստված գող չէ: Սակայն երբ եկեղեցին չի հետևում Աստծո ծրագրին, հնարավոր է՝ անդամներն իրենց կամքով հեռանան, քանի որ հոգևոր կերակուր չեն ստանում:

Սա ինձ հիշեցրեց մի պատմություն, որում ներգրավված էր մեր «Ռեմա» ուսումնական կենտրոնի շրջանավարտներից մեկը, որը վերադարձել էր հայրենիք՝ Հարավային Աֆրիկա, և եկեղեցի հիմնել: Եկեղեցին սկսվել էր տասներեք մարդուց, որոնք հավաքվում էին նրա հոր տան հյուրասենյակում՝ Աստվածաշնչի ուսումնասիրության համար: Ժամանակի ընթացքում մարդկանց թիվն ավելացել էր, և քանի որ այլևս տանը

չէին տեղավորվում, վարձակալել էին թատրոնի կամ, ինչպես իրենք են ասում, «կինոթատրոնի» սրահ: Որոշ ժամանակ անց նույնիսկ այդտեղ այլևս չէին տեղավորվում: Ի վերջո մի ավելի մեծ շենք էին վարձակալել և հիմնել Հարավային Աֆրիկայի «Ռեմա» աստվածաշնչյան ուսումնական կենտրոնը: Կենտրոնին մոտ եկեղեցի կար, որի հովիվը Ամբողջական Ավետարանի տեղի հարանվանության ազգային առաջնորդն էր: Թեև նրա հարանվանությունը 400 անդամ ուներ, նա ստիպված էր նաև ամբողջական դրույքով աշխատել:

Այդ հովիվը շարունակաբար զգուշացնում էր իր եկեղեցու անդամներին չգնալ «Ռեմայի» շրջանավարտի եկեղեցին: Նա ասում էր. «Չգնա՛ք այդ եկեղեցի, քանի որ նրանք հավատքի և բարգավաճման մասին սխալ ուսմունք են սովորեցնում»:

Մի քանի տարի անց մենք կրկին այցելեցինք «Ռեմայի» շրջանավարտի եկեղեցին և տեսանք, որ անդամների թիվն այնքան էր աճել, որ մասնաշենք պետք է ավելացնեին: «Ռեմայի» այդ հովիվն իր հարանվանությունում մոտ 11000 անդամ ուներ, որոնցից 2600-ը սևամորթ էին: Սպիտակամորթների քանի՞ եկեղեցի գիտեք Ամերիկայում, որ ունի 2500 սևամորթ անդամ: Տեսնելով ռասայական բազմազանություն ունեցող այդ հարանվանության հաջողությունը՝ երկրի կարկառուն առաջնորդներից մեկը «Ռեմայի» հովվին հրավիրել էր իր գրասենյակ ու ասել. «Կարծես թե Դուք միակն եք, որին հաջողվել է լուծել ռասայական խնդիրն այս երկրում: Օգնե՛ք մեզ. ասե՛ք, թե ինչպես եք դա արել»:

«Դե,- պատասխանել է «Ռեմայի» հովիվը,- նախ և առաջ բոլորը պետք է վերստին ծնվեն, քանի որ բոլորը, անկախ մաշկի գույնից, եսասեր ու եսակենտրոն են, եթե փրկված չեն: Սակայն եթե մարդիկ փրկվեն և լցվեն Աստծո սիրով, ապա կկարողանաք փոփոխություններ բերել այս երկրում»:

Սա է Աստծո ծրագիրն ու նպատակը ցանկացած ազգության համար, որ մարդիկ փրկվեն, լցվեն Սուրբ Հոգով և քայլեն Աստծո սիրո մեջ: Անկախ նրանից, թե *ով* եք դուք և *ինչով* եք զբաղվում, եթե ձեր ծրագրերն ու նպատակները համընթաց են Աստծո հետ, ապա կհաջողեք:

Քանի որ «Ռեմայի» այս հովվի ծրագրերն ու նպատակները համընթաց էին Աստծո հետ, Աստված օգտագործեց նրան Հարավային Աֆրիկայում ավելի քան 450 եկեղեցիների ցանցի ձևավորման համար: Նրանք մեծ արթնություն ունեն, և Աստծո Հոգին զարմանահրաշ կերպով շարժվում է այնտեղ:

Այն մարդը, որը պատմեց ինձ սրա մասին, ասաց. «Մի անգամ ես և ընտանիքս այցելեցինք «Ռեմա»՝ պարզապես տեսնելու, թե ինչ է այնտեղ կատարվում, և այնքան հավանեցինք, որ մնացինք այնտեղ»: Ժամանակի ընթացքում այն հովվի հարանվանության անդամներից 360-ը ևս այցելեցին «Ռեմա» և այնքան հավանեցին, որ մնացին այնտեղ: Ի վերջո այդ հովվի եկեղեցում քառասուն մարդ մնաց:

Երբ գնացինք Հարավային Աֆրիկա՝ «Ռեմայի» շրջանավարտի նոր շինությունների բացմանը, Ամբողջական Ավետարանի եկեղեցու հովիվը համազգային համաժողով էր անցկացնում: Նրանք մեզ հաղորդագրություն ուղարկեցին, որում ասվում էր. «Սկզբում մենք կարծում էինք, թե այն, ինչ դուք քարոզում եք, սխալ է, բայց հետո եկանք այն համոզման, որ դա այդպես չէ: Թող Աստված էլ ավելի զորացնի ձեզ: Պարզապես ցանկանում ենք, որ իմանաք՝ ձեզ հետ ենք և ձեր կողքին ենք»:

Այդ հարանվանության հովիվն ի վերջո հասկացել էր, որ եկեղեցին պետք է օժանդակի իր հովվին, իսկ հովիվը չպետք է ամբողջական դրույքով աշխատի՝ իր ժամանակն ու էներգիան իր հոտին նվիրելու փոխարեն: Նախկինում նա

չէր սովորեցրել իր հարանվանությանը տալու սուրբգրային սկզբունքների մասին, իսկ երբ սկսել էր սովորեցնել, Աստված հաջողություն էր տվել նրանց:

Հիշում եմ նաև մեկ այլ դեպք, որ տեղի է ունեցել տարիներ առաջ, երբ մեկ այլ նահանգ էի գնացել: Մի հովիվ հիմնել էր բավականին մեծ եկեղեցի և օգնականի վարձել, որ աշխատեր իր հետ: Եկեղեցին աճել էր և արդեն 500 անդամ ուներ, երբ այդ օգնականը որոշեց հայտարարել, թե իբր Տերն իրեն ասել է մեկ այլ եկեղեցի հիմնել, ու ինքը պատրաստվում է վերցնելու այդ եկեղեցու անդամներից 250-ին և երկու փողոց այն կողմ եկեղեցի հիմնել»: Խորհե՛ք սրա շուրջ: Նա ցանկանում էր այդ եկեղեցու դռան շեմին մեկ այլ եկեղեցի հիմնել:

Այդ օգնական հովվի *նպատակները* լիովին սխալ էին: Նրա եկեղեցին չէր հաջողի: Ինչ եք կարծում, Աստված կարո՞ղ էր օրհնել այդ նախաձեռնությունը: Ո՛չ: Աստված չէր կարող օրհնել այն, քանի որ այդ օգնական հովիվը սխալ ծրագրի էր հետևում: Եկե՛ք մնանք Աստծո ծրագրի մեջ: Այն միշտ հաջողվում է:

Մի անգամ էլ արթնության երեքշաբաթյա համաժողով էի անցկացնում մի հովվի համար, որի եկեղեցում ամեն տեսակի ծրագրեր կային: Այդ հովիվն ինձ վրա ճնշում էր գործադրում՝ փորձելով պարզել, թե որքան գումար կպահանջվի, որ գնամ և իրենց մոտ հավաքույթ անցկացնեմ: Բայց ես տարիների իմ ծառայության ընթացքում երբեք ոչ մեկից չեմ խնդրել ինձ որևէ բան տալ. երբեք որևէ հովվի չեմ ասել, որ պետք է որոշակի չափի գումար տա ինձ, որ գնամ և քարոզեմ իր եկեղեցում: Ես այդ մասին Տիրոջ հետ էի խոսում, ու Նա միշտ լրացնում էր իմ կարիքները:

Եվ թեև նման բան չէի խնդրել, այդ հովիվը երաշխավորեց, որ որոշակի չափով գումար կտան ինձ, եթե գնամ և արթ-

նության հավաքույթ անցկացնեմ իրենց եկեղեցում: Երբ այնտեղ էի, նա բոլոր ծառայություններին նվիրատվություններ էր հավաքում՝ ամեն տեսակի նախագծերի համար, որ կարող եք պատկերացնել, իսկ հետո ասաց. «Եթե գումար ավելանա, քեզ կտանք»: Մի փոքր գումար էր ավելացել, որը նույնիսկ մոտ չէր այն թվին, որ նա խոստացել էր, և նա դա ինձ տվեց: Ես դրա մասին ոչ մեկին ոչ մի խոսք չասացի: Պարզապես սպասում էի, որ Տերը լրացներ իմ կարիքները:

Ըստ այդ հովվի կազմած նախնական օրակարգի՝ ես պետք է անցկացնեի արթնության հավաքույթի կիրակնօրյա առավոտյան ծառայությունները երեք շաբաթում: Բայց այնտեղ հասնելուցս հետո պարզ դարձավ, որ ըստ հովվի որոշման՝ պետք է նաև հավելյալ ծառայություններ անցկացնեի ամեն կիրակի կեսօրին: Նա ինձ հետևյալն ասաց. «Եթե այնպես անենք, որ մյուս բոլոր եկեղեցիներից մարդիկ գան այդ հավաքույթներին, ապա կկարողանանք լավ նվիրատվություն հավաքել»: Այդ ծրագրերն ու գաղափարներն իրենն էին, բացի այդ՝ նրա *նպատակները* լիովին սխալ էին:

Երբեք փողն առաջին տեղում մի՛ դրեք: Առաջին անգամ, երբ Տերը հայտնվեց ինձ, Նա ասաց. «Զգո՛ւյշ եղիր փողի հարցում: Շատերը, որոնց վրա Իմ Հոգին եմ դրել և ծառայության կանչել, փողամետ են դարձել և կորցրել օծությունը»: Մենք չպետք է փողամետ դառնանք և կորցնենք Աստծո օծությունը մեր կյանքերում:

Կիրակի կեսօրին հավաքույթներ անցկացնելու այդ հովվի նպատակը մեծ նվիրատվություն հավաքելն ու ավելի շատ *փող* ստանալն էր: Երբ արդեն մոտենում էինք արթնության հավաքույթների երրորդ շաբաթվան, կիրակի կեսօրին նա հայտարարեց՝ «Դեռ չգիտենք՝ արդյոք շարունակելու ենք հաջորդ շաբաթ, թե ոչ: Եկե՛ք այսօր երեկոյան, և կտեղեկացնենք

ձեզ», իսկ փառաբանության ընթացքում ականջիս շշնջաց՝ «Այդպես ասացի, որ այսօր երեկոյան մարդիկ ծառայության գան: Երբ գան, կասենք, որ շարունակելու ենք»:

Այդ պահին մի ձայն լսեցի. կարծես իմ հետևում կանգնած ինչ-որ մեկը խոսեր ինձ հետ: Նույնիսկ պտտվեցի, որ տեսնեմ, թե արդյոք հետևումս ինչ-որ մեկը կար: Այդ ձայնն ասաց ինձ. «Երբ բարձրանաս բեմ՝ քարոզելու, ասա՛ մարդկանց, որ այսօր երեկոյան եզրափակում եք հավաքույթը, և այդպես էլ կանես»:

Ասացի. «Տե՛ր, այդպես ես լրացուցիչ նվիրատվություն բաց կթողնեմ: Կգնամ տուն և ինչ-որ ժամանակ անելու ոչինչ չեմ ունենա: Շաբաթվա ընթացքում այնքան գումար է պահանջվում՝ ծախսերս հոգալու համար, իսկ ես եկամտի այլ աղբյուր չունեմ: Բացի այդ՝ սուրբծննդյան ոչ մի նվեր դեռ չենք գնել, ընտանիքս պետք է պահեմ: Արթնության այլ համաժողով չեմ կարողանա սկսել ավելի շուտ, քան Սուրբ Ծննդից երկու շաբաթ առաջ»:

Տերն ասաց ինձ. «Մի՛ անհանգստացիր. Ես հոգ կտանեմ քո մասին»: Այնպես որ ես արեցի հավաքույթի փակումը և ուրախությամբ լցված տուն վերադարձա: Հաջորդ շաբաթ ինձ նամակներ եկան, որոնցում նվիրատվություններ կային. բոլոր այս տարիների ընթացքում դա միակ ու եզակի դեպքն էր (մինչ այդ առավելագույն գումարը, որ փոստով ստացել էի Սուրբ Ծննդին, երեսունվեց դոլար էր): Այդ շաբաթ ավելի քան երեք հարյուր դոլար ստացա: Հիմա դա մեծ գումար չի թվում, բայց այն ժամանակ մեծ գումար էր: Կալիֆոռնիայից մի եղբայր գրել էր. «Եղբա՛յր Հեգին, Տերն իմ սրտին դրել է Ձեզ հարյուր հիսուն դոլար ուղարկել: Դա իմ տասանորդի գումարը չէ, ես տասանորդս տալիս եմ եկեղեցուն. տասանորդի հասցեատերը եկեղեցին է: Այս գումարը դրա մեջ չի մտնում, և ես ցանկանում եմ այն Ձեզ ուղարկել»: Փա՛ռք Աստծուն. Աստված կողքիս էր:

Սակայն իմ սիրտը ցավեց այդ հովվի համար: Նա խոցեր ուներ և խնդրել էր, որ աղոթեի իր բժշկության համար: Ես հարցրի Տիրոջը. «Տե՛ր, ի՞նչ կասես նրա մասին: Ի՞նչ է լինելու նրա հետ»: Եվ Տերը խոսեց ինձ հետ այնքան պարզ, կարծես հետևումս նստած լիներ. «Նա երբեք Ինձնից ոչ մի ծրագիր չի հարցրել, Ես օրհնել եմ նրան, որքան կարողացել եմ, բայց չեմ կարող լրացնել նրա ֆինանսական կարիքները, քանի որ նա իր ծրագրերը Իմ ծրագրերից առաջ է դասել: Ես չեմ ասել, որ նա անի շատ բաներ, որոնք հիմա անում է: Նա պարզապես իր ծրագրերն է ավելացրել նրան, ինչ Ես ասել եմ, որ անի: Նա իր ծրագրերն է խցկում այստեղ ու այնտեղ. այդ պատճառով էլ չեմ կարողանում օրհնել նրան: Կօրհնեի, եթե կարողանա-յի, սակայն չեմ կարող: Ես չեմ կարող հաստատել մարդկանց ծրագրերը, եթե դրանք Իմ ծրագրերը չեն: Եվ, ինչպես տես-նում ես, նրա նպատակները սխալ են: Իսկ եթե *նպատակները* սխալ են, ապա *ձգտումները* նույնպես սխալ են»:

Ծրագրեր, նպատակներ և ձգտումներ: Աստծո ծրագրից շեղվելը հեշտ է: Կարծում եմ՝ հաճախ հենց սա է պատճառը, թե ինչու են ծառայությունները լուրջ ֆինանսական խնդիրնե-րի մեջ հայտնվում. նրանք Աստծո ծրագրի մեջ բաղադրիչներ են ավելացնում: Գուցե դրանք լավ և նույնիսկ օրինավոր բա-ներ են, բայց հավելումներ են Աստծո ցուցումներին:

Աստված շատ ավելի լավ գիտի ապագան, քան մենք՝ անց-յալը: Աստծուն սպասելը և Նրա ծրագիրը ստանալը բազմա-կողմանիորեն շահեկան է: Հաճախ մենք *մեր ծրագրերն* ենք կազմում, իսկ հետո խնդրում, որ Աստված օրհնի դրանք: Շատ ավելի լավ է ստանալ Նրա ծրագիրը, քանի որ Նրա ծրագիրն արդեն օրհնված է: Ստացի՛ր Աստծո ծրագիրը քո կյանքի և քո ծառայության համար: Եթե հովիվ ես, ապա ստացի՛ր Աստծո ծրագիրը քո եկեղեցու համար:

ԲՈՐԲՈՔԻՐ ԻՆՔԴ ՔԵԶ՝ ԳՏՆԵԼՈՒ ԱՍՏԾՈ ԾՐԱԳԻՐԸ

Երբ Աստված սկսեց խոսել ինձ հետ այն ծառայության մասին, որը պատրաստել էր ինձ համար, ես չհասկացա դա:

Այդ ժամանակ հովիվ էի մի եկեղեցում, բայց զգում էի, որ ինչ-որ բան այն չէ: Չէի հասկանում, թե կոնկրետ ինչը ճիշտ չէր, սակայն գիտեի, որ ինչ-որ բան այն չէր: Ուստի ասացի Տիրոջը. «Ինչ-որ բան այն չէ. այնպիսի տպավորություն է, որ գուլպաներս հագիս ոտքերս եմ լվանում»: Սկսեցի ավելի շատ փնտրել Աստծուն և աղոթքի մեջ ինքս ինձ բորբոքել: Աստված չէր, որ բորբոքում էր ինձ, այլ ես ինքս: Միշտ էլ բավականաչափ աղոթում էի, սակայն այդ շրջանում լրացուցիչ ժամանակ էի անցկացնում՝ ծոմապահությամբ Աստծուն փնտրելով:

Տիրոջն ասացի. «Տե՛ր, ինձ հետ ինչ-որ բան այն չէ: Գուցե ես տարօրինակ եմ. բավարարված լինելու համար ամեն բան ունեմ: Սա լավագույն եկեղեցին է, որ երբևէ հովվել եմ: Հիմա ավելի շատ գումար եմ ստանում, քան երբևէ ստացել եմ, և մենք ապրում ենք ամենալավ հովվական կացարանում, որ երբևէ ունեցել ենք: Ես, կինս և երեխաներս երջանիկ ենք. ամեն բան հիասքանչ է: Կիրակնօրյա դպրոցում գործերն ավելի լավ են, քան եկեղեցու պատմության մեջ երբևէ եղել են: Ես պետք է բավարարված լինեմ: Ի՞նչն ինձ հետ այն չէ»:

Տերը ներսումս խոսեց ինձ հետ և ասաց. «Այն չէ, որովհետև Ես ի սկզբանե քեզ չեմ կանչել հովվություն անելու: Դա քո կոչումը չէ»:

Փա՛ռք Աստծուն, որ Իր թույլատրող կամքով Նա ինձ թույլ է տվել տասներկու տարի հովվություն անել, և հովիվ լինելով՝ ես սովորել եմ բաներ, որոնք այլ կերպ չէի սովորի (երբեմն մտածում եմ, որ ավետարանիչները, ուսուցիչները, դաշտային պայմաններում ծառայողները պետք է նվազագույնը երկու տա-

րի հովիվ լինեն: Այդպես նրանք որոշ բաներ կսովորեն, թե ինչպես է պետք հյուրընկալել խոսնակի): Այդ աղոթքի ժամանակ ես իմացա, որ հովվությունն Աստծո ծրագիրը չէր իմ կյանքի համար:

Երբ Աստված ասաց, որ չէր կանչել ինձ հովիվ լինելու, ես պետք է հարցնեի, թե որն է իմ կոչումը: Կան բաներ, որոնք Աստված մեզ չի ասի, մինչև չհարցնենք, որովհետև Նա կատարյալ ջենթլմեն է: Ո՛չ, Նա չի միջամտի ու չի խանգարի մեզ: Սուրբ Հոգին ևս նման կերպ չի վարվի: Երբ Տերն ասաց, որ չէր կանչել ինձ հովվության մեջ, ես չհարցրի, թե ինչի մեջ էր կանչել, պարզապես ենթադրեցի, որ եթե իմ կոչումը հովվությունը չէ, ուրեմն ավետարանչությունն է: Պարզապես ընկա այն ընդհանուր հոսանքի մեջ, որն ընդունված էր մի հարանվանությունում, որի հետ շփվում էի: Նրանք ընդունում էին միայն հովվի և ավետարանչի ծառայության պարգևները:

Այնպես որ սկսեցի պատրաստվել դառնալու ավետարանիչ և բերանքսիվայր ընկա: Ուղիղ մեկ տարի «ավետարանելուց» հետո մաշել էի մեքենաս և ոտքով էի այստեղից այնտեղ փոխադրվում: Մենք ապրում էինք երեքսենյականոց բնակարանում. մեր որդին ձմռանը քնում էր խոհանոցում՝ շարժական անկողնում, իսկ ամռանը՝ ապակեպատ ետնամուտքում: Երեխաներս չունեին նորմալ հագուստ և կերակուր:

Նորից սկսեցի փնտրել Տիրոջը: Ինչ-որ բան այն չէր: Դեռևս այն զգացողությունն ունեի, որ գուլպաներս հագիս ոտքերս էի լվանում:

Սա երկար պատմություն է, սակայն իմաստն այն է, որ Աստված փորձում էր այնպես անել, որ իմ ծառայության մեջ ես հետևեի Իր ծրագրին: Աստված փորձում էր հասցնել ինձ ուսուցչի կոչմանը:

ԵՓԵՍԱՑԻՍ 4.11, 12

11 Եվ նա մի քանիսին տվեց առաքյալներ լինելու, մի քա-

նիսին՝ մարգարեներ, մի քանիսին՝ ավետարանիչներ, մի քանիսին՝ հովիվներ և վարդապետներ,
12 սուրբերի կատարելության համար, պաշտոնի գործի համար, Քրիստոսի մարմնի շինության համար:

Ես խոսում եմ *ծրագրերից՝ Աստծո ծրագրերից*: հաճախ մենք ինչ-որ բան ենք անում, քանի որ մտածում ենք, որ այդպես է պետք անել: Փոխարենը ժամանակ հատկացրեք՝ պարզելու, թե ինչ է Աստված ուզում անել:

Երկինքը ծրագիր ունի երկրի վրա գտնվող եկեղեցու համար: Աստված ջանում էր հասցնել ինձ այն կետին, որտեղ ես համընթաց կլինեի Իր ծրագրին և նպատակներին ոչ միայն իմ կյանքի, այլև Քրիստոսի Մարմնի համար:

Աստված ինձ ցույց էր տվել ուսուցչի ծառայությունը, և ես զգացել էի, թե ինչպես էր Երկնքից թիկնոցի նման ինձ վրա իջել ծառայության այդ պարգևը: Սակայն աղոթելիս ես ավելի տեղ էի տալիս այդ օրերի կրոնավոր մտածելակերպին. 1949–1950 թվականներն էին:

«Տեր, նրանք ցանկանում են, որ ես քարոզեմ: Սովորեցնելով ես չեմ կարողանա հավաքույթներ անցկացնել: Նրանք ավետարանիչ են ուզում. արթնության ծառայող են ուզում: Ես չեմ կարողանա առաջ շարժվել որպես ուսուցիչ»:

Սակայն ինձ չհաջողվեց Աստծուն համոզել: Նա ծրագիր ուներ: Եվ միայն Նրա ծրագրի լույսի ներքո քայլելով ես կկարողանայի ունենալ Նրա օրհնության լիությունը:

Աստծուն փնտրելու այդ երկարաձգված ժամանակահատվածում հավաքույթների շարք սկսեցի Տեխաս նահանգի Հենդերսոն քաղաքում. 1949 թվականի վերջին կիրակին էր: Հավաքույթները տևելու էին մինչև 1950-ի հունվարը:

Եվ ի վերջո՝ այդ հավաքույթի ժամանակ, ասացի. «Լավ, Տեր, կսովորեցնեմ: Ես քեզ կտամ ուրբաթ երեկոն: Այդ ժամա-

նակ հավաքվածների թիվն ամենաշատն է լինելու: Ես կսովորեցնեմ և կապացուցեմ Քեզ, որ դա գործող տարբերակ չէ»:

Մեկ շաբաթ էր, ինչ սկսել էինք, սակայն ոչ ոք վերստին ծնունդ չէր ստացել և չէր լցվել Սուրբ Հոգով: Աղոթքի համար ձեռք էր բարձրացրել միայն մի փոքրիկ աղջիկ:

Այդպիսով, ուրբաթ երեկոյան ես քառասունհինգ րոպե *սովորեցրի* հավատքի մասին, և ինքս ինձ ասացի. *«Հիմա խորանի մոտ կկանչեմ մարդկանց, թեև գիտեմ, որ ոչ ոք չի գալու»:*

Խորանի մոտ եկան հինգ հասուն տղամարդիկ և փրկություն ստացան:

Դրանից առաջ չէի կարողացել քնել, քանի որ աղոթում էի, իսկ հետո չկարողացա քնել, քանի որ ապաշխարում էի:

Տիրոջ ծրագրին հնազանդվելու շնորհիվ մեկ ծառայության ընթացքում այդ եկեղեցուն միացավ չորս նոր ընտանիք: Այդ օրերին հոգեգալստական շրջանակներում եթե երեքշաբաթյա արթնության հավաքույթի ընթացքում վեց մարդ ապաշխարում էր, իսկ երկուսը լցվում էին Սուրբ Հոգով, մենք դա ընկալում էինք որպես հսկայական առաջխաղացում: Եվ ահա՛ Աստծո ծրագրին հետևելու շնորհիվ այդ հովվի եկեղեցուն միացավ ևս չորս ընտանիք:

Այդ փորձառությունից հետո ես սկսեցի սովորեցնել: Աստծո ծրագիրն ինձ համար սովորեցնելն ու Իր կամոք մարգարեության ծառայության մեջ լինելն էր: Մեկ այլ եկեղեցի գնացի, և տասն օրում տասներկու նոր ընտանիք միացավ եկեղեցուն: Նման դեպքերը շարունակվում էին, քանի որ ես Աստծո ԾՐԱԳՐԻ մեջ էի. իրականացնում էի Աստծո նպատակը:

Ծրագրեր: Երբեմն մենք ինչ-որ բաներ ենք անում, քանի որ մտածում ենք, որ դա է կարգը: Մտածում ենք. *«Դե, իմ եկեղեցում այդպես են անում: Ուրիշներն այդպես են անում. դա*

նշանակում է, որ մենք նույնպես պետք է այդպես անենք»: Ո՛չ: Ինքնե՛րդ Երկնքից խոսք ստացեք: Ես կասկածի նշույլ անգամ չունեմ, որ Աստված որոշ մարդկանց ասել է, որ ինչ-որ բան որոշակի ձևով անեն: Բայց այդ մարդիկ փորձում են իրենց կյանքերը կամ իրենց եկեղեցիները հարմարեցնել նրան, ինչ ուրիշներն են անում, և ի վերջո ձախողվում են: Միայն այն, որ ինչ-որ հովիվ իր եկեղեցում ինչ-որ լավ ծրագիր ունի, չի նշանակում, որ այդ նույն ծրագիրը կգործի մեկ այլ եկեղեցում: Գուցե դա բոլորովին էլ այն չէ, ինչ Աստված է ցանկանում տվյալ եկեղեցու համար. գուցե դա *Աստծո ծրագիրը* չէ այդ եկեղեցու համար:

Դուք պետք է ծնկի գաք, և ինքներդ պարզեք, թե որոնք են Աստծո ծրագրերը ձեզ համար, քանի որ Աստված Իր հաստատումն ու օրհնությունները կտա միայն *ԻՐ ԾՐԱԳՐԵՐԻ* համար: Աստծո ծրագիրը շատ ավելի արդյունավետ է: Եթե կառչեք Աստծո ծրագրից ձեր կյանքի կամ եկեղեցու համար, ապա այն *կգործի* և *արդյունք կտա*: Սակայն եթե ինքներդ փորձեք ձեր տունը կառուցել, ապա կչարչարվեք ու կչարչարվեք, գուցե նույնիսկ ի վերջո կառուցեք, ու այն լավ տեսք ունենա, բայց այդ ամենը զուր կլինի, քանի որ Տերը դրա մեջ չէր:

Եթե, օրինակ, դո՛ւք, հովիվնե՛ր, ժամանակ հատկացնեք Աստծուն փնտրելուն և Նրան սպասելուն, ապա ինքներդ կտեսնեք, որ Սուրբ Հոգու նկատմամբ զգայունություն եք ձեռք բերում: Կիմանաք, թե ինչ է Աստված ցանկանում, որ անեք ձեր ծառայությունների ժամանակ: Դուք հստակ կիմանաք, թե ինչ է Աստված կամենում, որ անեք: Նա չի անտեսում հավաքույթի առաջնորդին: Սակայն եթե դուք լավ ծանոթ չեք Սուրբ Հոգուն, որպեսզի իմանաք, թե ինչ է Նա անում, *ապա դուրս կմնաք Աստծո շարժից*:

Հաճախ եմ ասել, որ կարծում եմ՝ քարոզիչները, նույնիսկ

Ամբողջական Ավետարանի, հոգեգալստական քարոզիչ-ները չէին ճանաչի Սուրբ Հոգուն, անգամ եթե Նա կարմիր գլխարկով դիմացի փողոցից քայլեր դեպի իրենց: Սուրբ Հոգին կսկսի շարժվել նրանց ծառայություններում, իսկ նրանք պարզապես կշարունակեն իրենց փոքրիկ ծրագրերը:

ԱՍՏԾՈ ԾՐԱԳՐԻՑ ԴՈՒՐՍ ԳՏՆՎԵԼԸ ԱՆԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ Է ԲԵՐՈՒՄ

Ինչպես արդեն նշել եմ, տասներկու տարի հովվություն անելուց հետո եմ սկսել փնտրել Տիրոջը և հարցեր ուղղել Նրան իմ ծառայության վերաբերյալ, քանի որ անբավարարվածության զգացողություն ունեի: Ի վերջո Հիսուսն ասաց ինձ. «Սկսենք նրանից, որ Ես երբևիցե քեզ չեմ կանչել հովիվ լինելու»:

Որոշ ժամանակ ավետարանիչ լինելուց և հիասթափություն ապրելուց հետո նորից փնտրեցի Տիրոջը, և Նա հարցրեց ինձ. «Ինչ ես պատրաստվում անելու նրա հետ, ինչ ասել եմ քեզ տարիներ առաջ քո ծառայության վերաբերյալ»:

Ես ասացի. «Տե՛ր, ես չէի ծրագրել որևէ բան անել այդ ուղղությամբ»:

«Ուրեմն պետք է սկսես, այլապես...»,- պատասխանեց Նա:

«Հասկացա, որ պետք է սկսեմ»:

Մենք մի բան պետք է հասկանանք. Աստծո կամքից դուրս լինելը անբավարարվածություն է բերում. բացի այդ՝ եթե չշտկենք ինքներս մեզ, ապա ստիպված կլինենք կրել անհնազանդության հետևանքները: Ո՛չ, Աստված չէ, որ բերում է այդ հետևանքները, դրանք Երկնքից չէ, որ գալիս են: *«Գողը չի գալիս, բայց միայն որ գողանա և սպանի և կորցնի»* (Հովհ. 10.10): Աստված պարզապես թույլ է տալիս, որ դրանք գան, քանի որ մենք չենք իրագործում *Նրա ծրագիրը*, չենք ձգտում *Նրա նպատակներին*:

Ծրագրեր, նպատակներ, ձգտումներ: Ավելի լավ է ստանալ Աստծո ծրագիրն ու նպատակը և ձգտել դրանց: Եկե՛ք չհետևենք մեր ծրագրերին: Եկե՛ք հետևենք Աստծո ծրագրին ու նպատակին և Նրա ձգտումներն ունենանք: Աստծո լիարժեք օրհնությունն ու Սուրբ Հոգու ամբողջ մեծությունը կարող են գալ միայն ՆՐԱ ԾՐԱԳՐԻ վրա: Մենք պետք է ստանանք Աստծո լավագույնը:

3 ԵԹԵ ՏԵՐԸ ՉԿԱՌՈՒՑԻ ՏՈՒՆԸ

Եթե Տերը չշինի տունը, զուր են աշխատում նրա շինողները...

– Սաղմոս 127.1

Իմ ծառայության ավելի քան հիսուն տարիների ընթացքում Սաղմոս 127.1-ը եղել է այն խոսքը, որի վրա հիմնել եմ իմ կյանքը: Նախքան ինչ-որ քայլ կանեմ, հավաստիանում եմ, որ Տերը դրանում է:

Ուշադրությունն դարձրեք, որ այս խոսքի մեջ ասվում է, որ նրանք *կառուցեցին* տունը: Նրանք կառուցեցին այն, սակայն աշխատանքն ապարդյուն էր, քանի որ Տերը դրանում չէր: Շատ անգամներ այն, ինչ մենք անում ենք ծառայության մեջ, լավ է, սակայն բոլորովին Տիրոջ ծրագիրը չէ. մարդկային ծրագիր է:

Սաղմոս 127.1-ը չի վերաբերում միայն տուն կառուցելուն: Բնական իրականության մեջ, եթե Աստված այն բանի մեջ չէ, ինչ դուք անում եք, ապա *ինչ էլ* որ անեք, փուլ կգա: Սակայն Աստվածաշունչն այստեղ խոսում է նաև հոգևոր բաների մասին:

Ինչ էլ Աստծո համար անում եք, հարց ուղղեք ինքներդ ձեզ՝ արդյո՞ք սա Աստծո ծրագիրն է: Հիշե՛ք. եթե Տերը չի կառուցում

տունը, ապա ամբողջ աշխատանքն ապարդյուն է: Կարող եք մի ամբողջ տուն կառուցել, բայց դրա ոչ մի մասնիկն Աստծո ծրագրի համաձայն կառուցված չլինի: Այս խոսքում տեսնում ենք, որ *նրանք* պետք է աշխատեին *(տքնեին)*՝ այն կառուցելու համար, քանի որ *Աստված* դրանում չէր: Ներգրավեք Աստծուն այն ամենի մեջ, ինչ անում եք: Պարզեք, թե որն է Նրա ծրագիրը նախքան կառուցել սկսելը:

Աստծո ծրագրից շեղվելը հեշտ է: Հատկապես ծառայողները կարող են շեղվել Աստծո ծրագրից ինչ-որ լավ, ճիշտ և օրինավոր թվացող բանի պատճառով: Սակայն եթե Աստված չի ասել նրանց, որ անեն դա, և դա Աստծո ծրագիրը չէ նրանց համար, ապա նրանք սխալ ծրագրով կընթանան: Եվ այդ դեպքում բաց կթողնեն Աստծո օրհնության լիությունը:

Օրինակ՝ 1979 թվականի հոկտեմբերի 1-ին «Ռեմայի» տարածքում Տիրոջ ուղղորդմամբ մեկնարկեցի Բժշկության դպրոցը: Տարիների ընթացքում զարմանահրաշ վկայություններ ենք լսել մարդկանցից, որոնք բժշկություն են ստացել:

Ըստ մեր ավանդույթի՝ բժշկության դասերը սկսվում էին փառաբանության երգով: Շատ անգամներ մենք քառասունհինգ րոպե պարզապես փառաբանում ու երկրպագում էինք Տիրոջը: Մի օր, երբ գնում էի Բժշկության դպրոց, Տերը խոսեց ինձ հետ: Դա այնքան իրական էր, կարծես լսեի կողքիս կանգնած ինչ-որ մեկի ձայնը: Տերն ասաց. «Ո՞րն է այս հավաքույթի նպատակը»:

«Բժշկության հավաքույթ է»,- պատասխանեցի ես:

«Ի՞նչ տեսակի բժշկության հավաքույթ է»:

«Մենք բժշկության կարիք ունեցողներին սովորեցնում ենք ինչպես բժշկություն ստանալ: Բացի այդ՝ մարդկանց սովորեցնում ենք ինչպես ծառայել հիվանդներին: Նպատակը դա է»:

«Ուրեմն,- Տերն ասաց ինձ,- դա երկրպագության ծառայություն չէ»:

«Ո՛չ,- ասացի ես,- երկրպագության ծառայություն չէ»:

«Այդ դեպքում մի՛ վերածեք այն երկրպագության ծառայության: Մի քանի ե՛րգ երգեք, այնպես որ եկեղեցին մասնակցի, և անմիջապես անցե՛ք ուսուցմանը»:

Այդպիսով՝ մենք այլևս չէինք վարում Բժշկության դպրոցի դասերն այնպես, ինչպես նախկինում էինք անում: Սկսեցինք Աստծո ծրագրին համընթաց շարժվել: Երգում և փառաբանում ենք մոտ տասնհինգ րոպե, այնուհետև անմիջապես անցնում դասին:

Երկրպագության ոլորտը միակը չէր, որտեղ թերացումներ ունեինք Բժշկության դպրոցում: Առանց գիտակցելու վերածվել էինք հոգեբանական խորհրդատվական ընկերության: Ի վերջո մի շենք կառուցեցինք, անվանեցինք այն «Աղոթքի և բժշկության կենտրոն» և խորհրդատվության համար սենյակներ հատկացրինք: Մարդիկ գալիս կամ զանգահարում էին տարբեր հարցերով՝ ամուսնական, ֆինանսական, հոգևոր և այլն:

Որոշ ժամանակ անց զգացինք, որ ինչ-որ բան այն չէ: Այնպիսի տպավորություն էր, որ առանց գուլպաները հանելու լվանում էինք մեր ոտքերը:

Ուստի սկսեցինք աղոթել: Ես և կինս աղոթում էինք «Աղոթքի և բժշկության կենտրոնի» առաջնորդի հետ և խնդրել էինք այն մարդկանց, որ «Ռեմայում» աղոթելու համար պարբերաբար հավաքվում էին, աղոթել մեզ հետ այդ հարցի շուրջ:

Մի երեկո՝ աղոթքի այդ հավաքույթներից մեկի ժամանակ, ես ծնկի իջա բեմահարթակին դրված աթոռի մոտ, և Տերը խոսեց ինձ հետ:

Նա ասաց. «Դու տասնհինգ տարի քարոզել ես Հա-

կոբոս 5.14-րդ խոսքերը: Նկատե՛լ ես, որ գրված է ոչ թե «աղոթք, խորհրդատվություն և բժշկություն», այլ «աղոթք և բժշկություն»:

Իհարկե, պետք է սովորեցնել Խոսքը: Հենց դրան էին նվիրված բժշկությանը վերաբերող ամենօրյա դասերը: Տերն ասաց ինձ. «Գնա՛ և նայի՛ր, թե ինչ է գրված շենքին ամրացված նշանի վրա. գրված է «Աղոթքի և բժշկության կենտրոն», այլ ոչ թե «Աղոթքի, խորհրդատվության և բժշկության կենտրոն»: Ես քեզ ամենևին չեմ ասել, որ խորհրդատվությամբ զբաղվես: Դու ինքդ ես դա ավելացրել»:

Հետո Նա ասաց ինձ. «Խորհրդատվություն մի՛ անցկացրու ոչ մեկի հետ՝ բացի քո հոտի անդամներից:

Կարող ես խորհրդատվություն տրամադրել դպրոցի աշխատակիցներին և ուսանողներին, քանի որ նրանք քո հոտից են, սակայն ո՛չ ուրիշներին: Եթե նրանք խորհրդատվության կարիք ունեն, ապա պետք է ստանան այն իրենց հոտի ներսում, իսկ եթե ոչ մի եկեղեցու անդամ չեն, հենց դա է խնդիրը»:

Փա՛ռք Աստծուն ուսուցիչների համար: Փա՛ռք Աստծուն ավետարանիչների համար: Փա՛ռք Աստծուն առաքյալների և մարգարեների համար: Սակայն մենք հովիվների ծառայության կարիքն ունենք: Հովիվն *ապրում է* գառների հետ:

Երբ հավաքույթներ եմ անցկացնում, մարդկանց ասում եմ. «Ձեր տասանորդներն ուղարկե՛ք եկեղեցի: Աստվածաշունչը սովորեցնում է մեզ տասանորդի *և* նվիրատվության մասին: Եթե ցանկանում եք, կարող եք ինձ նվիրատվություն ուղարկել, սակայն հո՛գ տարեք ձեր եկեղեցու մասին»:

Դուք ունեք հովվի կարիք: Բոլորիս կյանքում էլ լինում են ճգնաժամեր: Գուցե ինչ-որ պահի դուք կամ ինչ-որ մեկը, որին ճանաչում եք, հիվանդանոցում հայտնվեք: Կարող եք զանգահարել մեր գրասենյակ, և մենք կաղոթենք ձեզ հա-

մար, քանի որ Աստվածաշունչը սովորեցնում է, որ պետք է աղոթել: Սակայն ես հիվանդանոց չեմ գա: Ես չեմ կարողանա անել դա, իսկ հովիվը կանի (Գուցե դուք չեք հաճախում ու չեք աջակցում տեղի եկեղեցուն: Իրականում, եթե դա ձեզնից կախված լիներ, գուցե եկեղեցին վաղուց փակված կամ սնանկացած լիներ): Եթե զանգահարեք ձեր հովվին, նա կգա ձեզ յուղով օծելու, ձեզ համար աղոթելու և այդ պահին ձեր կողքին կանգնելու:

Ձեր ազգականներից ոմանք գուցե մահանան (Աստված չի ասել, որ այս երկրի վրա հավերժ ենք ապրելու), և դուք կարիք ունենաք, որ ձեր կողքին մարդիկ լինեն: Ինձ մի՛ զանգահարեք, որովհետև ես չեմ կարողանա գալ: Կամ գուցե ձեր ընտանիքի անդամներից որևէ մեկը ցանկանա ամուսնանալ: Նման դեպքերում մի՛ դիմեք ինձ կամ այլ հեռուստա/ռադիոքարոզչի, որովհետև մենք չենք կարողանա գալ ու պսակադրել նրանց:

Նման հարցերով զբաղվում են տեղի եկեղեցիների հովիվները: Դա Աստծո ծրագիրն է տեղական եկեղեցիների համար: Իսկ ինչ վերաբերում է «Աղոթքի և բժշկության կենտրոնին», Աստված այլ ծրագիր ուներ, իսկ մենք պետք է հետևեինք այն ծրագրին, որ Աստվա՛ծ ուներ մեզ համար: Այս պարագայում մենք պետք է դադարեցնեինք խորհրդատվության տրամադրումը «Ռեմայի» շրջանակներից դուրս, որպեսզի Աստծուն համընթաց քայլեինք:

Մեկ այլ ոլորտ, որում շեղվել էի Աստծո ծրագրից, ամենամյա ճամբարային հավաքույթի ձևաչափն էր:

Շատ տարիներ առաջ սկսել էի հավաքույթներ անցկացնել Թալսայի «Շերիդանի ժողով» քրիստոնեական կենտրոնում: Ամբողջ շենքն առավելագույնը ութ հարյուր մարդու էր տեղավորում, իսկ մեզ մոտ կանոնավոր հավաքվում էր չորս

հարյուր մարդ: Երեկոյան տեղի եկեղեցին էր զբաղեցնում եկեղեցաշենքը, իսկ ես իմ հավաքույթներն էի անցկացնում՝ պարզապես օգտվելով նրանց շենքից:

Մի երեկո ինքս ինձ անակնկալի բերեցի հետևյալ բառերով (ես միշտ եմ ինձ անակնկալի բերում՝ հոգուցս բխած խոսքեր արտաբերելով). «Այս ամառ հավատքի սեմինար և փակ տարածքում ճամբարային հավաքույթ ենք անցկացնելու: Աստված ասել է, որ սկսենք դա»: Այս խոսքերն ասելուց հետո շրջվեցի ու հարցրի՝ «Ո՞վ ասաց դա», և պարզվեց, որ իմ շուրթերից էին դուրս եկել այդ խոսքերը: Ես նման բանի մասին չէի մտածել. այդ խոսքերը հոգուցս էին բխել:

Երբեմն ինչ-որ բաներ եմ ասում՝ Աստծո Հոգուց ներշնչված, իսկ հետո, երբ կինս, Քենը կամ Լինեթն ինձ ասում են, թե ինչ եմ ասել, պատասխանում եմ, որ ես ավելի լավ գիտեմ, թե ինչ եմ ասել, ու նման բան հաստատ չեմ ասել: Իսկ նրանք պնդում են, որ ասել եմ: Երբ միացնում եմ ձայնագրությունը, համոզվում եմ, որ ասել եմ:

Ասածս այն է, որ Տերը տվեց մեզ ճամբարային հավաքույթի *Իր* ծրագիրն ու նպատակը, ուստի մենք սկսեցինք անցկացնել հավատքի սեմինարներ և փակ տարածքում ճամբարային հավաքույթներ: Այնուհետև՝ երեք տարի առաջ, Տերը նորից խոսեց ինձ հետ ճամբարային հավաքույթի մասին, քանի որ մենք առանց գիտակցելու շեղվել էինք Նրա *ծրագրից* ու *նպատակից*:

Մի օր՝ գիշերը ժամը երեքին, աղոթում էի, երբ Տերը խոսեց ինձ հետ. «Երբ ասացի քեզ, որ սկսես անցկացնել հավատքի սեմինար և ճամբարային հավաքույթ, հստակ ասացի, որ հավատքի սեմինարները պետք է անցկացնել առավոտյան, կեսօրի ծառայություններն՝ այնպես, ինչպես Սուրբ Հոգին կառաջնորդի, իսկ ճամբարային հավաքույթները՝ երեկոյան»:

Դա Աստծո ծրագիրն էր: Սակայն հետո ստացվեց այնպես, որ առանց մտածելու մենք դրանք փոխարինեցինք մեր ծրագրով և հրավիրեցինք տարբեր ուսուցիչների, որոնք կարող էին քարոզել ինչ թեմայով ցանկանային:

Ներկայիս երիտասարդությանը ծանոթ չէ ճամբարային հավաքույթների գաղափարը. հին հոգեգալստականները կհասկանան դա: Այստեղից է առաջացել «հները» արտահայտությունը: Մարդիկ սայլերով գալիս էին շրջակա տարածքներից, իրենց հետ բերում էին վրաններ, սնունդ և հարդ՝ ձիերի համար: Վրաններ էին կանգնեցնում և այդտեղ մնում մինչև հավաքույթի ավարտը: Մեր օրերում այնպիսի վազքի մեջ ենք, որ գալիս ենք եկեղեցական ծառայության, երեսուն րոպե մնում և ուզում ենք հեռանալ: Իսկ ճամբարային հավաքույթներն այդպիսին չէին:

Ճամբարային հավաքույթի ժամանակ միասին հավաքվում և վայելում էինք Աստծո բաներն ու հանգստանում Աստծո ներկայության մեջ: Կտրվում էինք մեր աշխատանքներից և շեղող այլ բաներից ու պարզապես թույլ տալիս, որ Սուրբ Հոգին անի այն, ինչ ցանկանում է անել:

Երբ Տերը նորից խոսեց ինձ հետ ճամբարային հավաքույթի մասին, մենք միանգամից սկսեցինք իրագործել Նրա ծրագիրը: Մենք վերադարձանք Նրա ծրագրին՝ ոչ թե իմ կամ մեկ ուրիշի:

Մեկ անգամ մի հովիվ ասաց ինձ. «Նույնիսկ դժվար է հաշվել, թե որքան գումար եմ ծախսել երկրով մեկ ինքնաթիռներով ճանապարհորդելու վրա՝ փորձելով կառուցել իմ եկեղեցին: Ես լսել էի մի հովվի մասին, որը հաջողության էր հասել, և գնացի նրա մոտ, որ սովորեի, թե ինչպես է նա դա արել, ու այդ ծրագիրն իրագործեցի իմ եկեղեցում, սակայն առաջընթացի փոխարեն հետընթաց ունեցանք: Այդ հովիվը այդ

ծրագիրն իրագործելու շնորհիվ եռապատկել էր իր հարանվանության անդամների թիվը, իսկ ես կորցրի իմ անդամների քսան տոկոսին: Դրանից հետո ինքնաթիռի տոմս գնեցի և գնացի մեկ այլ եկեղեցի ու այնտեղ մնացի մեկ շաբաթ, հետևեցի և նշումներ արեցի: Այնուհետև վերադարձա իմ եկեղեցի ու որդեգրեցի այն ծրագիրը, որը տեսել էի. ի վերջո ավելի շատ մարդ կորցրի»:

Այն պահին, երբ զրուցում էինք այդ հովվի հետ, նրա հարանվանության անդամների միայն մեկ երրորդն էր մնացել: «Ինչ անեմ»,- հարցրեց նա: Նա ցանկանում էր, որ ես իրեն ծրագիր տայի:

«Չգիտեմ, թե որն է Աստծո ծրագիրը քեզ համար: Առանձնացիր Աստծո հետ և պարզիր դա»,- ասացի ես:

«Ժամանակ չունեմ. զբաղված եմ հովվական գործունեությամբ»,- եղավ նրա պատասխանը:

Թանկագին ընկերներ, եթե դուք չափազանց զբաղված եք Աստծուն սպասելու և Նրա ծրագիրը բացահայտելու համար, ապա կարող եք այդպես ապրել ձեր ամբողջ կյանքն ու ամեն բան ապարդյուն անել: Իսկ հետո ինչ եք ասելու Աստծուն, երբ կանգնեք Նրա առջև հավիտենության մեջ: Նա ձեզ չի հարցնի այն բաների մասին, որ արել եք՝ առաջնորդվելով *ձեր* գաղափարներով ու ծրագրերով: Նա կցանկանա իմանալ, թե ինչ արեցիք ձեր կյանքի համար *Իր ծրագրի* հետ:

ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Մի քանի տարի առաջ մասնակցեցի մի հավաքույթի, որը կրում էր «Գաղափարների փոխանակում» խորագիրը: Հավաքույթին հրավիրված էին ծառայողներ տարբեր եկեղեցիներից ու հարանվանություններից:

Հավաքույթի ընթացքում այդ ծառայողներից ոմանք հարց-

րին ինձ. «Եղբայր Հեգին, ո՞րն է Ձեր հաջողության գաղտնիքը»: Մի ծառայող ասաց. «Երբ նոր էի ծանոթացել Ձեզ հետ, ոչ ոք Ձեր մասին չգիտեր: Դուք քարոզում էիք հիմնականում փոքր եկեղեցիներում, իսկ մեծերում՝ ոչ այնքան հաճախ: Սակայն հանկարծ դարձաք համազգային կերպար, իսկ մի քանի տարում՝ նույնիսկ միջազգային: Ինչպե՞ս դա պատահեց: Ո՞րն է Ձեր հաջողության գաղտնիքը»:

Ես պատասխանեցի. «Հաջողության միակ գաղտնիքը, որ ես գիտեմ, Աստծո Խոսքին համընթաց քայլելն է, ինչպես նաև աղոթելն ու Սուրբ Հոգուն լսելը: Ես պարզապես լսում եմ, թե ինչ է Սուրբ Հոգին ասում, որ անեմ, և անում եմ դա»: Իրականում, այն ամենը, ինչ ես այսօր անում եմ, Խոսքին հավատալու, այլ լեզուներով աղոթելու և Աստծուն հնազանդվելու շնորհիվ է:

Փա՛ռք Աստծուն այլ լեզուներով աղոթքի համար: Պատահել է, որ ինքս իմ աղոթքները թարգմանել եմ: Իմ կյանքում հենց այդպես է սկսել գործել թարգմանության պարգևը՝ իմ աղոթքները թարգմանելով:

Անկեղծ կլինեմ և կասեմ, որ լեզուներով աղոթքն առանցքային էր իմ ամուսնությանը և երեխաներին առնչվող հարցերում: 1938 թվականին Տեխասի Թոմ Բինի հոգեգալստական եկեղեցու հովիվն էի, երբ հանդիպեցի գեղեցկուհի կնոջս: Այդ ժամանակ քսանմեկ տարեկան էի և օգնականի կարիք ունեի:

Մի անգամ աղոթում էի մեր եկեղեցու սարկավագներից մեկի ամբարի ձեղնահարկում: Այդ ժամանակ արդեն որոշ ժամանակ էր, ինչ հանդիպում էինք Օրեթայի հետ: Այլ լեզուներով աղոթում էի իմ ապագայի համար, իսկ հետո աղոթքիս մեջ ինչեց նաև թարգմանությունը: Հոգում տեսա, որ ամուսնանալու եմ նրա հետ, և մենք երկու երեխա ենք ունենալու: Հենց այդպես էլ եղավ:

Ես դա աղոթքի ժամանակ ստացա և ոչ թե մարգարեի ծառայության պարգևի շնորհիվ, քանի որ այն ժամանակ դեռ մարգարեության ծառայության մեջ չէի:

Երբ ծնկի եք իջնում և բացահայտում, թե որոնք են *Նրա* ծրագրերը *ձեզ* համար, ամեն բան այնքա՛ն ավելի լավ է ստացվում, քանի որ Նա Իր հաստատումն ու օրհնությունները դնում է Իր ծրագրերի վրա: Ժամացույցի մեխանիզմի նման է աշխատում:

Հիշում եմ, թե ինչպես Աստված խոսեց ինձ հետ, մինչ կսկսվեր այն, ինչն այսօր կոչում ենք խարիզմատիկ շարժում:

1962 թվականի դեկտեմբերին քարոզում էի Հյուսթոնի Ամբողջական Ավետարանի եկեղեցիներից մեկում, երբ հանկարծ զգացի, թե ինչպես ինձ վրա քամի փչեց: Այն այնքան ուժեղ էր, որ ինձ գետնին գցեց, և ես հափշտակություն զգացի (Գործք 10.9, 10-րդ խոսքերում Աստվածաշունչն ասում է, որ Պետրոսը բարձրացավ տանիքը՝ աղոթելու, և հափշտակության մեջ ընկավ): Ֆիզիկապես ոչինչ չէի զգում:

Տեսա մի գեղեցիկ պարտեզ՝ սպիտակ ցանկապատով: Մեջտեղում տաղավար կար: Պարտեզը լի էր ամեն տեսակի գեղեցիկ ծաղիկներով: Տաղավարը նույնպես կառուցված էր մագլցող բույսերով: Բոլոր ծաղիկները բացված էին ու անուշ բուրում էին: Բուրմունքն օդում «տեսանելի» էր:

Ես արևելյան կողմից մոտեցա ցանկապատի մուտքին: Ներսում կանգնած էր Հիսուսը: Երբ տեղ հասա, Նա հանեց սողնակը, բացեց դարպասը, մեկնեց ձեռքը, բռնեց իմ աջ ձեռքից, ինձ ներս տարավ և փակեց դարպասը: Այնուհետև աջ ձեռքս առավ Իր երկու ձեռքերի մեջ և արահետով առաջնորդեց ինձ դեպի տաղավարը:

Տաղավարի երկու կողմերում երկու սպիտակ մարմարե նստարաններ կային: Նա նստեց հարավային կողմի նստա-

րանին և առանց որևէ բան ասելու ինձ նստեցրեց Իր կողքին:

Նայեցի շուրջս, տեսա, որ արևմուտքից մի գետ էր հոսում դեպի պարտեզը: Այն սկիզբ էր առնում Երկնքից և լայն էր ակունքի մոտ, այնուհետև նեղանալով հոսում էր դեպի փոքրիկ պարտեզը: Աչքիս առջև գետը վերափոխվեց. այն վերածվեց մարդկանց ամեն ազգությունից, տարբեր հագուստներով և կյանքի տարբեր կայաններից: Նրանք լցվում էին պարտեզի մեջ:

Ասացի. «Տե՛ր, ովքե՞ր են այս մարդիկ. ի՞նչ է այս ամենը նշանակում»:

Հիսուսը պատասխանեց. «Սրանք մարդիկ են «հարանվանական» եկեղեցիներից, ինչպես դուք եք ասում: Այս օրերում ես այցելում եմ ծարավ սրտերին ամենուր: Այցելում եմ վայրեր, որոնք քո պատկերացումից վեր են, ոչ միայն այն վայրերը, որոնք դուք կոչում եք «հարանվանական» եկեղեցիներ, այլև այլ կրոնների, որտեղ մարդկանց սրտերը ծարավ են ու բաց Ինձ համար: Սրանք մարդիկ են, որոնք կգան դեպի վերստին ծննդյան լույսը և Սուրբ Հոգու լիությունը: Նրանք կգան՝ հոսելով, ինչպես մեկ մարմին: Այս անուշահոտությունն այդ մարդկանց փառաբանությունն է, որ բարձրանում է Երկինք, ինչպես հնում խունկի ծուխն էր բարձրանում դեպի Ինձ»:

«Դու սրանում պետք է դերակատարում ունենաս,- ասաց Հիսուսը,- ուզում եմ, որ ծառայես ամբողջ Մարմնին»:

Մինչ ես նայում էի այդ տեսարանին, ինչպես հեռուստացույց կնայեի, Հիսուսը շարունակում էր նույնն ասել. «Կամենում եմ, որ ծառայես ամբողջ Մարմնին»:

Տեսա, թե ինչպես եմ ծառայում մկրտական, պրեսբիտերական, մեթոդիստական, «Քրիստոսի աշակերտները», հռոմեական կաթոլիկ եկեղեցիներում և այդպես էլ արեցի: Տեսա, թե ինչպես են մարդիկ զորությունից ընկնում մեթոդիստա-

կան, մկրտական, պրեսբիտերական, կաթոլիկ և այլ հարանվանական եկեղեցիներում, ու այդ ամենն իրականություն դարձավ:

Հիմա այդ ամենը գուցե չի զարմացնում ձեզ, սակայն այն ժամանակ դա ցնցող էր Ամբողջական Ավետարանի եկեղեցիների շրջանակներում: Ես հոգեգալստական քարոզիչ էի, որը քարոզում էի միայն ու միայն հոգեգալստական եկեղեցիներում:

Դա տեղի ունեցավ 1962 թվականի դեկտեմբերին: 1963-ի հունվարին հավաքույթ էի անցկացնում Հյուսթոնի Ամբողջական Ավետարանի մեկ այլ եկեղեցում: Մի երեկո հանկարծ մեզ վրա աղոթքի հոգի իջավ: (Հիմա նման բաների հաճախ չէ, որ ականատես ենք լինում: Իրականում այլևս չենք տեսնում նման բաներ: Սահմանափակ տեղ ենք տալիս Սուրբ Հոգուն խարիզմատիկ շարժման մեջ: Սակայն երբ սովորում ենք հետևել Աստծուն ու իսկապես երկրպագել Նրան, Սուրբ Հոգին կարողանում է դրսևորվել ինչպես ցանկանում է):

1963 թվականի այդ հավաքույթի ժամանակ ես պարզապես քարոզում էի, երբ մեզ վրա աղոթքի հոգի իջավ: Բոլորն անմիջապես ծնկի իջան և սկսեցին աղոթել: *Ես* չէի ասել, որ մարդիկ աղոթեին. Սուրբ Հոգին պարզապես իջավ մարդկանց վրա, որ աղոթեին: Նայեցի և տեսա, որ ոչ ոք նստած չէր նստարաններին. բոլորը եկել էին խորանի մոտ կամ էլ իրենց նստարանների մոտ ծնկած աղոթում էին:

Ես իջա բեմահարթակից, ծնկի եկա աստիճանների մոտ և սկսեցի աղոթել: Կարճ ժամանակ էր, ինչ աղոթում էի, երբ Հոգին պարուրեց ինձ: Քանի որ ավելի լավ արտահայտություն չեմ գտնում այդ վերապրումը նկարագրելու համար, կոչում եմ դա «ինքդ քեզ կորցնել Հոգու մեջ». ժամանակն անցնում է, քեզ թվում է, թե ընդամենը մի քանի րոպե ես աղոթել,

մինչդեռ իրականում շատ ավելի երկար ժամանակ ես անցկացրել աղոթքի մեջ:

Երբ վերջապես բացեցի աչքերս, ինձ թվում էր, թե մոտ տասնհինգ րոպե եմ աղոթել: Կտրվել էի այն ամենից, ինչ շուրջս կատարվում էր, մինչդեռ իրականում մեկուկես ժամ աղոթքի մեջ էի անցկացրել: Նայեցի շուրջս, իսկ եկեղեցում բացի ինձնից ու հովվից ոչ ոք չկար: Ասացի նրան. «Ժամացույցիս հետ ինչ-որ բան այն չէ. չափից արագ է շարժվում»:

«Ո՛չ,- պատասխանեց նա,- ժամացույցը ճիշտ է աշխատում. տեսա, որ Հոգու մեջ էիր, ու չցանկացա խանգարել քեզ»:

Արդեն վերջացնում էի աղոթքս, երբ հանկարծ զգացի, որ ինչ-որ բան եմ անում, ու բացեցի աչքերս: Մի ձեռքիս բթամատով և ցուցամատով շրջան էի պահել, իսկ մյուս ձեռքիս ցուցամատով դրա ներսում շրջան էի գծում՝ մեկ մի, մեկ հակառակ ուղղությամբ, և այդ ամբողջ ընթացքում աղոթում էի լեզուներով: Անցնում էի շրջանի երեք քառորդը, հետո վերադառնում՝ շարունակելով աղոթել, այնուհետև՝ շրջանի մեկ քառորդը և վերադառնում ու ամբողջ ընթացքում աղոթում: Մտածեցի՝ *այս ինչ եմ անում,* իսկ հետո սկսեցի թարգմանել աղոթքս:

Ահա այսպիսին էր թարգմանությունը. «Դու քո ծառայության մեջ շրջագծով ես գնում: Կանցնես շրջագծի ամբողջ երկայնքով, այնուհետև՝ հետ կդառնաս (արդեն մոտ էր ժամանակը, երբ պետք է վերադառնայի այն եկեղեցին, որտեղ նախկինում ինն անգամ եղել էի): Կանցնես շրջագծի երեք քառորդը և հետ կդառնաս այդ երեք քառորդը, կանցնես շրջագծի կեսը և հետ կդառնաս»:

Ի վերջո Տերն ասաց ինձ. «Իսկ հիմա դո՛ւրս արի այդ շրջագծից, դադարի՛ր եկեղեցիներում հավաքույթներ անցկացնելուց. գնա՛ չեզոք վայր: Հավաքույթներդ անցկաց-

ռու՛ հյուրանոցի կամ հյուրատան հանդիսասրահում, կոչի՛ր դրանք «Բոլոր հավատքների արշավներ» և հրավիրի՛ր մարդկանց ամեն հարանվանությունից»:

Հիսուսը բացատրեց, թե ինչու էր ցանկանում, որ դադարեմ եկեղեցիներում հավաքույթներ անցկացնելուց: Նա ասաց. «Մի հարանվանությունը մյուսի դեմ նախապաշարմունքներ ունի: Բացի այդ՝ Ամբողջական Ավետարանի բոլոր եկեղեցիները սեփական ավազանից են ձուկ որսում, իսկ ավազանում այլևս ձուկ չի մնացել»: Ուստի ես վեր կացա և գնացի մարդկանց որսով զբաղվելու. փա՛ռք Աստծուն: Իսկ այսօր մենք վայելում ենք դրա արդյունքները:

Հետո Հիսուսն ասաց. «Մեկ ա՛յլ շրջապտույտ արա: Այդ առաջին շրջապտույտը խորհրդապատկերում է այն, որ գնալու ես չեզոք վայրեր՝ հավաքույթներ անցկացնելու»: Հետո տեսա, թե ինչպես եմ մի փոքր ավելի մեծ շրջան գծում: Հիսուսն ասաց. «Երկրորդ շրջապտույտը խորհդապատկերում է այն, որ տպագրելու ես քո բոլոր աստվածաշնչյան դասերը»: Դա արդեն արել ենք: Իրականում, միայն անգլերեն արդեն երեսունյոթ միլիոն օրինակ գիրք ենք հրատարակել և շարունակում ենք ամեն տարի միլիոնավոր գրքեր հրատարակել: Այն ժամանակ չէի պատկերացնում, թե այդքան մեծ է լինելու շրջանը: Հետո Հիսուսն ասաց. «Երրորդը՝ բոլոր ուղերձներդ ձայնագրի՛ր ձայներիզի վրա»: Այդ ժամանակ միայն հին պտտվող երիզները կային: Հիմա մենք ամեն ամիս թողարկում ենք 40 հազար կասետային ձայներիզ:

Հետո Հիսուսն ասաց. «Անցի՛ր ռադիոյին, բայց մի՛ քարոզիր, այլ սովորեցրո՛ւ»: Այն ժամանակ Ամբողջական Ավետարանականի շրջանակներից ոչ ոք ռադիոյով չէր սովորեցնում, բոլորը քարոզում էին: Ուստի ես ռադիոժամ վերցրի և սկսեցի սովորեցնել: Ամեն անգամ, երբ մենք մտնում էինք հերթական

շրջապտույտի մեջ, ամեն բան այնքան հարթ էր ընթանում: Ինչո՞ւ, որովհետև դա Աստծո ծրագիրն էր: Մենք խոսք էինք ստացել Երկնքից, և այդ ծրագիրն օրհնված էր:

Ես միայն համառոտ ակնարկն եմ տվել նրա, ինչ Աստված արել է իմ կյանքում և ծառայության մեջ, բայց միայն ինձ համար չէ, որ Նա ունի ծրագրեր և նպատակներ: Նա ծրագիր ունի եկեղեցու համար: Նա ծրագիր և տեղ ունի Իր զավակներից յուրաքանչյուրի համար, իսկ Իր զավակները կարող են իմանալ Նրա ծրագրերն ու ձգտել դրանց իրենց կյանքում և ծառայության մեջ:

Բայց անհրաժեշտ է հենց Նրանից ստանալ Իր ծրագիրը: Դու պետք է ճեղքես աղոթքով:

Հին հոգեգալստականների շրջանում տարածված էր «աղոթքով ճեղքել» արտահայտությունը, բայց մարդիկ չարաշահում էին այն: Օրինակ՝ կարող էին հավատացյալ ընկերոջն ասել. «Այսօր ճեղքե՞լ ես»: Իրականում, եթե Աստծո հետ հաղորդակցության մեջ ես, կարիք չունես աղոթքով ճեղքելու՝ այդ իմաստով: Սակայն եթե նահանջել ես, ապա նման անհրաժեշտություն կլինի:

Այդ արտահայտությունը շրջանառության մեջ է մտել, քանի որ մարդիկ երբեմն աղոթքի ընթացքում բախվում են չար ուժերի, և դրանք աղոթքով ճեղքելու անհրաժեշտություն է առաջանում: Դանիելից քսանմեկ օր պահանջվեց, որ աղոթքով կարողանար ճեղքում ստանալ: Այնպես որ երբեմն *հոգևոր ուժերը* աղոթքով ճեղքելու կարիք է լինում:

Երբեմն պետք է աղոթել և սպասել Աստծուն՝ իմանալու, թե որոնք են *Նրա* ծրագրերը, նպատակները և ձգտումները: Դուք պետք է պարզեք, թե որն է Աստծո ծրագիրը ձեր կյանքի, ծառայության, եկեղեցու կամ այն բանի համար, ինչի մեջ Տերը կանչել է ձեզ:

Տիրոջն աղոթքի մեջ սպասելու ընթացքում ես պարզապես հնազանդվում էի նրան, անում էի այն, ինչ Նա ասել էր: Միակ բանը, որ անում էի, վազելն էր, որ Նրա հետևից հասնեի:

Մի անգամ իմ ծառայող ընկերներից մեկն իր կնոջ հետ եկավ ինձ ու կնոջս այցելության, և մենք տարանք նրանց՝ ցույց տալու «Ռեման» և «Ռեմային» պատկանող տարածքները: Նրանք ասացին. «Այս ամենը պետք է որ մեծ ծանրություն լինի ձեզ համար»:

«Ո՛չ,- ասացի ես,- ես ոչ մի ծանրություն չեմ տանում: Սխալվում եք. այս ամենն ինձ համար նույնիսկ նվազագույն ծանրաբեռնվածություն չէ: Ուսումնական կենտրոն բացելն *իմ* գաղափարը չէր և ոչ էլ *իմ* ծրագիրն էր: Սկզբում ես նույնիսկ չէի ցանկանում անել դա»:

Ես իմ հոգսերն արդեն Աստծո վրա էի գցել: Այդ հարցն Աստծո հետ էի լուծել և գիտեի դրա վերաբերյալ Նրա ծրագիրը: Ասել էի Տիրոջը շինությունների վերաբերյալ մեր ֆինանսական կարիքների մասին (Տերը մեր Ընկերն է և մեր Հայրը: Նա հոգ է տանում մեր մասին և հասկանում է մեզ, երբ խոսում ենք Իր հետ):

Ահա այդ պատճառով ես ծանրություն չեմ կրում: Եթե ինչոր բան Տիրոջ կամքն է, ապա Նա դրանում ձեզ հաջողություն կտա: «*Եթե Տերը չշինի տունը, զուր են աշխատում նրա շինողները...*» (Սաղմ. 127.1): Իսկ ես գիտեմ, որ Աստված կարող է ավարտին հասցնել Իր աշխատանքը: Մենք անում էինք այն, ինչ *Աստված* էր ասել, որ անեինք, ոչ թե այն, ինչ ես էի ցանկացել: Դա ո՛չ իմ ծրագիրն էլ, ո՛չ էլ իմ նպատակը, այլ Աստծունը:

ԳՏԵՔ ՁԵՐ ՕԾՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ

Պատճառներից մեկը, թե ինչու են շատ ծառայողներ բաց թողնում Աստծո ծրագիրն իրենց կյանքերի համար, այն է, որ

նրանք փորձում են անել ամեն բան՝ առանց կոնկրետ որևէ բանի մեջ վարպետանալու: Մենք պետք է գիտակցենք, որ սահմանափակ ենք: Եթե դուք միայնակ կարողանայիք ամեն բան անել, ապա մյուսներիս կարիքը չէր լինի: Սակայն մարդիկ հակված են մտածելու. «Եթե Աստված ինձ այստեղից հեռացնի, ապա այս աշխատանքը չի արվի»: Տարօրինակ չէ՞՝ ինչպես է Աստված կարողացել ինչ-որ բան անել առանց նրանց այսքան տարիներ: Մարդկային «ես»-ն է սիրում նման կերպ մտածել:

«Այո՛, սակայն ես միակն եմ, ով Աստծո համար ինչ-որ է բան անում»:

Սիրելինե՛րս, շատ հաճախ Աստծո համար ավելին անում են այն մարդիկ, որոնց մասին դուք առհասարակ ոչինչ չեք լսել, քան նրանք, որոնք նման վերաբերմունք ունեն: Գուցե Սուրբ Հոգին ձեզ չի տվել որոշակի ծառայության պարգև և օծություն, բայց *գտե՛ք ձեր տեղը* և հաջողակ կլինեք: Եթե վստահ չեք՝ որն է ձեր տեղը, ապա շարունակե՛ք տանել Խոսքը մարդկանց և հավատքով ձեռք դնել նրանց վրա: Աստված պատվում է հավատքը, և դուք շատ հրաշքներ կտեսնեք:

Պատվելի Հովարդ Քարթերը տասներեք տարի եղել է Մեծ Բրիտանիայի «Աստծո ժողովքի» խորհրդի նախագահը և հիմնել է աշխարհում առաջին Հոգեգալստական աստվածաշնչյան դպրոցը: Աստված օգտագործել է նրան՝ տալու Սուրբ Հոգու պարգևների վերաբերյալ ամենահստակ ուսմունքը, որ երբևէ լսել եմ: Մի անգամ լսել եմ, թե ինչպես էր նա ասում, որ գրեթե բոլորը, որոնց վրա ինքը ձեռք էր դնում, լցվում էին Սուրբ Հոգով, և գրեթե բոլորը, որոնց վրա իր կինը ձեռք էր դնում, բժշկվում էին: Ինչպես տեսնում եք, թե՛ նա, թե՛ նրա կինը գտել էին իրենց օծության վայրը, և ամուսիններով՝ որպես թիմ, ծառայում էին իրենց օծության համաձայն:

Նրանք հասկացել էին, որ արդյունավետ էին գործում՝ իրենց անհատական օծության վայրում մնալով:

Երբ մարդիկ գտնում են իրենց օծության վայրն ու մնում դրանում, ոչ թե փորձում լինել նա, ով իրականում չեն, ապա արդյունավետ են լինում նրանում, ինչ անում են Աստծո համար:

Երբեմն Աստված ցույց կտա ձեզ, թե ինչ է ցանկանում, որ անեք. դուք կստանաք Նրա ծրագիրը, միևնույն ժամանակ ձեր հոգում կզգաք, որ հիմա չէ դա անելու *ժամանակը*: Սովորեք սպասել Աստծո ծրագիրն իրագործելու ճիշտ ժամանակին. սպասեք Սուրբ Հոգու ազդակին: Երբեմն Աստված ձեզ հոգում ինչ-որ բաներ ցույց կտա: Գուցե դուք չիմանաք *ամենը,* ինչ Աստված կամենում է, որ անեք, բայց հետզհետե կատարելով Տիրոջ ասածները՝ Հոգու մեջ ավելի խորը կգնաք: Երբ հնազանդությամբ հետևում եք Աստծո ծրագրին և *Նրա* նպատակին, Նա ձեզ համար ինչ-որ բաներ է պատկերում ու ցույց տալիս և առաջնորդում է այնպես, որ ավելի լավ պատկերացնեք Իր ծրագիրը:

Կլինեն նաև դեպքեր, երբ կհասկանաք, թե ինչ է Հոգին կամենում անել Քրիստոսի Մարմնի այլ անդամների միջոցով, սակայն դա չի նշանակում, որ Աստված կամենում է, որ *դուք* դա անեք:

Լսեք, թե ինչ կասեմ ձեզ: Եթե հիշում եք, երբեմն Պողոսն իր խոսքում ասում է՝ «Ահա թե ինչ ասաց Տերը», իսկ երբեմն՝ «Տերը թույլ տվեց, որ ասեմ սա»:

Խնդրում եմ, հասկացեք, որ այս ամենն ասում եմ Աստծո Հոգով, քանի որ Աստված ցանկանում է որոշակի հարցերում հստակություն բերել, որպեսզի կարողանա մեր մեջ շարժվել: Շատերը, որոնք զգայուն են Սուրբ Հոգու հանդեպ, զգում են՝ ինչ *է* Աստված անում և ինչ է *ցանկանում* անել: Նրանք վերց-

նում են դա և դրանից փորձում ինչ-որ բան կառուցել, սակայն Աստված անձամբ *նրանց* չի ասել, որ նման բան անեն: Դրանք նրանց մարդկային ծրագրերն են, ոչ թե Աստծո ծրագիրը կամ նպատակը:

Այդպես նրանք ավելացնում են Աստծո ծրագրին կամ պակասեցնում դրանից, խառնաշփոթի են վերածում այն, ինչ Աստված իսկապես ցանկանում էր անել, իսկ երբեմն նույնիսկ խափանում են այն ծրագիրն ու շարժը, որն Աստված էր կամենում անել: Այսօր Քրիստոսի Մարմնում մենք իրավունք չունենք թույլ տալու, որ նման բան տեղի ունենա:

Իսկ ինչպե՞ս կարող ենք թույլ չտալ: Աղոթելո՞վ: Վստահաբար պետք է աղոթենք, սակայն միայն դա բավարար չէ: Մենք պետք է *սովորեցնենք* մարդկանց, թե ինչ է Աստվածաշունչն ասում: Պետք է իրազեկենք մարդկանց: Քրիստոսի Մարմինը պետք է սկսի հետևել Աստծո ծրագրերին, նպատակներին և ձգտումներին:

Թո՛ւյլ տվեք մի պատկերավոր օրինակով բացատրել, թե ինչ նկատի ունեմ: Մի քանի տարի առաջ՝ ճամբարային հավաքույթի ժամանակ, հայտարարեցի, որ պատրաստվում ենք բացելու աստվածաշնչյան դպրոց: Շատ մարդիկ ևս աստվածաշնչյան դպրոց բացելու առաջնորդություն էին զգում: Կարծում եմ, որ նրանցից ոմանց հետ Աստված էր խոսել, իսկ մյուսները պարզապես զգում էին Աստծո շարժն այդ ոլորտում և այդ ուղղությամբ:

Երբ մենք հայտարարեցինք, որ աստվածաշնչյան դպրոց ենք բացում, ստացանք շատ նամակներ, որոնցում ասվում էր. «Աստված մեզ ասել է, որ աստվածաշնչյան դպրոց հիմնենք, բայց չգիտենք, թե ինչպես: Կարո՞ղ եք ասել մեզ՝ ինչպես անենք դա»: Երբ Աստված ասաց մեզ, որ աստվածաշնչյան դպրոց բացենք, մենք ևս չգիտեինք ինչպես անել դա: Ուստի

պետք է փնտրեինք *Աստծո ծրագիրը,* թե ինչ էր *Նա* ցանկանում, որ անեինք: Մենք պատասխանում էինք այդ մարդկանց. «Եթե Աստված ձեզ ասել է, որ աստվածաշնչյան դպրոց հիմնեք, ապա կասի նաև, թե ինչպես անեք դա: Իսկ եթե չասի, ապա նշանակում է, որ Նա չի ուղղորդել ձեզ նման բանի մեջ»:

Մեկ ուրիշ անգամ բեմահարթակից հայտարարեցի, որ պատրաստվում ենք բացելու Բժշկության դպրոց: Դրանից անմիջապես հետո նամակներ ստացանք մարդկանցից, որոնք նույնպես զգացել էին Աստծո շարժն այդ ոլորտում: Հետևյալ բովանդակությամբ նամակներ էինք ստանում. «Աստված ասել է մեզ, որ Բժշկության դպրոց հիմնենք: Ինչպե՞ս պետք է անենք դա: Խնդրում ենք՝ բացատրեք մեզ ինչպես անել դա»: Մինչդեռ երբ մենք էինք բացում մեր դպրոցը, «ինչպեսի» համար պետք է փնտրեինք Աստծուն: Ուստի աղոթում ու փնտրում էինք Նրան:

Իրականում, այդ մարդկանցից շատերը Հոգում զգացել էին, որ Աստված շարժվում է այդ ուղղությամբ, և կարծել էին, թե Նա ցանկանում է, որ *իրենք* անեն դա: Ժամանակ չէին հատկացրել Աստծուն սպասելուն և Նրա ծրագիրն *իրենց* կամ իրենց եկեղեցու համար ստանալուն:

Երբ մարդիկ զգում են, թե որ ուղղությամբ է Աստված շարժվում, հաճախ կարծում են, թե Նա ցանկանում է, որ իրենք ինչ-որ բան անեն: Իհարկե, միշտ լինում են նաև մարդիկ, որոնք պարզապես ուզում են անել այն, ինչ ուրիշն է անում: Եվ նրանցից շատերը բերանքսիվայր ընկնում են: Ինչո՞ւ. որովհետև «*Եթե Տերը չշինի տունը, զուր են աշխատում նրա շինողները...*» (Սաղմ. 127.1):

Երբ մենք ստանում ենք Աստծո ծրագիրն ու սկսում հետևել դրան, կենսական կարևորություն ունի Նրանում հանգիստ առնել սովորելը:

Շատ հաճախ Աստված իսկապես քրիստոնյաներին ասում է ինչ-որ բան անել, սակայն *նրանք* փորձում են *ինքնուրույն* անել կամ կառուցել դա: Նրանք փորձում են ինքնուրույն և *իրենց ուժերով* իրագործել Աստծո ծրագիրը: Կարծում են, թե իրենք պետք է անեն դա, և ոմանք այդ ծանրության տակ տքնում են այնքան, որ լարվածությունը սպանում է նրանց՝ սրտի կաթված են ստանում կամ երիտասարդ տարիքում մահանում: Իսկ հետո լսում ես, թե ինչպես են մարդիկ ասում. «*Տեսնո՞ւմ եք*. դա նշանակում է, որ բժշկությունը բոլորի համար չէ. այդ մարդը ջանում էր Տիրոջ համար, բայց մահացավ Աստծո կամքը կատարելիս»:

Այդպես չի՛ կարելի. եթե ինքներդ ջանաք իրագործել Աստծո ծրագիրը և չվստահեք Նրան դա անելու, կարող եք ինքներդ ձեզ մահվան հասցնել: Փնտրե՛ք Աստծուն և թո՛ւյլ տվեք, որ Նա Ինքն իրագործի Իր ծրագիրը: Երբ Աստված ասում է, որ ինչ-որ բան անեք, դուք պետք է հանգիստ առնեք այդ ընթացքի մեջ. փա՛ռք Աստծուն: Ես *Նրանում* հանգիստ եմ առնում: Աստվածաշունչն ասում է. «*Բայց մենք՝ հավատացյալներս, մտնում ենք այն հանգստի մեջ...*» (Եբր. 4.3):

4 Ո՞ՐՆ Է ՁԵՐ ՆՊԱՏԱԿԸ

1987 թվականին Իր վաղ առավոտյան այցելության ժամանակ Հիսուսն ասաց ինձ. «Նույնիսկ երբ մարդիկ ստանում են Իմ ծրագիրը, հաճախ նրանց նպատակները սխալ են»:

Ոմանք ստանում են Իմ ծրագիրը: Ես խոսում եմ նրանց հետ, սակայն այդ ծրագիրն իրականացնել փորձելիս սկսում են սխալ նպատակներ հետապնդել: Եվ Ես չեմ կարողանում օրհնել նրանց, քանի որ մարդկանց նպատակներն ու ձգտումները պետք է համահունչ լինեն Իմ ծրագրերին ու նպատակներին, որպեսզի գա Իմ օրհնությունների լիությունը»:

Հնարավոր է ունենալ ճիշտ ծրագիր՝ սխալ նպատակով:

Նույնիսկ մեր եկեղեցական հավաքույթների և ծառայությունների ժամանակ մենք կարող ենք բաց թողնել Նրա լավագույնը: Երբ Հոգու մեջ հափշտակվել էի և Հիսուսի հետ էի, Նա ասաց, որ ծրագիր ու նպատակ ունի ամեն հավաքույթի համար:

«Ինչ վերաբերում է եկեղեցի ունենալուն, եկեղեցական ծառայություններին և հավաքույթներին,- ասաց Հիսուսը,- մարդիկ իրենց ծրագրերն են կազմում, իսկ հետո խնդրում են, որ Ես օրհնեմ դրանք: Եվ Ես օրհնում եմ, որքան կարողանում եմ, սակայն չեմ կարող տալ Իմ լիարժեք հաստատումն ու օրհ-

նությունը, քանի որ նրանք հետևում են իրենց ծրագրերին»:

Հետո Նա խոսեց ինձ հետ տարբեր տեսակի հավաքույթների մասին՝ հավատացյալների, ավետարանչական, բժշկության, ուսմունքային, աղոթքի, երկրպագության և այլն:

Նա ասաց. «Ամերիկյան մշակույթում դուք հետևյալ բացթողումն ունեք. փորձում եք մեկ ծառայության մեջ համատեղել բոլոր տեսակի հավաքույթները, այդ պատճառով չեք հասնում որևէ հավաքույթի լիարժեք ներուժին»:

Ճամբարային հավաքույթի ձևաչափում մենք երբեմն կարողանում ենք համատեղել ծառայությունների տարբեր տեսակներ: Մարդիկ փորձում են նույնն անել եկեղեցական հավաքույթների ձևաչափում. փորձում են վերածել դրանք շարունակական ճամբարային հավաքույթների կամ արշավանման ծառայությունների: Հնարավոր չէ միշտ հավաքվել ճամբարային հավաքույթի ձևաչափով: Հավասարակշռված հոգևոր սննդակարգի համար մարդիկ տարբեր տեսակի հավաքույթների կարիք ունեն: Երբ մենք փորձում ենք բոլորը մեկում անել, ծառայություններից ոչ մեկը չի հաջողվում այնպես, ինչպես պետք է հաջողվեր: Այդպես Սուրբ Հոգին չի կարողանում շարժվել այնպես, ինչպես կցանկանար, քանի որ մարդիկ գործում են ոչ թե Աստծո, այլ իրենց նպատակի համաձայն: Թեև Նա Իր զորությունը կդրսևորի այնքան, որքան նման պայմաններում հնարավոր է, դա չի լինի ամենը, ինչ Աստված ունի մեզ համար:

Սակայն եթե մենք հասկանանք Աստծո նպատակն ամեն հավաքույթի համար և շեշտը դրա վրա դնենք, ապա կհաջողենք հավաքույթներից յուրաքանչյուրը: Ես ասում եմ ձեզ այն, ինչ Տերն է ինձ ասել Իր այցելության ժամանակ: Չգիտեմ՝ ինչպես ձեր պարագայում, բայց որոշ բաներ, որ Նա ասաց ինձ, շտկեցին իմ մտածելակերպը:

ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՅԹՆԵՐ

Կա հավաքույթի մի տեսակ, որը հաճախ չենք տեսնում եկեղեցիներում. խոսքը հավատացյալների հավաքույթների մասին է: Առաջին եկեղեցում մարդիկ եկեղեցի էին գնում, որովհետև տալու ինչ-որ բան *ունեին*: Այսօր մարդկանց մեծ մասը եկեղեցի է գնում՝ ինչ-որ բան *ստանալու*: Նորմալ է, երբ եկեղեցի եք գնում՝ ստանալու, սակայն, իրականում, քրիստոնյաները ինչ-որ բան պետք է բերեն իրենց հետ, երբ գալիս են եկեղեցի:

Սուրբ գրքում հատուկ նշված են հավատացյալների հավաքույթների մասին:

Ա ԿՈՐՆԹԱՑԻՍ 14.26–29
26 Ուրեմն ի՞նչ է, եղբայրնե՛ր, երբ մեկտեղ ժողովվեք, ձեզնից ամեն մեկը սաղմոս ունի, վարդապետություն ունի, հայտնություն ունի, լեզու ունի, թարգմանություն ունի, ամենը շինության համար լինի:
27 Եթե մեկը լեզվով խոսի, թող երկու, և եթե էլ ավելի շատ՝ երեք լինեն, մեկը մյուսից հետո, և մեկը թող թարգմանի:
28 Բայց եթե թարգմանող չկա, թող լռի եկեղեցում. թող իր համար և Աստծո հետ խոսի:
29 Բայց մարգարեներից թող երկուսը կամ երեքը խոսեն, և ուրիշները քննեն:

Այստեղ խոսվում է ոչ թե ինչ-որ տեսակի ծառայության, այլ հավատացյալների հավաքույթի մասին: Ներկա են միայն հավատացյալները. «*...Եղբայրնե՛ր... երբ մեկտեղ ժողովվեք...*» (խ. 26):

Ա Կորնթացիս 14.23–25-ը դա ավելի հասկանալի է դարձնում:

Ա ԿՈՐՆԹԱՑԻՍ 14.23–25
23 Արդ եթե բոլոր եկեղեցին մեկ տեղ գա, և ամենքը լե-

զուներով խոսեն, և տգետներ կամ անհավատներ մտնեն *այնտեղ*, մի՞թե չեն ասի, թե դուք գժված եք:
24 Բայց եթե ամենը մարգարեանան, և մի անհավատ կամ տգետ գա մտնի, նա ամենից կհանդիմանվի, ամենից կքննվի:
25 Եվ այսպես նրա սրտի գաղտնիքը հայտնի կլինի, և ապա, երեսի վրա ընկած, Աստծուն երկրպագություն կանի՝ խոստովանելով, թե արդարև Աստված ձեր մեջ է:

Այս հատվածում տեսնում ենք, որ մեկտեղ են հավաքվել *հավատացյալները*: Անհավատները կարող են գալ, կարող են չգալ: Եթե գան, ապա եկեղեցում Աստծո ներկայության դրսևորումը այնքան մեծ պետք է լինի, որ ընկնեն Նրա առջև:

Հավաքույթի նման տեսակին ամենամոտը տեսել եմ 1939 և 1940 թվականներին Տեխաս նահանգի Ֆարմերսվիլ քաղաքի փոքրիկ եկեղեցում, որտեղ հովիվ էի:

Հարանվանությունը հոգեգալստական էր: Ես նրանց երիտասարդ հովիվն էի և միայն վերջերս էի մկրտականներից անցել հոգեգալստականներին:

Կարող եմ ասել, որ 1939 և 1940 թվականներին հավանաբար տասներկու անգամից ավելի չեմ *քարոզել* կիրակի առավոտյան հավաքույթներին. փոխարենը մենք ունենում էինք հավատացյալների հավաքույթներ:

Հոգեգալստական էի դարձել 1939-ին, իսկ այն ժամանակ եթե ամեն ծառայությանը վկայության հավաքույթ չէր անցկացվում, դա շեղում էր համարվում: Այդ օրերին մենք Հոգու այնպիսի շարժ վերապրեցինք, որ ներկայիս խարիզմատները չեն պատկերացնի. պետք է վերադառնալ դրան:

Այդ եկեղեցում կիրակնօրյա առավոտյան հավաքույթներին հիմնականում մասնակցում էին հավատացյալները՝ եկեղեցու անդամները: Ես պարզապես նստում էի բեմահարթակին և հարանվանությանն ասում. «Ես պատրաստվում եմ այս

հավաքույթը հանձնելու Սուրբ Հոգուն. պարզապես վեր կացեք և փոխանցեք այն, ինչ Սուրբ Հոգին տվել է ձեզ»: Իհարկե, եթե հավաքույթը սխալ ընթացք էր ստանում, ես պատասխանատվություն էի կրում դրա համար, վեր էի կենում, դադարեցնում այն և վերադարձնում ճիշտ հունին:

Ա Կորնթացիս 14.26-ում ասվում է. *«...Երբ մեկտեղ ժողովվեք, ձեզնից ամեն մեկը սաղմոս ունի, վարդապետություն..., հայտնություն...*, *լեզու..., թարգմանություն.... ամենը շինության համար լինի»:* Ո՞ր հավատացյալները պետք է ինչ-որ բան ունենան Սուրբ Հոգուց. բոլորը: Իհարկե, այս տարբերակն ավելի լավ է գործում փոքր եկեղեցիներում, քան մեծերում: «*Ձեզնից ԱՄԵՆ ՄԵԿԸ սաղմոս ունի, վարդապետություն ունի, հայտնություն ունի, լեզու ունի, թարգմանություն ունի. ամենը շինության համար լինի»* (խ. 26):

Ես իմ հարանվանությանն ասում էի. «Տվեք այն, ինչ Սուրբ Հոգին տվել է ձեզ: Եթե Սուրբ Հոգին ձեզ երգ է տվել, ապա սկսեք երգել: Եթե լեզուներ է տվել ամբողջ Մարմնի համար, ապա խոսեք դրանցով: Եթե Սուրբ Հոգին ձեզ թարգմանություն է տվել, ապա թարգմանեք: Եթե մարգարեություն ունեք, մարգարեացեք: Տվեք այն, ինչ Սուրբ Հոգին տվել է ձեզ»:

Հիշեք, որ մարգարեությունը *ներշնչված խոսք* է: Քանի որ մարգարեությունը խոսքը խոսելն է, ապա մարգարեության տարր կա վկայություններում: Հավատացյալների այդ հավաքույթների ժամանակ մարդիկ վեր էին կենում և մարգարեանում: Թեև երբեմն սկսում էին խոսել բնական բաներից, ներշնչվում էին, և նրանց վկայությունն օրհնություն էր դառնում բոլորի համար: Խոսելու ընթացքում բոլորն ինչ-որ բան էին ստանում:

Օրինակ՝ հարանվանությունում մի շատ ամաչկոտ մարդ կար: Երբեմն Աստծո Հոգին իջնում էր նրա վրա, ու նա սկսում էր պարել՝ առանց երաժշտության ու առանց երգելու: Այդ

պարն օրինություն էր դառնում բոլորի համար: Այն ժամանակ միայն մեկ դաշնամուր ունեինք: Ինչ-որ մեկը սկսում էր երգել, իսկ դաշնակահարը սկսում էր նվագել:

Մեր նստարանները դասավորված էին երեք շարքով: Լինում էր, երբ ամբողջ հարանվանությունը լուռ նստած ակնածանքով սպասում էր Աստծուն: Երբեմն Աստծո Հոգին այնպես էր շարժվում, որ մի հատվածում նստած մարդիկ, առանց երաժշտության, միասին վեր էին թռչում ու սկսում պարել, այնպես, կարծես ինչ-որ մեկն առաջնորդում էր նրանց: Չկար երաժշտություն, չկար նաև որևէ մեկը, որ կառաջնորդեր նրանց, սակայն նրանք միասին սկսում էին այնպես պարել, ասես խմբավար ունեին:

Իսկ ես, բեմահարթակին նստած, ժպտում էի ու հետևում, թե ինչպես էր շարժվում Սուրբ Հոգին: Նրանք բոլորը միաժամանակ դադարում էին պարելուց, և մյուս հատվածն էր ոտքի կանգնում ու սկսում պարել՝ առանց խմբավարի: Հետո նրանք էլ միաժամանակ նստում էին, ասես Անտեսանելի Մեկն ուղղորդում էր նրանց: Սուրբ Հոգին էր ուղղորդողը: Հետո կենտրոնական հատվածում նստածներն էին վեր թռչում, միասին պարում և միաժամանակ դադարում պարելուց ու զբաղեցնում իրենց տեղերը: Պատահում էր, որ ինչ-որ մեկը վեր էր կենում և լեզուներով ուղերձ տալիս: Մեծ մասամբ ես էի թարգմանում, քանի որ բեմահարթակին էի, և մարդիկ իմ ձայնն ավելի լավ էին լսում: Մերթընդմերթ խրախուսում էի, որ մեկ ուրիշը ոտքի կանգներ ու թարգմաներ ուղերձը:

Հավատացյալների այդ հավաքույթների ժամանակ Աստված ամենաանսովոր կերպերով էր շարժվում. պատճառն այն էր, որ մենք իրական երկրպագություն էինք ունենում ծառայությունների ժամանակ՝ ճշմարիտ երկրպագություն: Եվ զգույշ էինք՝ պահելու մեր երկրպագությունը Հոգու մեջ և

չանցնելու մարմնավորին: Մենք ցուցադրական բաներ չէինք անում, Հոգին էր *դրսևորվում*: Մենք չպետք է ցուցադրություն անենք, սակայն պետք է թույլ տանք, որ *Հոգին* դրսևորի Իրեն: Հասկանո՞ւմ եք տարբերությունը:

Ծառայություններից ոչ մեկը մյուսին նման չէր: Որոշ ծառայությունների ժամանակ Սուրբ Հոգին այնպես էր գալիս ու լցնում սրահն Իր ներկայությամբ, որ ոչ մեկը չէր շարժվում ու ոչ մի խոսք չէր ասում. մարդիկ, պարուրված սուրբ երկյուղով, վախենում էին շարժվելուց կամ խոսելուց:

Մենք մանուկների սրահ չունեինք: Փոքրիկ երեխաներն իրենց մայրերի գրկում էին կամ հատակին կամ նստարանին քնած: Ավելի մեծ երեխաները նստած էին իրենց մայրերի կողքին: Եվ այդ ընթացքում, երբ մենք մեկուկես ժամ լռության մեջ նստած էինք, ոչ մի երեխա լաց չէր լինում և չէր շարժվում:

Աստծո ներկայությունը լցնում էր Իր տաճարը: Օ՜, մենք այդ ներկայությունը ամիսներ շարունակ զգում էինք:

Ժամանակ առ ժամանակ չփրկված մարդիկ էին գալիս: Հիշում եմ, մի անգամ բոլորս լուռ նստած էինք Աստծո ներկայության մեջ, երբ բեմահարթակից տեսա, թե ինչպես բացվեց սրահի դուռը, և մի մարդ ներս մտավ:

Այդ մարդը սովորաբար կիրակի առավոտյան եկեղեցի էր բերում իր կնոջը, իսկ ինքը գնում էր խաղատուն: Կեսօրին, երբ արդեն վերջացրած էինք լինում ծառայությունը, նա վերադառնում էր կնոջ հետևից:

Ավելի ուշ նա մեզ պատմեց, թե ինչ էր տեղի ունեցել այդ օրը: Նա մեքենան տարել էր կայանատեղի, իջեցրել էր մեքենայի ապակին և ձայն չէր լսել: Ուստի դուրս էր եկել մեքենայից և մոտեցել պատուհանին: Մեր եկեղեցաշենքի պատուհանների ապակիները ներկված չէին. ներկել էինք միայն ստորին հատվածը: Պատուհանից էլ չէր կարողացել տեսնել,

թե ինչ էր կատարվում ներսում, ուստի ականջն էր մոտեցրել պատուհանին, սակայն ոչինչ չէր լսել:

«Մտածեցի, որ հափշտակություն է տեղի ունեցել, ու բոլորը վեր են առնվել, քանի որ բոլորի մեքենաները տեղում էին»,- պատմում է նա:

Հետ էր գնացել և նստել մեքենայի մեջ: Այդպես անցել էր մեկ ժամ: Արդեն ժամը մեկն էր, բայց նա ոչ մի ձայն չէր լսել:

Մենք բոլորս նստած էինք Աստծո ներկայության մեջ՝ կարծես վախենալով շարժվելուց: Բոլորիս կլանել էր սուրբ երկյուղը, սուրբ մթնոլորտը:

Ի վերջո այդ մարդը որոշել էր *մտնել սրահ ու տեսնել, թե արդյոք հափշտակություն տեղի չի ունեցել*: Նա եղել էր եկեղեցում և լսել էր քարոզ հափշտակության մասին. բացի այդ՝ կինն էր պատմել նրան դրա մասին:

Բեմահարթակին նստած՝ ես միակ մարդն էի, որ տեսա, թե ինչպես նա բացեց դուռն ու շուրջը նայեց:

Շենքը կիսով չափ լիքն էր. մարդկանց մեծ մասը նստած էր առջևի հատվածում: Վերջին նստարանները դատարկ էին, ուստի նա նստեց ամենավերջին նստարանին՝ որքան հնարավոր էր դռանը մոտ:

Ոչ ոք չէր խոսում, ոչ մի երեխա չէր շարժվում, ոչ մի նորածին չէր ճչում, և այդպես երկու ժամ: Սուրբ Հոգու այդ շարժը սկսվել էր առավոտյան ժամը տասնմեկից մի փոքր անց, իսկ այդ մարդը ներս մտավ մոտ մեկն անց տասնհինգին:

Այդպես անցավ ևս տասնհինգ րոպե: Ես հետևում էի, թե ինչպես էր նա շուրջբոլորը նայում: Հանկարծ սկսեց սաստիկ ցնցվել: Վեր կացավ և հարբածի նման միջանցքով քայլեց դեպի բեմահարթակ՝ ամբողջ ընթացքում դողալով, և Աստծուն կանչելով՝ ընկավ խորանի մոտ:

Ոչ ոք չմոտեցավ խորանին, որ օգներ նրան աղոթելու: Բո-

լորս պարզապես նստած էինք: Մենք հասկանում էինք, որ այն, ինչ Աստված սկսել էր նրանում, կկարողանար ավարտել:

Դա միակ դեպքը չէր. այդպիսի բաներ հաճախ էին պատահում: Գրեթե ամեն անգամ, երբ չփրկված մարդ էր գալիս կիրակնօրյա առավոտյան հավաքույթին, նրանց հետ նույն բանն էր կատարվում: Սկսում էին դողալ այնպես, ասես մրսում էին: Ոչ ոք ոչինչ չէր ասում նրանց, և սակայն, երբ Աստծո զորությունն իջնում էր նրանց վրա, վեր էին կենում ու մոտենում խորանին:

Այսօր մենք շատ բան չգիտենք Աստծո զորության դրսևորումների մասին: Երբեմն տեսնում ենք, թե ինչպես են գործում Հոգու պարգևները, սակայն Աստված կամենում է, որ մենք ամենն ունենանք. Նա ցանկանում է, որ Իր ամբողջական ծրագիրն ունենանք:

Հուլիսին Իր այցելության ժամանակ Տերը խոսեց ինձ հետ Իր զորության դրսևորման մասին: Նա խոսեց քրիստոնյաների տարբեր տեսակի հավաքույթների մասին և հատուկ նշեց հավատացյալների հավաքույթները:

Եթե կրկին հովիվ լինեի, ապա ժամանակ առ ժամանակ կանցկացնեի հավատացյալների հավաքույթներ: Դրանք նախատեսված չէին լինի լայն հանրության համար: Այն ժամանակ, երբ միայն հավատացյալներն են ներկա, կարող են տեղի ունենալ բաներ, որոնք չպետք է տեղի ունենան հանրության համար բաց հավաքույթներին: Սակայն եթե այնպես պատահի, որ ինչ-որ մեկը, ով փրկված չէ, գա նման հավաքույթի, ապա կփրկվի, ինչպես մարդիկ փրկվում էին Ֆարմերսվիլում՝ հանդիպելով Աստծո ներկայությանը, ինչպես գրված է Ա Կորնթացիս 14-ում:

ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ՀԱՎԱՔՈՒՅԹՆԵՐ

Ֆարմերսվիլում մենք կիրակնօրյա առավոտյան հավաքույթները կոչում էինք հավատացյալների հավաքույթներ, քանի որ դրանց մասնակցում էին միայն քրիստոնյաները:

Կիրակի երեկոյան, սակայն, այցելուներն էին գալիս ու լցնում շենքը, նույնիսկ դրսում էին կանգնում և դռներից նայում: Կիրակնօրյա երեկոյան հավաքույթներին ավելի շատ մեղավորներ էին լինում, քան սրբեր:

Ես նախապես ասում էի մեր հարանվանությանը. «Այս երեկո գալիս ենք՝ մտածելով մեղավորների մասին: Չենք գալիս Աստծուն երկրպագելու կամ օրհնվելու: Առավոտյան օրհնվել ենք: Սա հավատացյալների հավաքույթ չէ: Որոշ բաներ, որոնք տեղի են ունեցել առավոտյան, պետք չէ, որ տեղի ունենան այս երեկոյան. սա ավետարանչական հավաքույթ է: Մեր նպատակը թռչկոտելն ու գոչելը չէ, այլ չփրկվածներին օգնելը»:

Լավ երաժշտություն էինք ունենում կիրակի երեկոներին: Բոլորն են գնահատում լավ երգեցողությունը: Լինում էին մեներգեր կամ խմբերգեր:

Մարդիկ ասում էին, որ քաղաքում ամենալավ երաժշտությունը մեզ մոտ է: Նրանք տեսնում էին Սուրբ Հոգու օծությունը:

Ամեն կիրակի երեկոյան ես ավետարանչական ուղերձ էի քարոզում, և մարդիկ փրկվում էին, լցվում Սուրբ Հոգով ու բժշկվում: Դա սովորական երևույթ էր. մեզ մոտ մշտական արթնություն էր:

Դրսից եկող մարդիկ, նույնիսկ մեղավորներն ասում էին մեզ. «Դռնից ներս մտնելիս զգալի է Աստծո ներկայությունը»:

Պատճառն այն էր, որ առավոտյան՝ հավատացյալների հավաքույթի ժամանակ, մենք փոխել էինք մթնոլորտը:

ԱՂՈԹՔԻ ՀԱՎԱՔՈՒՅԹՆԵՐ

Մենք իսկապես պետք է վերստին սկսենք եկեղեցիներում աղոթքի հավաքույթներ անցկացնել: Այն, ինչ մարդիկ այսօր կոչում են աղոթքի հավաքույթ, ներառում է քիչ աղոթք կամ առհասարակ ոչ մի աղոթք չի ներառում: Ի՞նչ է նշանակում «աղոթքի հավաքույթ»: Նշանակում է, որ մարդիկ հավաքվել են աղոթելու համար: Եթե որոշել եք կոչել դա աղոթքի հավաքույթ, ապա հավաքվելու նպատակը աղոթքը պետք է լինի, և ժամանակի մեծ մասը պետք է հատկացնել աղոթքին:

Հիշում եմ՝ մեր սեմինարներից մեկից հետո մի կին հարցրեց, թե արդյոք կարող է խոսել ինձ հետ: Նա ասաց. «Գուցե կարողանաք օգնել ինձ: Ես պատկանում եմ մի եկեղեցու, որտեղ մենք ունենք ամենշաբաթյա աղոթքի հավաքույթներ: Սակայն չեմ հասկանում, թե ինչու են դրանք կոչվում աղոթքի հավաքույթներ, երբ այդ հավաքույթների ընթացքում հազվադեպ ենք աղոթում»:

Եթե մարդիկ աղոթքի հավաքույթների ժամանակ չեն աղոթում, նրանց ծրագրերն ու նպատակները խառնված են: ««Աղոթքի հավաքույթի» փոխարեն դրանք պետք է կոչվեին «մարգարեության հավաքույթներ», քանի որ միակ բանը, որ մասնակիցներն անում են, իրար մարգարեական խոսքեր հաղորդելն է: Արդյոք սա ճի՞շտ է»:

«Ի՞նչ նկատի ունեք՝ հարցնելով, թե արդյոք դա ճիշտ է»,- ասացի ես:

«Դե, օրինակ՝ բոլորն անընդհատ ինչ-որ վատ բաներ են մարգարեանում ինձ համար»:

«Ի՞նչ են մարգարեացել»,- հարցրի:

«Մոտ տասնութ ամիս առաջ մարգարեացան, որ մայրս տասներկու ամսվա ընթացքում մահանալու է»:

«Մահացա՞վ»:

«Ո՛չ. նրա առողջության հետ ամեն բան կարգին է»:

«Դրա վերաբերյալ դատողություն անելը հեշտ է»,- ասացի ես: Մեկ աչքով և թույլ զգայարաններով ցանկացած մեկը կարող էր ասել, որ այդ մարգարեությունն Աստծուց չէր՝ հատկապես հաշվի առնելով այն, որ նրա մայրը դեռևս կենդանի էր և առողջ:

«Հետո մարգարեացան, որ ամուսինս լքելու է ինձ գալիք վեց ամիսների ընթացքում»,- ասաց նա:

«Լքե՞ց»:

«Ո՛չ, չլքեց: Նա չի հասկանում կատարվող այս բոլոր բաները, սակայն հրաշալի մարդ է: Ես սիրում եմ նրան: Նա էլ ինձ է սիրում»:

«Դրա վերաբերյալ դատողություն անելը ևս հեշտ է»,- ասացի:

Չգիտեմ, թե ինչու մարդիկ չեն աղոթում, եթե որոշել են աղոթքի հավաքույթ անցկացնել: Հասկացել եմ, որ լավ է սկզբում մի փոքր փառաբանել՝ Աստծուն միանալու համար: Աստծուն փառաբանելն ու երկրպագելն օգնում են մտնելու աղոթքի մեջ: Սակայն եթե աղոթքի հավաքույթի ամբողջ ընթացքում փառաբանեք, ապա բաց կթողնեք Աստծո ծրագիրն ու նպատակը այդ հավաքույթի համար:

Եվ ոչ միայն պետք է անցկացնել այդ հավաքույթներն աղոթելու նպատակով, այլև հավաքույթին մասնակցող յուրաքանչյուր ոք պետք է հստակ իմանա, թե ինչի համար է աղոթում:

Հիշում եմ մի բան, որ արեցի իմ ծառայության մեջ 1949 թվականին, երբ թողեցի իմ վերջին եկեղեցին և անցա դաշտային պայմաններում ծառայության: Քարոզում էի հիմնականում Ամբողջական Ավետարանի եկեղեցիներում, իսկ

այդ օրերին Ամբողջական Ավետարանի եկեղեցիներում սովորույթ կար հավաքույթը փակելու՝ ամբողջ հարանվանությանը հրավիրելով խորանի մոտ աղոթելու: Թո՛ւյլ տվեք ասել, որ այսօր մենք ավելի շատ նման հավաքույթների կարիք ունենք: Դա կկրճատեր եկեղեցու խորհրդատվությունների իննսունինը տոկոսը, քանի որ մարդիկ իրենց խնդիրների պատասխանները կստանային աղոթելիս:

Ես միտումնավոր հարցուփորձ էի անում խորանի մոտ կանգնած մարդկանց: Գնում էի նրանց մոտ, թփթփացնում նրանց ուսերին ու հարցնում. «Ի՞նչ եք անում այստեղ՝ խորանի մոտ»:

«Օ՜, պարզապես աղոթում եմ»:

«Ինչի՞ համար եք աղոթում»:

«Չգիտեմ»:

Եթե մարդիկ չգիտեն, թե ինչի համար են աղոթում, ինչպե՞ս կիմանան, թե արդյոք պատասխան ստացել են: Այո՛, կա աղոթքի այնպիսի տեսակ, երբ մենք պարզապես Աստծուն ենք սպասում: Սակայն եթե տվյալ պարագայում նրանք դա էին անում, ապա պետք է ասեին. «Որևէ կոնկրետ բանի համար չեմ աղոթում, պարզապես հաղորդակցվում եմ Հորս հետ»:

Քանի որ այդ մարդիկ իսկապես չգիտեին, թե ինչ էին անում խորանի մոտ, նրանց նպատակները սխալ էին, և նրանք անգամ տեղյակ չէին դրանից: Երբ մարդու նպատակները սխալ են, Աստծո օրհնությունները միայն սահմանափակ չափով են հոսում: Երբ դրանք *Աստծո* ծրագրի հետ համընթաց չեն, Աստծո օրհնությունները և Նրա հաստատման կնիքը կարող են տրվել խիստ սահմանափակ չափով: Ստացե՛ք Աստծո ծրագիրը: Այն լավագույնն է:

Ուստի, եթե կարևոր է, որ *անհատներն* իմանան, թե ինչի համար են աղոթում, որքա՞ն ավելի կարևոր է, որ մեր մտքում

նպատակ ունենանք, երբ հավաքվում ենք աղոթելու *որպես եկեղեցի*:

Ես ահռելի արդյունքներ տեսա իմ ծառայության մեջ որպես հովիվ, երբ իմ եկեղեցին միաձայն մեկ նպատակ էր հետապնդում աղոթքի մեջ: Թո՛ւյլ տվեք պատմել ձեզ մի այդպիսի դեպք:

Վերջին եկեղեցին, որ հովվում էի, անընդհատ աճում էր: Այդպես պետք է լինի ցանկացած եկեղեցում: Մենք պետք է շարունակաբար հետևենք Աստծո ծրագրին և ձգտենք դրան: Իսկ դա աճի աստվածաշնչյան օրինաչափությունն է թե՛ եկեղեցու համար և թե՛ անհատի կյանքում:

Պատճառը, թե ինչու էր այս եկեղեցին անընդհատ աճում, այն էր, որ մենք շարունակաբար փորձում էինք հետևել Աստծո ծրագրին և ձգտում էինք դրան: Օրինակ՝ ուզում էինք արթնություն ունենալ, ուստի անցկացնում էինք հավաքույթներ, որոնց *նպատակը* ավետարանչությունն էր՝ կորածներին փրկության բերելը: Եկեղեցում միշտ ունենում էինք ծոմապահության օրեր և աղոթքի հավաքույթներ՝ նախապատրաստվելու նման հատուկ հավաքույթներին: Իրականում, մենք ավելի շատ կրկնօրինակում էինք այն, ինչ ուրիշներն էին անում: Եթե ուշադիր չլինենք, ապա կարող ենք սովորության համաձայն անել այն, ինչ ճիշտ է, և վերածել դա կրոնական ծիսակարգի: Եթե այդպես անենք, ապա որևէ արդյունք չենք ստանա և մեծ արժեք չենք ստեղծի:

Քանի որ նկատեցի, որ մենք քիչ թե շատ հետևում էինք կրոնական ձևաչափին, հարանվանությանն ասացի. «Չեմ ուզում, որ նույնիսկ աղոթեք գալիք արթնության համար»: Արեցի դա, որպեսզի մարդիկ դուրս գային կրոնական սովորությունից:

Պատրաստվում էինք ավետարանչական հավաքույթ անց-

կացնելու: Արթնություն. դա էր մեր հիմնական նպատակը: Մենք չէինք պատրաստվում հավաքվելու՝ Աստծուն երկրպագելու, հավատացյալների հավաքույթ անցկացնելու կամ նույնիսկ ինքներս օրհնվելու համար: Այդ հավաքույթը միայն մեկ նպատակ ուներ, և դա կորածներին փրկության բերելն էր:

Ուստի հարանվանությանն ասացի. «Վաղը երեկոյան, երբ գաք աղոթքի հավաքույթին, թղթի վրա գրե՛ք այն անձնավորության անունը, որին ուզում եք փրկված տեսնել արթնության այս հավաքույթի ընթացքում: Եթե կին ու ամուսին են, ապա երկուսի անունն էլ գրե՛ք: Եթե տվյալ անձնավորությունը նահանջել է, կամ նահանջողները կին ու ամուսին են, գրե՛ք նրանց անունները: Նաև ավելացրե՛ք «Ն» տառը նրանց անունների կողքին, որոնք նահանջել են, որպեսզի մենք իմանանք այդ մասին: Նահանջածի համար մի փոքր այլ կերպ է պետք աղոթել, քան այն անձնավորության, որը երբևէ վերստին ծնված չի եղել»:

Սովորաբար Տեխասի արևելքում նման բան տեղի չի ունենում, սակայն հաջորդ երեկո ցրտեց, և ձյուն ու մանր կարկուտ եկավ: Տեխասցիները սովոր չեն նման եղանակի, այդ պատճառով տնից դուրս չեն գալիս: Եվ աղոթքի հավաքույթին չեկավ այնքան մարդ, որքան որպես կանոն գալիս էին, բայց ոմանք ամեն դեպքում եկան: Ես հավաքեցի բոլոր թղթերը, որոնց վրա գրված էին անունները, և ասացի. «Նախ և առաջ եկե՛ք աղոթենք Աստծո Խոսքի համաձայն. ի վերջո մեղավորների փրկությունը Աստծո ծրագիրն է»:

Երաժշտություն, փառաբանություն կամ երկրպագություն չկար, քանի որ դա չէր այդ հավաքույթի նպատակը. նպատակն աղոթքն էր: Ուստի ես ասացի հարանվանությանը. «Եկե՛ք միաբանենք մեր հավատքն այն բանի շուրջ, որ այս մարդիկ արթնության այս հավաքույթի ժամանակ հայտ-

նություն կստանան, որ Հիսուսն է Փրկիչը: Աստվածաշունչն ասում է. «*...եթե ձեզնից երկուսը երկրի վրա միաբանվեն, ամեն ինչ բանի համար որ խնդրեն, կլինի նրանց Իմ Հորից, որ երկնքում է*» (Մատթ. 18.19):

Մենք աղոթեցինք բոլորի համար անուն առ անուն. ոմանց համար՝ միաբան համաձայնությամբ, ոմանց համար՝ ինչպես Հոգին առաջնորդեց, մյուսների համար՝ լեզուներով: Միաբան աղոթքից և աղոթքի պատասխանը հռչակելուց հետո ասացի. «Հիմա եկե՛ք շնորհակալություն հայտնենք Աստծուն պատասխանի համար: Այն բանից հետո, երբ շնորհակալություն կհայտնենք, այլևս չաղոթեք այս հարցի համար: Երբ մտածեք այդ հարցի շուրջ, պարզապես բարձրացրե՛ք ձեր ձեռքերը դեպի երկինք և *փա՛ռք տվեք* Աստծուն պատասխանի համար»:

Աստծո ծրագրին հետևելը հարյուր տոկոս արդյունք է տալիս: Մենք հստակ գիտեինք, թե ինչի համար էինք հավաքվել և այդ նպատակին էինք ձգտում: Բոլոր նրանք, որոնց համար աղոթել էինք, փրկվեցին արթնության հավաքույթի ժամանակ՝ բացի երկուսից: Իսկ այդ երկուսը փրկվեցին մինչև տարվա վերջը:

Ես թողեցի եկեղեցին, մինչև տարին կբոլորեր. այդ ժամանակ միայն մեկն էր մնացել այն մարդկանցից, որոնց համար աղոթել էինք, և դեռ չէր փրկվել: Սակայն մինչև տարվա վերջը, երբ քարոզում էի Կալիֆոռնիայում, այդ մարդն ու նրա կինը հավաքույթից հետո մոտեցան ինձ: Նրանք տեղափոխվել էին այնտեղ: Եվ հինգշաբթի օրը՝ 1999 թվականի փետրվարի 25-ին (ձմեռային աստվածաշնչյան սեմինարի առավոտյան ծառայությունից երեսուն րոպե անց), այդ մարդն ասաց ինձ. «Եղբա՛յր Հեգին, ցանկանում եմ՝ իմանաք, որ հիմա ես Ձեր եղբայրն եմ: Վերստին ծնունդ եմ ստացել»: Դա նշանակում էր, որ մինչև տարվա վերջը մենք հարյուր տոկոս հաջողութ-

յուն էինք գրանցել՝ աղոթելով Աստծո ծրագրի համաձայն: Երբևէ չէի լսել, որ աղոթքի հավաքույթը նման արդյունքներ ունենար: Սակայն ինչպես տեսնում եք, մենք համընթաց էինք Աստծո ծրագրին:

Դժբախտաբար, ոչ բոլոր հովիվներն են պատրաստակամ վճարելու այն գինը, որն անհրաժեշտ է եկեղեցում ճիշտ աղոթքի հավաքույթներ անցկացնելու համար: Մեկ անգամ մի հովվի եկեղեցում հավաքույթ էի անցկացնում, և նա հարցրեց ինձ. «Եղբա՛յր Հեգին, ի՞նչ կարող եմ անել, որ հարանվանությունս աղոթի»:

Ես երբեք խնդիր չէի ունեցել իմ ժողովրդին աղոթքի հրավիրելու հարցում: Պատասխանեցի. «Ինքնե՛րդ աղոթեք, օրինա՛կ ծառայեք նրանց»:

«Օ՛»,- ասաց նա, շրջվեց և հեռացավ: Նա չափազանց զբաղված էր այլ բաներով, որ աղոթեր: Դա նման է նրան, որ ծնողները երեխային արգելում են ինչ-որ բան անել և ճիշտ նույն բանն անում են երեխայի աչքի առջև: Երեխան անելու է այն, ինչ ծնողն է անում, վարվելու է այնպես, ինչպես ծնողն է վարվում:

Աղոթքն Աստծո ծրագիրն է:

Սակայն մարդիկ փնտրում են մարդկային ծրագիր, մարդկային բանաձև, «արագ լուծումների» մարդկային սխեմա:

Աստված չունի «արագ լուծումների» ծրագրեր: Վերստին ծնունդը միանգամից է տեղի ունենում, իսկ հոգևոր աճը՝ ոչ: Հոգևոր զարգացման համար ժամանակ է պահանջվում:

Մենք «արագ սննդի» ժամանակներում ենք ապրում: Միակ բանը, որ անհրաժեշտ է՝ մեքենան վարել արագ սննդի կետի պատուհանի մոտ և վերցնել սնունդը: Մենք իննսունինը տոկոս զեղչերի օրերում ենք ապրում: Բայց Աստծո մոտ չկան իննսունինը տոկոս զեղչեր: Աստծո բաները նույն գինն

ունեն, ինչ տարիներ առաջ: Դրանց գինը երբեք չի բարձրանում, իսկ արժեքը չի իջնում:

Հովիվներ, ստացեք Աստծո ծրագիրը: Ծնկի՛ իջեք և մնացեք այդ վիճակում այնքան, մինչև կպարզեք, թե որն է Նրա նպատակը ձեր կյանքի ու ծառայության համար:

Հովիվներն իրենց հոտի համար օրինակ ծառայելու պատասխանատվություն են կրում. նրանք պատասխանատու են նախապատրաստվելուն ժամանակ հատկացնելու համար, որպեսզի կարողանան հետևել Աստծո Հոգու շարժին: Շատ հովիվների հետ հետևյալն է պատահում. երբ Աստված սկսում է շարժվել նրանց եկեղեցիներում, նրանք հետ են քաշվում գերբնականից՝ այն ճիշտ ուղղորդելու և իրենց եկեղեցու համար Աստծո ծրագիրն ու նպատակը բացահայտելու փոխարեն: Աստծո ծրագրին չհետևելը և Նրա հետ համընթաց չշարժվելը սպանում են Հոգու շարժը, ինչից հետո եկեղեցին դանում է չոր, մեռած, ձանձրալի ու բաժանվում է երեք-չորս ուղղության:

Որոշ հովիվներ վախենում են Աստծո Հոգու շարժին հետևելուց: Նրանք ասում են. «Ես վախենում եմ մոլեռանդությունից և անզուսպ կրակից»: Կարգուկանոնի խախտվելու դեպքում տարիներ շարունակ հետևյալն եմ ասել. «Եթե եկեղեցում անզուսպ կրակ է բռնկվել, ապա իմացեք, որ կան բավականաչափ թաց ծածկոցներ՝ այն հանգցնելու համար»: Անզուսպ կրակից բողոքող այդ մարդկանց մեծ մասը երբևիցե կրակ անգամ չի ունեցել: Համամիտ եմ այս խոսքերին, որ մի ծառայող է ասել. «Ինձ համար ավելի նախընտրելի է մի փոքր անզուսպ կրակ ունենալ և Աստծո շարժը, քան ոչ մի կրակ և գերեզմանային կարգուկանոն»:

Եթե դուք հովիվ եք, ապա ի՞նչ պետք է անեք, երբ աղոթքի խումբը դուրս է գալիս կագուկանոնից: Պետք է վարվեք

ճիշտ այնպես, ինչպես ասացի՝ անձամբ ձեր ձեռքը վերցնեք ստեղծված իրավիճակն ու ճիշտ ուղու վրա դնեք այն: Մենք այդ զորությունը դրել էինք ճիշտ ուղու վրա: Ինչ վերաբերում է հրաշքներին, ասեմ, որ ամեն շաբաթ հրաշքներ էինք ունենում: Մարդիկ էին փրկվում, լցվում Սուրբ Հոգով, բժշկվում. զարմանահրաշ երևույթները մեզ համար սովորական էին:

Նույնիսկ եկեղեցու անդամ չհանդիսացող մարդիկ էին զանգահարում մեզ աղոթքի խնդրանքով: Ես և կինս աղոթում էինք մարդկանց համար, որոնք մեր եկեղեցու անդամ չէին և երբևէ չէին լսել մեր քարոզներից ոչ մեկը: Նրանք գալիս էին մեզ մոտ և ասում. «Այսինչ քույրիկը ասել է ինձ, թե ինչպես է Աստված օգտագործում ձեզ, և ես մտածեցի, որ եթե աղոթեք ինձ համար, կբժշկվեմ»: Աստված ամեն անգամ բժշկում էր: Այնքան էլ ես չէի պատճառը նրա, որ Աստված այդ կերպ օգտագործում էր ինձ և նման զարմանահրաշ կերպով գործում մեր մեջ: Դա այն աղոթքախումբն էր, որն աղոթքով թիկունքիս կանգնած էր:

Իրականում, այն ժամանակ շատ բան չգիտեի: Զարմանալի է, որ սարկավագներն ինձ չէին ասում, որ վերադառնամ իրականություն և ոտքերս գետնից շատ չկտրեմ: Հարցն այն է, որ ես պաշտպանված էի աղոթքախմբով, որը գիտեր ինչպես աղոթել:

Հովիվնե՛ր, հետ մի՛ կանգնեք բարեխոսական աղոթքախմբերից: Ներկա՛ եղեք աղոթքներին և ուղղորդե՛ք նրանց: Գուցե ասեք. «Չգիտեմ ինչպես անել դա»: Հենց դա է խնդիրը: Գտե՛ք մարդկանց աղոթքի մեջ առաջնորդելու կերպը՝ դրանից հետ կանգնելու փոխարեն: Եթե ցանկանում եք, որ ձեր եկեղեցում հրաշքներ կատարվեն, ապա պետք է այնպես անեք, որ մարդիկ աղոթեն: Եվ *ինքներդ* էլ պետք է աղոթեք:

Եկե՛ք տեսնենք, թե որն է Աստծո ծրագիրը սրա վերաբերյալ: Գործք 4-րդ գլխում տեսնում ենք, որ աղոթքի այս տե-

սակը Աստծո ծրագրի մաս է: Հիշո՞ւմ եք Գործք 3-րդ գլխում «Գեղեցիկ» կոչվող դարպասի մոտ գտնվող մարդու բժշկության մասին պատմությունը: Պետրոսին և Հովհաննեսին ձերբակալեցին և հրամայեցին այլևս չքարոզել ու չսովորեցնել Հիսուսի անունով:

ԳՈՐԾՔ 4. 23, 24

23 Եվ արձակվելուց հետո [Պետրոսը և Հովհաննեսը] եկան ԻՐԵՆՑՆԵՐԻ ՄՈՏ և պատմեցին, ինչ որ քահանայապետները և ծերերն ասացին նրանց:
24 Եվ ՆՐԱՆՔ [ամբողջ խումբը] երբ լսեցին, միաբանությամբ իրենց ձայները բարձրացրին դեպի Աստված [աղոթեցին] և ասացին. «Տ՛եր, Դու ես Աստված...»:

Նախ և առաջ ուշադրությո՛ւն դարձրեք 23-րդ խոսքին: Երբ խնդրի մեջ եք հայտնվում, կարևոր է իմանալ, թե ինչ է պետք անել, ճի՞շտ է: Գնացե՛ք այնպիսի մարդկանց մոտ, որոնք գիտեն ինչպես աղոթել: «Ուս ուսի տանք, սարեր շուռ կտանք» արտահայտության մեջ ճշմարտություն կա:

Երբ Պետրոսն ու Հովհաննեսը խնդրի մեջ հայտնվեցին, արդյո՞ք նրանք ասացին. «Խնդիր ունենք: Սիրելի՛ Տեր, լավ կլինի՝ հանձնաժողով կազմենք, գնանք քահանայապետների և ծերերի հետ խոսելու և տեսնենք, թե ինչպես կարող ենք այս հարցը լուծել»: Ո՛չ, նրանք այդպես չվարվեցին, փոխարենը գնացին նրանց մոտ, որոնք գիտեին ինչպես աղոթել: Զորություն կա միաբան աղոթքի մեջ:

Այնուհետև՝ 24-րդ խոսքում, ասվում է. *«...միաբանությամբ իրենց ձայները բարձրացրին դեպի Աստված...»:* Սա չի նշանակում, որ նրանք բոլորը աղոթքի մեջ նույն բանն էին ասում Աստծուն:

Աստվածաշունչն ասում է, որ Սուրբ Հոգին էր թարգմանում նրանց աղոթքը. այս իմաստով է ասվում, որ նրանք

միաբան էին աղոթում: Բոլորը նույն անգիր արված խոսքերը չէին ասում, սակայն Հոգում նույն բանն էին ասում. Աստծո համար այդպես էր հնչում:

Աշակերտները չէին սկսում իրենց աղոթքը խնդրի մասին խոսելով: Նրանք առաջին տեղում դասում էին ոչ թե խնդիրը, այլ Աստծուն: Նրանք չէին բացում աղոթքը՝ ասելով, թե ինչ խառնաշփոթի մեջ էին Պետրոսի ու Հովհաննեսի ձերբակալության պատճառով:

«Բոլորիս վերջն էլ բանտն է լինելու: Վա՛յ մեզ, վա՛յ մեզ, վա՛յ մեզ: Հիմա ի՞նչ պետք է անենք: Մայրիկս ասում էր, որ չպետք է խառնվեի այս խմբի գործերին: Եթե՛ միայն լսեի մորս»:

Արդյոք նման բան ասո՞ւմ էին աշակերտները: Ո՛չ, ո՛չ, ո՛չ և ևս մեկ անգամ ո՛չ:

Նրանք ասում էին. «...Տե՛ր, ԴՈՒ ԵՍ ԱՍՏՎԱԾ...» (խ. 24): Արդյոք ուրախ չե՞ք, որ Նա է Աստված: Ինչ էլ որ պատահի, միևնույնն է, Նա է Աստված: Որքան էլ անթափանց լինի խավարը, ինչպիսի խառնաշփոթի մեջ էլ լինեք, Աստված մնում է Աստված:

ԳՈՐԾՔ 4.23–31

23 Եվ արձակվելուց հետո եկան իրենցների մոտ և պատմեցին, ինչ որ քահանայապետները և ծերերն ասացին նրանց:
24 Եվ նրանք երբ լսեցին, միաբանությամբ իրենց ձայները բարձրացրին դեպի Աստված և ասացին. «Տե՛ր, Դու ես Աստված, որ արեցիր երկինքը և երկիրը՝ ծովը և նրանց միջի բոլոր բաները:
25 Որ քո Դավիթ ծառայի բերանով խոսեցիր և ասացիր՝ ինչո՞ւ ազգերը խռովեցին, և ժողովուրդներն ունայն բաներ մտածեցին:
26 Երկրի թագավորները վեր կացան, և իշխանները մեկտեղ հավաքվեցին Տիրոջ դեմ և Նրա Օծյալի դեմ:

27 Որովհետև արդարև հավաքվեցին Քո սուրբ Որդի Հիսուսի վրա, որին օծեցիր, Հերովդեսը և Պոնտացի Պիղատոսը՝ հեթանոսների հետ և Իսրայելի ժողովուրդների հետ,
28 որ անեն, ինչ որ Քո ձեռքը և կամքն առաջուց սահմանեց լինելու:
29 Եվ հիմա, Տե՛ր, նայի՛ր նրանց սպառնալիքին և տո՛ւր Քո ծառաներին ԲՈԼՈՐ ՀԱՄԱՐՁԱԿՈՒԹՅՈՒՆՈՎ ՔՈ ԽՈՍՔԸ խոսել»:

(Նման աղոթքը արդյունք է տալիս: Նրանք չաղոթեցին այսպես՝ «Տեր, տո՛ւր մեզ նրանց հետ շահավետ փոխզիջման գնալու հնարավորություն»: Ո՛չ և ո՛չ:)

30 Որ Քո ձեռքը մեկնես, որ բժշկություն և նշաններ և հրաշքներ լինեն, Քո սուրբ Որդի Հիսուսի անունով:
31 Եվ նրանք աղոթք անելիս շարժվեց այն տեղը, ուր որ ժողովված էին, և ամենքը Սուրբ Հոգով լցվեցին, և Աստծո խոսքը խոսում էին համարձակությամբ:

Ոմանք ոգևորվում են, երբ Աստծո զորությունն իջնում է մարդկանց վրա, ու մարդիկ սկսում են ցնցվել կամ զորությունից ընկնում են: Պատկերացրե՛ք, թե որքան կոգևորվեն, երբ շենքը սկսի ցնցվել:

Գործք 5-րդ գլխում տեսնում ենք այդ աղոթքի պատասխանը:

ԳՈՐԾՔ 5.12–16

12 Եվ առաքյալների ձեռով շատ նշաններ և հրաշքներ էին լինում ժողովրդի մեջ [հիշո՞ւմ եք, նրանք աղոթում էին հրաշքների ու նշանների համար]. ամենքը միաբան Սողոմոնի սրահում էին:
13 Եվ ուրիշներից ոչ ոք չէր համարձակվում հարել նրանց, բայց ժողովուրդը մեծարում էր նրանց:

14 Եվ առավել ևս շատանում էին Տիրոջ հավատացյալները, *և եղավ* մի բազմություն մարդկանց և կանանց:
15 Մինչև որ հիվանդներին հանում էին հրապարակները և իրենց պատգարակներով և մահիճներով այնտեղ էին դնում, որ Պետրոսի անցնելիս գոնե նրա շուքը նրանցից մեկի վրա ընկնի:
16 Եվ շրջակա քաղաքներից բազմությունը հավաքվում էր Երուսաղեմում, որ բերում էին հիվանդներին և պիղծ ոգիներից չարչարվածներին, որ ամենքն էլ ԲԺՇԿՎՈՒՄ ԷԻՆ:

Արդյոք տարօրինակ չէ՞ հետևյալ պատկերը՝ հիվանդ մարդիկ, որոնք չարչարվում էին պիղծ ոգիներից: Գուցե ասեք. «Կարծում էի, թե բոլոր ոգիներին պետք է քշել»: Ո՛չ, բոլորը բժշկվում էին: Փա՛ռք Աստծուն, յուրաքանչյուր ոք, ում վրա ընկնում էր Պետրոսի ստվերը, բժշկություն էր ստանում: Աստված Աստված է և միշտ էլ մնալու է Աստված: Այս պահին էլ Նա Աստված է: Այս պահին էլ Նա գործում է այնպես, ինչպես Առաջին եկեղեցու օրերին:

Ինչո՞ւ է այդքան կարևոր, որ մեր եկեղեցիներում հավուր պատշաճի անցկացնենք աղոթքի հավաքույթները, որովհետև Աստված շարժվում է: Աստված ցանկանում է վերականգնել Իր Հոգու գերբնական գործերը մեր եկեղեցիներում: Իրականում, մի քանի տարի առաջ Նա սկսել է բարեխոսական աղոթքների ալիք, սակայն ոմանք մոլորվել և խաթարել են այն:

Հիմա ուշադի՛ր լսեք ինձ: 80-ականների սկզբին բարեխոսության շնորհիվ մենք որոշ փոփոխություններ մտցրինք կառավարության մեջ, և պաշտոն ստացան ճիշտ մարդիկ: Սակայն այդ ժամանակ Քրիստոսի Մարմինը թուլացրեց ջանքերը, իսկ ոմանք ծայրահեղության մեջ ընկան և դադարեցրին բարեխոսությունները: Դա խանգարեց Աստծո իսկական շարժին. մարդիկ չմտան այն բարեխոսության մեջ, որն Աստ-

ված կամենում էր Քրիստոսի Մարմնի համար: Որոշ եկեղեցիներ բաժանվեցին բարեխոսության շուրջ անհամաձայնությունների պատճառով:

Կալիֆոռնիայից մի հովիվ ինձ պատմեց, որ իր եկեղեցին երեք մասի էր բաժանվել, քանի որ որոշ բարեխոսներ «հայտնություն» էին ստացել, որ Աստված Իր գործն ավարտել էր այդ հովվի հետ այդ եկեղեցում, ու նա պետք է հեռանար: *Նա ինքն* Աստծուց նման բան չէր ստացել: Եկեղեցու մեկ երրորդը նրա հետ մնաց, սակայն դա մեծ բաժանում բերեց եկեղեցում:

Պարզ երևում է, թե ինչու այդ հովիվը հետաքրքրված չէր բարեխոսական աղոթքով, քանի որ բարեխոսներն էին, որ նման խառնաշփոթ էին առաջացրել: Նրանք բաժանում էին բերել եկեղեցում: Իրականում, բարեխոսական ոչ մի խումբ ինքն իրենով չպետք է աղոթի, եթե նրա վրա կարգված չէ ինչ-որ հասուն անձնավորություն, որը հասկանում է Աստծո Հոգու շարժը: Այլապես նրանք ամեն անգամ կշեղվեն ճիշտ ուղուց: Նրանք չեն գիտակցում, որ ճիշտ այն ժամանակ, երբ Սուրբ Հոգին ամենաակտիվն է գործում, սատանան խառնվում է իրավիճակին:

Սա ասում եմ ձեզ, քանի որ Տերն ինձ ասել է, որ եթե քրիստոնյաները փոփոխություն չբերեն երկրում տիրող իրավիճակում, և ճիշտ մարդիկ պաշտոններ չզբաղեցնեն կառավարությունում, ապա երկուսից երեք տարվա ընթացքում մեր կենսապայմանները կիսով չափ կվատանան տնտեսության պատճառով:

Մենք կարող ենք այդ հարցում փոփոխություն բերել աղոթքի միջոցով: Կա աշխատանք, որը պետք է անել երկրի վրա, և կա հունձք, որը պետք է հավաքել: Կա արթնության և փառքի ալիք, որը գալիս է ոչ միայն Միացյալ Նահանգների, այլև ամբողջ աշխարհի վրա: Եվ սատանան չի կարողանալու այն կանգնեցնել:

Ուստի եկեք միանանք Աստծո *նպատակին,* վերականգնենք աղոթքի հավաքույթները մեր եկեղեցիներում, որպեսզի դրանք լինեն Աստծո նախատեսածի պես: Եվ զորավոր արդյունքներ կտեսնենք:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՎԱՔՈՒՅԹՆԵՐ

Աստված նաև ցանկանում է, որ եկեղեցիներում ունենանք ուսուցման հավաքույթներ, որոնց հիմնական նպատակը կլինի մարդկանց սովորեցնելը: Նման ծառայությունների ընթացքում փառաբանությունը պետք է նվազագույնին հասցվի: Հիշեք, որ դա երկրպագության հավաքույթ չէ: Սակայն պետք է ունենանք նաև պարզապես Աստծուն երկրպագելուն նվիրված ժամանակ: Ինչ վերաբերում է ուսուցման հավաքույթներին, ապա հարկավոր է ծառայությունն անմիջապես հանձնել խոսնակին, քանի որ տվյալ հավաքույթի հիմնական նպատակն ուսուցումն է՝ Աստծո Խոսքի ճշմարտությունը մարդկանց փոխանցելը: Երբ հոգևոր հարցերում հետևում ենք *Աստծո նպատակին,* մենք գիտենք ինչ անել ծառայությունների ժամանակ:

Հովիվները և բոլոր ծառայողները իրենք իրենց հետևյալ հարցը պետք է տան՝ ո՞րն է այս հավաքույթի նպատակը, ո՞րն է Աստծո ծրագիրը:

Կարևորը պարզապես «եկեղեցի ունենալը» չէ: Մենք պետք է ունենանք Աստծո *ծրագիրը*, մեր մտքում պահենք Նրա *նպատակն* ու *ձգտենք* դրան: Սա նշանակում է, որ պետք է ժամանակ հատկացնենք Նրան սպասելուն, որպեսզի ստանանք Նրա ծրագիրն ու նպատակը:

Երբ հասկանանք, թե ինչ է Աստված ցանկանում անել, պետք է դրան համընթաց շարժվենք բոլոր ծառայություններում:

ՆՐԱ՞Ն ՆՊԱՏԱԿԸ, ԹԷ ՄԵՐԸ

Հիշողությանս մեջ տպավորվել է մի պատմություն այն օրերից, երբ հովիվ էի Տեխասի Ֆարմերսվիլ քաղաքում: Մոտենում էր Մայրության տոնը: Այդ տարի շատ ջանք էի թափել՝ պատրաստվելով Մայրության օրվան նվիրված քարոզին. *օրեր էի անցկացրել*՝ այդ քարոզը պատրաստելով: Դուրս էի գրել հին ժամանակների մեծ և հայտնի մարդկանց մտքերը, օրինակ՝ Բենջամին Ֆրանկլինի, Աբրահամ Լինքոլնի և ուրիշների խոսքերը մայրերի մասին: Ջանասիրաբար աշխատել էի նաև նշումներիս վրա: Երբ վերջացրի, գիտեի, որ լավ քարոզ էր ստացվել:

Մի քանի մղոն հեռավորության վրա կային չորս այլ եկեղեցիներ, որոնք հատուկ ցերեկույթ էին կազմակերպել Մայրության օրվա առթիվ: Նրանք ցանկանում էին, որ գնայի և քարոզեի այդ ցերեկույթին: Այդ պատճառով ստիպված էի բաց թողնել կիրակնօրյա առավոտյան հավաքույթը, ուստի իմ հարանվանությանն ասացի, որ մեր եկեղեցում Մայրության օրվան նվիրված ծառայությունն անցկացնելու ենք կիրակի երեկոյան՝ առավոտվա փոխարեն:

Երբ այդ եկեղեցիների կազմակերպած ցերեկույթին քարոզեցի պատրաստածս քարոզը, համոզվեցի, որ իսկապես լավ էր ստացվել, քանի բոլորը գովում էին այն: Ուստի մտածեցի, որ *նույն քարոզը կքարոզեմ նաև կիրակի երեկոյան իմ եկեղեցում*:

Երեկոյան ծառայությունն այնպես էի կազմակերպել, որ ամեն բան մոր մասին լիներ: Հատուկ երգեր կային *մոր* մասին. կանանց եռյակը երգեց *մոր* մասին: Սակայն նրանց այդ երգից ոչ մի բառ չլսեցի, քանի որ ամբողջ ընթացքում Տերը խոսում էր ինձ հետ: Գլուխս և սիրտս պայքարի մեջ էին մտել:

Տերն ասաց ինձ. «Հիմա բժշկության ծառայությունն անցկացրու: Անմիջապես այն բանից հետո, երբ նրանք կավար-

տեն երգը, բարձրացի՛ր բեմ և հայտարարի՛ր բժշկության ծառայություն»:

«Ինչո՞ւ, Տե՛ր,- ասացի ես,- այդպես Դու կխափանես իմ լավ քարոզը: Տե՛ր, ես օրեր ու շաբաթներ աշխատել եմ այդ քարոզի վրա: Իսկ Մայրության օրվան նվիրված քարոզը հաջորդ կիրակի չեմ կարողանա քարոզել, քանի որ Մայրության օրն անցած կլինի: Մարդիկ կմտածեն, թե խելքս թռցրել եմ: Ստիպված կլինեմ մի ամբողջ տարի սպասել, որ կարողանամ քարոզս քարոզել»: *Ի՛մ քարոզը:*

Տերը նորից ասաց ինձ. «Անմիջապես այն բանից հետո, երբ կավարտեն երգը, աղոթի՛ր հիվանդների համար»:

Ես կրկնում էի. «Տե՛ր, մարդիկ կմտածեն, թե խելքս թռցրել եմ»: Նայեցի հավաքվածներին: Մայրության օրվան նվիրված ծրագրի համաձայն՝ երեխաները պետք է բեմ բարձրանային և ասմունքեին. հայրերն էլ եկել էին՝ տեսնելու, թե ինչպես են իրենց երեխաները ներկայանում: Ես գիտեի, որ այդ տղամարդկանցից շատերը հաջորդ անգամ եկեղեցի էին գալու Սուրբ Ծննդին:

Այնպես որ ասացի Տիրոջը. «Տե՛ր, նրանք կմտածեն, թե խելագարվել եմ: Մենք ամեն բան այնպես ենք ծրագրել, որ շեշտադրումը մայրերի վրա լինի: Ես պատրաստել եմ Մայրության օրվան նվիրված քարոզը, այն էլ լավ քարոզ. այն հիմնված է Աստվածաշնչում ներկայացված մոր կերպարի վրա: Եթե հիմա վեր կենամ, բժշկության ծառայություն հայտարարեմ ու սկսեմ հիվանդների համար աղոթել, հավաքվածներին կթվա, թե խելագարվել եմ: Ոչ մի բան չի գնում այդ ուղղությամբ, Տե՛ր: Ամեն բան ուղղված էր մայրերին»:

Տերը կրկնեց Իր խոսքը. «Աղոթի՛ր հիվանդների համար: Ծառայի՛ր հիվանդներին»:

Երբ կանանց եռյակն ավարտեց երգելը, ես բարձրացա բեմ և բացեցի Աստվածաշունչս: Նույնիսկ կարդացի մայրե-

րին վերաբերող իմ տեքստը: Սակայն ի վերջո փակեցի Աստվածաշունչս ու ասացի. «Ես պատրաստվում եմ հնազանդվելու Աստծուն: Աստված ասել է, որ ծառայեմ հիվանդներին»:

Հիշում եմ՝ այդ ծառայությանը ներկա էր մի մարդ, որը հաճախ էր անցնում մեր հովվական կացարանի մոտով: Հաջորդ փողոցում գտնվող խանութը գնալու համար նա հատում էր եկեղեցու և մեր հովվական կացարանի միջև պարտեզը:

Չգիտեմ, թե ինչ էր պատահել նրան, բայց վնասել էր մեջքն ու ստիպված էր կռացած քայլել: Չէր կարողանում մեջքն ուղղել և սովորականի նման քայլել: Երբ հայտարարեցի, որ բժշկության ծառայություն է լինելու, նա առաջ եկավ աղոթքի համար: Ես ձեռքս դրեցի նրա վրա, և Աստծո զորությունը դիպավ նրան, մեջքն անմիջապես ուղղվեց, ու նա կարողացավ ուղիղ կանգնել: Տարեց մարդ էր, բայց այն բանից հետո, երբ Աստված նրան բժշկեց, կարողանում էր պտտվել, կռանալ և նույնիսկ դիպչել հատակին:

Ինչ վարժություն ասես, որ չարեց բոլորի առջև: Այդ ծառայության ընթացքում զարմանահրաշ ձևով բժշկվեց նաև մի փոքրիկ երեխա: Հետ շրջվեցի և նայեցի եկեղեցուն՝ տեսնելու այն մարդուն, որն ըստ իս պետք է խելագարի տեղ դներ ինձ՝ բժշկության ծառայություն անցկացնելու համար. բոլորը լալիս էին: Բոլոր սրբում էին արցունքները:

Ինչպես տեսնում եք, երբ մենք ձգտում ենք Աստծո *նպատակին* և ոչ թե մեր, Սուրբ Հոգին ազատ շարժվում է մեր մեջ: Նա կարող է հինգ րոպեում անել այն, ինչ ինքներս հինգ տարում կանեինք:

ՃԻՇՏ ՆՊԱՏԱԿ, ՃԻՇՏ ԴՐԴԱՊԱՏՃԱՌ

Աստծո նպատակին ձգտելիս կարևոր են նաև մեր դրդապատճառներն ու վերաբերմունքը: Գիտեիք արդյոք, որ կա-

րող եք ճիշտ նպատակ հետապնդել սխալ դրդապատճառով և հաջողության չհասնել: Թո՛ւյլ տվեք պատկերավոր ներկայացնել, թե ինչ նկատի ունեմ:

1947 թվականին Ամերիկայում բժշկության արթնություն սկսվեց, որը տևեց մինչև 1958 թվականը: Այդ արթնությունից մի քանի տարի առաջ Աստված ներսումս աղոթք էր բորբոքել: Չգիտեի ուրիշ մեկին, ով աղոթում էր այդ թեմայով, սակայն վստահ եմ, որ այլ մարդիկ ևս կլինեին, քանի որ Աստված այդ կերպ է գործում: Նախ և առաջ անհրաժեշտ է աղոթել Աստծո ծրագրերի համար:

Ես փնտրում էի Աստծուն, քանի որ մեր ծառայության մեջ Հոգու պարգևներից գործում էին միայն լեզուներով աղոթքի և թարգմանության պարգևները:

Ասացի. «Տե՛ր, ահա՛ Ա Կորնթացիս 12-րդ գլխում կարդում ենք Սուրբ Հոգու բոլոր այս պարգևների մասին, բայց ականատես ենք եղել միայն լեզուներով աղոթքին և թարգմանությանը»:

Փա՛ռք Աստծուն լեզուներով աղոթքի և թարգմանության համար, սակայն եկե՛ք այդտեղ կանգ չառնենք: Դա ամենը չէ:

Ասացի. «Տե՛ր, Քո Խոսքում նշվում են զորության երեք պարգևներ՝ հատուկ հավատք, հրաշագործություններ և բժշկություններ: Սրանք պետք է դրսևորվեն մեզանում»:

(Ա Կորնթացիս 12-րդ գլուխը սովորեցնում է մեզ հոգու ինը պարգևների մասին [խ. 7–11]: Դրանք կարելի է բաժանել երեք խմբի՝ *հայտնության* պարգևներ՝ իմաստության խոսք, գիտության խոսք և հոգիների զանազանություն, *զորության* պարգևներ՝ հատուկ հավատք, բժշկություններ և հրաշագործություններ, և *խոսքի* պարգևներ՝ մարգարեություն, լեզուներ ու լեզուների թարգմանություն):

Գրեթե ամեն գիշեր աղոթում էի սրա համար: Երբեմն աղոթում էի գիշերը երեքին կամ չորսին: Արթնանում էի և մոտ

մեկ ժամ աղոթում: Ձմռանը գնում էի հյուրասենյակ և աղոթում ջեռուցիչի մոտ: Շատ ցուրտ էր՝ ննջասենյակում բոբիկ գետնին ծնկելու համար. այդ սենյակը չէր ջեռուցվում:

Երեք անգամ արթնացել եմ հյուրասենյակի բազմոցի մոտ ծնկած, սակայն նույնիսկ չէի հիշում, որ գնացել եմ այնտեղ: Ինքս ինձ հարցնում էի՝ *ինչպե՞ս եմ հայտնվել այստեղ, հավանաբար քնած վիճակում եմ այստեղ եկել:*

Չէի աղոթում ուրիշ ոչ մի բանի համար՝ բացի նրանից, որ զորության պարգևները դրսևորվեն մեր մեջ: Չէի աղոթում, որ Աստված օգտագործեր ինձ, քանի որ իրականում նախընտրում էի, որ օգտագործեր ցանկացած մեկին՝ բացի ինձնից:

Աստծո գերբնական գործերի համար արված շատ աղոթքներ չեն պատասխանվում, քանի որ մարդկանց նպատակներն են սխալ: Հաճախ մարդիկ մտածում են՝ *Աստվա՛ծ, օգտագործի՛ր ինձ*:

Ես չէի աղոթում, որ Նա օգտագործեր ինձ: Ինձ չէր հետաքրքրում՝ Աստված ինձ կօգտագործեր, թե ուրիշ մեկին: Ես ցանկանում էի, որ մարդիկ օրհնված լինեին, որ նրանց օգնություն հասներ, եկեղեցին ուժեղանար, և Աստված փառավորվեր:

Այն ժամանակ աղոթում էի, որ այդ բաները դրսևորվեին այնպես, ինչպես գրված է Աստծո Խոսքում: Գիտեի, որ դրանք մեզ են պատկանում: Աղոթում էի, որ մեր մեջ զորության պարգևների առատ դրսևորում լիներ, և համառորեն շարունակում էի աղոթել:

Մի օր գնացի եկեղեցում իմ փոքրիկ աշխատասենյակը՝ պատրաստելու կիրակնօրյա քարոզը: Սակայն աղոթելու փափագն այնպես էր ծանրացած սրտիս, որ վեր կացա աթոռիցս և սկսեցի աղոթել. մոտ հինգ ժամ աղոթեցի այլ լեզուներով:

Դա լեզուներով ամենաերկար աղոթքն էր, որ կյանքումս

արել եմ: Այնուհետև վեր կացա, որ գնամ հարևանությամբ գտնվող հովվական կացարանը՝ ջուր խմելու և մի փոքր քայլելու, քանի որ ամբողջ աղոթքը ծնկներիս վրա էի անցկացրել:

Ասացի. «Տե՛ր, ես աղոթում եմ Քո Հոգու դրսևորման համար, սակայն չգիտեմ ինչի համար ինչպես աղոթել, այդ պատճառով էլ լեզուներով եմ աղոթում՝ Սուրբ Հոգով՝ հուսալով, որ Դու կօգնես ինձ աղոթելու»:

Աստված ցանկանում էր դրսևորել Իրեն: Ես կարողանում էի երկար աղոթել, սակայն չգիտեի ինչպես աղոթել: Այսօր ևս մենք հստակ չգիտենք ինչպես աղոթել: Աստծո շարժ է սպասվում: Աստված ցանկանում է դրսևորել Իրեն այս աշխարհում նշաններով և հրաշքներով: Մենք կարողանում ենք աղոթել, սակայն չգիտենք ինչպես աղոթել (Հռոմ. 8.26): Հետևաբար պետք է հենվենք Սուրբ Հոգու վրա:

Մոտ հինգ ժամ աղոթելուց հետո ես հասա «նավթային շատրվանի»: Փա՛ռք Աստծուն: Սուրբ Հոգին ինձ իմաստության խոսք տվեց:

Կան մարդիկ, որ ասում են. «Ես երբեք ոչինչ չեմ ստանում»:

Գիտեմ: Պատճառն այն է, որ բավականաչափ երկար չեք մնում Աստծո ներկայության մեջ, որ Նրանից ինչ-որ բան ստանաք: Երբ այն գալիս է, դուք արդեն այդտեղ չեք լինում:

Երբ իմաստության խոսք ստացա, վերցրի նոթատետրս և մատիտս ու գրեցի՝ 1943 թվական, փետրվար: Դեռ պահում եմ այդ գրառումը: Ահա թե ինչ գրեցի. «*Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին մոտ Ամերիկայում ասփվածային բժշկության արթնություն է լինելու*»:

Աստծո ծրագիրը հայտնի դարձավ դրա իրականացումից չորս տարի առաջ:

Դրան հաջորդող տարին, երբ քարոզում էի Տեխաս նա-

հանգի Լոնգվյու քաղաքում անցկացվող երիտասարդական հավաքույթին, ասացի նրանց, թե ինչ էր Աստված ասել, նշեցի նաև ամսաթիվը: Երբ հանրայնորեն հրապարակեցի Աստծո ծրագիրը, Աստծո զորությունն իջավ հավաքվածների վրա: Բոլոր քարոզիչները վազեցին դեպի խորանը: Բոլոր ներկաները՝ երիտասարդ թե ծեր, ծնկի իջան և սկսեցին աղոթել: Փառքը իջավ մեզ վրա:

Տեղի ունեցավ այն, ինչ Աստված ասել էր. 1947 թվականին բժշկության արթնություն սկսվեց:

Հարյուր քսան ծառայող ներգրավվեց «Բժշկության ձայնը» կոչվող շարժի մեջ: Ամերիկայի՝ բժշկության բոլոր ավետարանիչները, բացի Օրալ Ռոբերթսից, ընդգրկված էին այդ շարժման մեջ: «Բժշկության ձայնը» ամսագիրը, որի խմբագիրը Գորդոն Լինդսին էր, հայտնեց արթնության մասին, և մենք այն օգտագործեցինք որպես գովազդ:

Ահա թե ինչ եմ ուզում ասել այս ամենով, և ինչ Հիսուսն ասաց ինձ Իր վերջին այցելության ժամանակ: Մինչ կասեի դա, պետք է հիմք դնեի, որպեսզի ձեզ համար հասկանալի լիներ: Դուք կարող եք ստանալ Աստծո ծրագիրը, սակայն այն իրագործելիս ձեր նպատակը կարող է սխալ լինել:

«Բժշկության ձայնում» կար բժշկության մի կարկառուն ավետարանիչ: Նա Աստծուց կանչված և Հոգով օծված մարդ էր, ուներ Աստծո ծրագիրն այդ ժամի համար և Աստծո ծրագիրն իր կյանքի համար: Նա զինված էր գերբնական զենքերով՝ անելու այն ծառայությունը, որն Աստված տվել էր իրեն: Սուրբ Հոգին գործում էր այդ մարդու միջոցով ամենահրաշալի ձևով, որ երբևէ տեսել եմ:

Տեսել եմ, թե ինչպես են նրա ծառայության միջոցով վայրկենապես բացվել կույրերի աչքերը: Տեսել եմ, թե ինչպես է միանգամից ազատագրվել, ոտքի կանգնել և քայլել մի մարդ,

որի մարմինը սկսել էր անզգայանալ (դա միակ մարդն էր այդ հիվանդությամբ, որին հանդիպել եմ), նրան փայտացած վիճակում պատգարակով բերել էին հավաքույթին: Սքանչելի էր այդ ամենին հետևելը:

Մի անգամ, երբ ես և կինս ճամփորդում էինք, կանգ առանք՝ մասնակցելու նրա հավաքույթներից մեկին: Հավաքույթի վայրին մոտ էր գտնվում խուլերի խնամքի պետական կենտրոնը, և այնտեղից հինգ մարդու էին բերել հավաքույթին. նրանք ո՛չ լսում էին, ո՛չ էլ խոսում: Եվ բոլորը մեկը մյուսի հետևից վայրկենապես բժշկվեցին ներկաների աչքի առջև:

Ծառայողը միանգամից վեր կացավ և սկսեց նվիրատվություն հավաքել. օձությունը հեռացավ:

Նրա նպատակը սխալ էր: Չի կարելի օգտվել Աստծո ծրագրից գումար հավաքելու համար:

Այդ նույն ծառայողի վերաբերյալ Տերն ասաց ինձ. «Գնա՛ և ասա՛ նրան, որ երկար չի ապրի, եթե ինքն իրեն չդատի»: Տերն ասաց ինձ, որ նա պետք է դատեր ինքն իրեն երեք ոլորտներում: Այդ ոլորտներից մեկը փողն էր: Ես չգնացի այդ ծառայողի մոտ, և Աստված դրա համար հանդիմանեց ինձ: Իսկ այդ ծառայողն այդպես էլ չդատեց ինքն իրեն և երեք տարի անց մահացավ երիտասարդ տարիքում:

Ձեր նպատակը պետք է լինի Աստծո նպատակը:

Կարծում եմ՝ հասկանում եք, թե ինչ ուղերձ հաղորդեց ինձ Հիսուսն Իր այցելության ժամանակ: Աստծո Հոգու զորավոր շարժ է սպասվում, և մենք պետք է շտկենք մեր նպատակները: Պետք է ձգտենք ոչ թե մարդու, այլ Աստծո ծրագրին և հետապնդենք Աստծո նպատակը:

Չի կարելի Աստծո գործերն օգտագործել գումար հավաքելու համար: Դուք պետք է ընդամենը ասեք մարդկանց այն, ինչ Աստված ասել է ձեզ, և նրանց հնարավորություն տաք

մասնակցելու դրան, որպեսզի իրենց հաշվին պտուղ ավելանա (Փիլիպ. 4.17): Ես մարդկանց ասում եմ, որ Աստված ասել է հիմնել «Ռեմա» աստվածաշնչյան ուսումնական կենտրոնը, սակայն շեշտը գումարի վրա չեմ դնում: Պատմում եմ մարդկանց, թե ինչ ենք անում, և նրանց հնարավորություն եմ տալիս օգնելու մեզ, եթե ցանկանում են և կարող են: Այս հարցում հարկավոր է շատ զգույշ լինել:

Մի անգամ Հիսուսն ասաց ինձ. «Շատերը, որոնց վրա Իմ Հոգին դրել եմ և կանչել ծառայության մեջ, կենտրոնացել են փողի վրա և կորցրել օծությունը»:

Օ՜, ես չեմ ցանկանում կորցնել օծությունը ոչ մի վայրկյան և ոչ մի րոպե: Ամեն ծառայող, ամեն քարոզիչ, ամեն փառաբանող և ամեն մարդ, որ կանչված է Աստծուց, պետք է զգույշ լինի այս հարցում: Մենք չպետք է վերցնենք Աստծո ծրագիրը և այլ նպատակի ծառայեցնենք: Պետք է ձգտենք *թե՛* Նրա ծրագրին, *թե՛* Նրա նպատակին:

Եվ պետք է զգուշանանք ոչ միայն փողի հետ կապված մեր դրդապատճառներից, այլև մեր մարդկային «ես»-ից:

Տարիներ առաջ «Բժշկության ձայնի» համաժողովներից մեկի ժամանակ հովիվներից մեկը մի բան ասաց, որը գրավեց ուշադրությունս: Նա լավ հովիվ էր և լավ գործ էր սկսել: Արթնության օրերն էին. հատկապես շատ էին վրանային հավաքույթների միջոցով տեղի ունեցող արթնությունները: Ամեն տեղ բժշկության ավետարանիչներ կային, ամենուր կարելի էր վրաններ տեսնել:

Այդ հովիվն ասաց. «Եթե Ռոբերթսը կարող է անել դա, ուրեմն ես էլ կարող եմ»:

Արդյոք դա Աստծո ծրագիրն ու նպատակն էր նրա համար, թե՞ մարդկային «ես»-ն էր խոսում: Ես երեսունն անց երիտասարդ ծառայող էի և մտքումս պահեցի նրա այդ խոսքերը ու

հետևեցի, որ տեսնեմ, թե ինչ էր տեղի ունենալու նրա ծառայության մեջ:

Նա թողեց եկեղեցին և վրան ձեռք բերեց: Նա արեց դա. որոշ ժամանակ գրեթե նույնքան հաջողություն ուներ, որքան Օրալ Ռոբերթսը: Վեց հազար մարդու համար վրան ուներ, հասավ նրան, որ ձեռք բերեց տասը հազար մարդու տեղավորող վրան, սակայն հետո սկսեց հետընթաց ապրել՝ ավելի, ավելի ու ավելի:

Այդ ժամանակ ես ևս ներգրավված էի «Բժշկության ձայնում», սակայն Աստված ասել էր ինձ, որ մնայի եկեղեցիներում: Եվ ես մնացի 1949-1962 թվականներին, մինչև որ Աստված ինձ այլ ծրագիր տվեց:

Մշտապես ճամփորդում էի եկեղեցուց եկեղեցի: Ժամանակիս իննսունհինգ տոկոսը հավաքույթներ էի անցկացնում: Եվ գրեթե ամեն հավաքույթի ժամանակ՝ ո՛չ հազվադեպ, ո՛չ ժամանակ առ ժամանակ, այլ գրեթե ամեն հավաքույթի ժամանակ ինչ-որ մեկը ոտքի էր կանգնում ու մարգարեանում, որ ես պետք է վրան ձեռք բերեի:

«Ձեզ համար խոսք ունեմ. Աստված ցանկանում է, որ վրան ձեռք բերեք»:

Աստված ցանկանում էր, որ ես վրան ձեռք բերեի այնքան, որքան կցանկանար, որ Մարս թռչեի: Եվ ես ոչ մի վրան էլ չէի գնում:

Ինչո՞ւ էին նման բաներ ասում: Ասում էին, քանի որ այդ ժամանակ բոլորն էին վրան գնում: Տեսնում էի, թե ինչպես էին շատ ծառայողներ վրաններ ձեռք բերում, քանի որ մարդիկ մարգարեանում էին, որ նրանք պետք է անեին դա: Արդյունքն այն էր, որ փակվում էին վրանն ու ծառայությունը, իսկ ծառայողը տեսադաշտից անհետանում էր:

Չպետք է ինչ-որ բան անել, պարզապես որովհետև ուրիշ

մեկը դա անում է: Պարզե՛ք, թե Աստված ինչ է կամենում, որ դուք անեք:

Ինչո՞ւ եմ այս ամենն ասում: Ինչո՞ւ Տեր Հիսուսն այցելեց ինձ այդ ժամանակ և ինչո՞ւ խոսեց *ծրագրերի*, *նպատակների* և *ձգտումների* մասին: Պատճառն այն է, որ Նա ցանկանում է նորից շարժվել այս օրերում Իր գերբնական դրսևորումներով: Աստված միայն անցյալ արթնությունների Աստվածը չէ: 1906 թվականին Սուրբ Հոգու մեծ հեղում և արթնություն եղավ Լոս Անջելեսի հին Ազուսա փողոցում: Մինչև 1907 թվականը արթնության այդ ալիքը տարածվեց ամբողջ երկրում և երկրից դուրս: Այնուհետև՝ 1947 թվականին՝ քառասուն տարի անց, բժշկության արթնություն սկսվեց: Միայն տեսնեիք՝ ինչպիսի բժշկություններ էին լինում. ես դրա մեջ էի, և թո՛ւյլ տվեք ասել, որ այդ ժամանակ ամենահեշտ բանն աշխարհում մարդկանց բժշկություններն էին: Երբևէ չեմ տեսել այն, ինչի ականատեսը եղանք այդ օրերին. այնքա՜ն հեշտ էր տրվում մարդկանց բժշկությունը:

Մի ավետարանիչ կին (իրականում նա ավելի շատ հորդորման ծառայություն էր իրականացնում) մի անգամ նույն բանն ասաց ինձ: Նա ասաց. «Ես և ամուսինս միասին ծառայում էինք: Նա դաշնամուր էր նվագում, և միասին փառաբանում էինք, հիմնականում ես էի քարոզում: Ավելի քան երեսուն տարի ծառայության մեջ էինք, սակայն այդ ամբողջ ընթացքում որևէ մեկի վրա ձեռք չէինք դրել: Պարզապես հավաքույթներ էինք անցկացնում, մարդիկ փրկվում էին, լցվում Սուրբ Հոգով, և մենք նրանց ինչ-որ հարցերում հորդորում էինք: Սակայն երբ մեզ հասավ բժշկության ալիքը, և բոլորը սկսեցին ձեռք դնել մարդկանց բժշկության համար, մենք ևս որոշեցինք փորձել»:

«Առաջին մարդը, որի վրա ձեռք դրեցի,- շարունակեց նա,-

կույր էր և անմիջապես բժշկվեց: Տե՛ր Աստված, կարելի է ասել՝ դա ինձ մահու չափ վախեցրեց: Այդ ժամանակ աշխարհում ամենահեշտ բանը մարդկանց բժշկությունն էր: Թվում էր, թե բժշկությունն օդից կախված է: Այնպիսի զարմանահրաշ բաներ տեսանք, որ գուցե երբևէ տեսած չլինեք»:

Քրիստոսի Մարմնի մեջ բժշկության այսպիսի ալիք է գալիս: Աստծո հաջորդ շարժի ժամանակ նման զարմանահրաշ բժշկություններ տեղի կունենան: Մենք պետք է իմանանք, որ այդ ալիքը գալիս է, և պետք է իմանանք ինչպես պատրաստվել, որ արդյունավետ լինենք դրանում: Ահա թե ինչու եմ այս գրքում գրել, թե ինչ է Հիսուսն ասել ինձ 1987 թվականի Իր այցելության ժամանակ: Նա ասել է, որ Քրիստոսի Մարմինը պետք է ստանա *Իր* ծրագիրը և *Իր* նպատակները և *ձգտի* դրանց:

5 ՔԱՅԼԵՔ ԼՈՒՅՍԻ ՄԵՋ

Պատճառը, թե ինչու շատ եկեղեցիներ երբևէ չեն բարգավաճում, և շատ ծառայողներ չեն իրականացնում Աստծո կանչն իրենց կյանքերում, այն է, որ չեն հետևում Աստծո ծրագրին և ոչ միայն այն ծրագրին, որ Սուրբ Հոգին հայտնել է նրանց սրտերին, այլև Նրա գրավոր ծրագրին՝ Աստվածաշնչին: Երբ գալիս է Աստծո Խոսքի լույսը, այն ցույց է տալիս Աստծո ծրագիրը մեզնից յուրաքանչյուրի համար:

Երբ տեղ ենք տալիս Աստծո Խոսքին, այն լույս է տալիս: Աստծո Խոսքի լույսը բացահայտում է Աստծո ծրագիրը ամեն հավատացյալի, ինչպես նաև եկեղեցու համար:

Ոմանք կարծես *մասամբ*՝ սահմանափակ չափով են օրհնված, քանի որ *մասամբ* են քայլում այն լույսի մեջ, որն Աստված ունի իրենց համար: Ուրիշներն առհասարակ հրաժարվում են լույսի մեջ քայլելուց: Օրինակ՝ լսել եմ, թե ինչպես մի քարոզիչ հետևյալ արտահայտությունն արեց. «Աստվածաշնչում գրված լինի դա, թե ոչ, ես դրան կողմ չեմ»: Իսկ ես կողմ եմ ամեն բանի, ինչ Աստվածաշունչն է ասում: Չեմ ցանկանում աստվածաշնչյան որևէ ոլորտում թերանալ:

Հասկանո՞ւմ եք, թե ինչու է Աստված սահմանափակ չափով օրհնել որոշ մարդկանց: Երբևէ նկատե՞լ եք՝ երբ Աստծո շար-

ժի մեջ գալիս են օրհնության ալիքները, ոմանք սահմանափակ չափով են օրհնվում, լինում են նաև այնպիսիք, որոնք, այսպես ասած, «որթի վրա չորանում են»: Պատճառն այն է, որ նրանք չեն *քայլում* Աստծո ծրագրի համաձայն: Կամ այն ծրագիրը, որի համաձայն շարժվում են, վատը չէ տվյալ օրվա տեսանկյունից, սակայն հիմնված չէ իրենց համար Աստծո Խոսքի կամ Աստծո ծրագրի ամբողջական *հայտնության* վրա: Այնուհետև, երբ այդ ալիքը հասնում է ամենաբարձր կետին, իսկ մարդիկ զգույշ չեն լինում, կարող են ալիքի վրա հասնել ափ և չորանալ ու մահանալ: Մի՛ մնացեք այդ վիճակում. անցե՛ք հաջորդ ալիքին, որ գալիս է. ալելուիա: Եթե այդպես չվարվեք, ապա կգա ժամանակը, և Աստված վեր կառնի Իր ներկայությունը, որովհետև դուք չեք *քայլել* լույսի մեջ:

Բավական չէ պարզապես ստանալ Աստծո ծրագիրը որպես ուղղորդում: Դուք պետք է նաև քայլեք Նրա Խոսքի լույսի մեջ, այն Խոսքի, որը ձեզ համար բացվել է, պետք է գործի դնեք այն ձեր կյանքի ու ծառայության բոլոր բնագավառներում և շարունակեք քայլել այն լույսի մեջ, որը Նա կշարունակի բացել ձեզ համար: Եթե հրաժարվեք Աստծո գրված Խոսքին հնազանդվելուց, Աստծո ծրագիրը չի իրագործվի ձեր կյանքում, անգամ եթե ապագայի վերաբերյալ հստակ ուղղորդում եք ստացել:

Նույն կերպ Աստծո ծրագիրը չի շարունակի բացահայտվել ձեզ համար, եթե պատրաստակամ չլինեք Նրա հետ շարժվելու և փոխվելու: Կան մարդիկ, որոնց համար հարմարավետ է այն կետը, որտեղ գտնվում են: Նրանք հարմարվում են որոշակի վայրի կամ դիրքի և բավարարվում են այնքանով, որքան ճանաչում են Աստծուն: Ջանք և հաճախ զոհողություն են պահանջվում Աստծուն և Նրա ծրագրին ձգտել շարունակելու համար: Սա մեկ այլ պատճառ է, թե ինչու մարդիկ հասնում են լճացման և որոշակի կետից առաջ չեն շարժվում իրենց կյան-

քի ու ծառայության մեջ. նրանք պատրաստակամ չեն Աստծո հետ առաջ գնալու համար անհրաժեշտ գինը վճարելու:

Եկեք չհասնենք այն կետին, որտեղ ինքներս մեզնից գոհ կլինենք, թե որքան ենք Աստծո Խոսքը մեր կյանքում կիրառում: Եկեք երբեք այնպես չհարմարվենք այն կետին, որտեղ գտնվում ենք, որ չցանկանանք փոխվել՝ Աստծո հետ առաջ գնալու համար: Աստված միշտ առաջ է շարժվելու: Ես ցանկանում եմ գնալ Նրա հետ և լինել այն ամենի մեջ, ինչ Նա կամենում է անել այս ժամում:

Եկեք քայլենք լույսի մեջ և լիովին իրագործենք Աստծո նպատակներն ու ծրագրերը:

6 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ՄԵՋ

Ինչպես ասացի, Աստված միշտ առաջ է շարժվում: Նրա ծրագիրն առաջընթաց է: Երբ ուսումնասիրում ենք Աստվածաշունչը, տեսնում ենք, որ Աստծո ծրագիրն աստիճանաբար է բացվում, այն սկսվում է Հին Կտակարանից և ավելի հստակ ու ամբողջական է դառնում Նոր Կտակարանի վերջում: Սա ճշմարտություն է, որն ընդունում է աստվածաբանգիտնականների մեծ մասը:

Օրինակ՝ ամբողջ Հին Կտակարանում տեսնում ենք խոստացված Փրկչի նախօրինակներ և խորհրդապատկերներ: Սակայն միայն Նոր Կտակարանի Ավետարաններում է, որ Հիսուս Նազովրեցին բացահայտվում է որպես Հին Կտակարանի նախօրինակների և խորհրդապատկերների լրում: Իսկ Նրա մահն ու հարությունն ամբողջապես հասկանալու համար անհրաժեշտ է կարդալ Թղթերը:

Այս ամենն ասացի հետևյալի համար. 1987 թվականի Իր այցելության ժամանակ Հիսուսն ինձ ցույց տվեց, թե ինչպիսի զարգացում է ապրել երկրպագությունը Հին Կտակարա-

նից Նոր Կտակարան: Նա ուղղորդեց ինձ դեպի Հովհաննեսի 4-րդ գլուխը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ 4.23, 24

23 Բայց ժամանակ կգա, և հիմա է, որ ճշմարիտ երկրպագողները հոգով և ճշմարտությունով կերկրպագեն Հորը, որովհետև Հայրն էլ այսպես է ուզում Իր երկրպագողներին: 24 Աստված Հոգի է, և Նրան երկրպագողները պետք է հոգով և ճշմարտությունով երկրպագեն:

Հովհաննեսի 4-րդ գլխում գրված է այն պատմությունը, երբ Հիսուսն անցնում է Սամարիայով և կանգ է առնում Հակոբի ջրհորի մոտ՝ Սյուքարում, ու քաղաքաբնակ կանանցից մեկը գալիս է ջրհորից ջուր հանելու, իսկ Հիսուսը նրանից ջուր է խնդրում:

ՀՈՎՀԱՆՆԵՍ 4.9

9 Սամարացի կինն էլ ասաց նրան. «Դու, որ հրեա ես, ինչպե՞ս ես ինձնից ջուր ուզում խմել, որ մի սամարացի կին եմ: Որովհետեւ հրեաները չեն խառնվում սամարացիների հետ:

Սամարացիները խառնարյուն հրեաներ էին: Բացի հրեաների և սամարացիների ցեղային տարբերություններից՝ տարբեր էր նաև նրանց երկրպագությունն Աստծուն: Երկուսն էլ երկրպագում էին, սակայն տարբեր վայրերում:

Հիսուսի և այդ կնոջ՝ Սյուքարում տեղի ունեցած զրույցի ընթացքում կինը Նրան առանցքային հարց ուղղեց հրեաների և սամարացիների կրոնական երկրպագությունների միջև տարբերության վերաբերյալ. «*Կինը Նրան ասաց. «Տե՛ր, տեսնում եմ, որ Դու մարգարե ես: Մեր հայրերը այս սարում երկրպագություն արեցին, և դուք ասում եք, թե Երուսաղեմում է այն տեղը, ուր պետք է երկրպագություն անել» (Հովհ. 4.19, 20):*

Ասելով *«Մեր հայրերը այս սարում երկրպագություն արեցին...»*՝ այդ կինը նկատի ուներ Գարիզիմ սարը. այդ սարը Հին Կտակարանի առաջին հինգ գրքերում կարևոր նշանակություն ուներ Աստծուն երկրպագելու մեջ: Սամարացիները հավատացած էին, որ Գարիզիմ սարն էր երկրպագության ճիշտ վայրը, և հենց այդտեղ էլ երկրպագում էին Աստծուն այն ժամանակ, երբ Հիսուսը ծառայում էր երկրի վրա:

Իսկ հրեաները որոշել էին, որ Երուսաղեմն էր այն վայրը, որտեղ պետք էր երկրպագություն մատուցել Աստծուն: Այդ որոշումը կայացվել էր տաճարի կառուցումից և տաճարում Աստծո փառքը երևալուց հետո: Կար պահանջ, ըստ որի՝ երեսուն տարեկանը լրացած ամեն հրեա տղամարդ պետք է ամեն տարի նվազագույնը մեկ անգամ Երուսաղեմի տաճարում ներկայանար Աստծուն:

Այդպիսով, Հիսուսի երկրային ծառայության ժամանակ հրեաները գնում էին Երուսաղեմ՝ Աստծուն երկրպագելու:

Ջրհորի մոտ կանգնած կինը, տեսնելով, որ Հիսուսը կարողանում էր իշխանությամբ խոսել, ուզում էր, որ Նա ասեր իրեն, թե որն էր երկրպագության ճիշտ վայրը: Իսկ Հիսուսի պատասխանը բացահայտեց նրա համար, որ ո՛չ սամարացիները և ո՛չ էլ հրեաները ճիշտ չէին, քանի որ փոխվում էր Աստծուն երկրպագելու կարգը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ 4.21–24

21 Հիսուսը նրան ասաց. «Կի՛ն, հավատա՛ ինձ, որ ժամանակ կգա, որ այն ժամանակ ո՛չ այս սարում կերկրպագեք Հորը և ո՛չ էլ Երուսաղեմում:

22 Դուք երկրպագում եք նրան, որ դուք չգիտեք, մենք երկրպագում ենք նրան, որ գիտենք, որովհետև փրկությունը հրեաներից է:

23 Բայց ժամանակ կգա, և հիմա է, որ ճշմարիտ երկրպագողները հոգով և ճշմարտությունով կերկրպագեն Հորը,

**որովհետև Հայրն էլ այսպես է ուզում Իր երկրպագողներին:
24 Աստված Հոգի է, և Նրան երկրպագողները պետք է հոգով և ճշմարտությունով երկրպագեն:**

Հիսուսն Իր այցելության ժամանակ ասաց ինձ. «Իրականում, այս բոլոր բաներն ասելով՝ նա հարցնում էր Ինձնից, թե ով էր ճիշտ՝ սամարացիները, թե հրեաները: Եվ Իմ այդ խոսքերը նշանակում էին, որ ոչ մեկն էլ ճիշտ չէ, քանի որ գալիս է մի ժամանակ, և հիմա է այդ ժամանակը, երբ Աստծուն երկրպագողները *Հոգով* և ճշմարտությամբ կերկրպագեն Նրան»:

Մինչև Հիսուսի ծառայությունը Հոգով և ճշմարտությամբ երկրպագելու ճիշտ ժամանակը չէր: Իրականում, Հին Կտակարանի սուրբերը *չէին կարող* Հոգով երկրպագել Աստծուն, քանի որ չէին ճանաչում Աստծո Հոգուն այնպես, ինչպես մենք՝ այսօր: Աստծո ներկայությունը միայն թագավորի, քահանայի, մարգարեի կամ Աստծուց հատուկ կանչ ու հանձնարարական ունեցող անձանց *վրա* ու *հետ* էր: Մարգարեն, քահանան և թագավորը Աստծուց օծություն ունեին, որը նրանց *վրա* էր գալիս այդ պաշտոնները կատարելու համար: Ամեն անգամ, երբ Աստված ինչ-որ մեկին կանչում էր՝ որոշակի աշխատանք անելու, Հոգու օծությունը գալիս էր նրա *վրա*՝ այդ հանձնարարականը կատարելու համար: Աստծո Հոգին «աշխարհիկներից» ոչ մեկի *վրա* կամ մեջ չէր: Բացի այդ՝ Հին Կտակարանում օծությունը նույնը չէր, ինչ Նոր Կտակարանում, երբ մարդիկ վերստին ծնվում և ընդունում են Աստծո Հոգուն՝ իրենց *ներսում* ապրելու:

Հին Կտակարանում Աստծո ներկայությունը նրանց *ներսում չէր*, որոնք հավատում էին Աստծուն: Այդ պատճառով էլ նրանք պետք է ներկայանային Երուսաղեմում, որտեղ Աստծո ներկայությունն էր: Երուսաղեմի տաճարը Աստծո տունն էր, որտեղ Նրա ներկայությունն էր: Իսկ Նոր Կտակարանում *մենք* ենք Աստծո տաճարը. հավատացյալներն Աստծո տաճարն են:

Աստծո Հոգին ապրում է մեզնից յուրաքանչյուրի մեջ անհատապես և Քրիստոսի Մարմնի մեջ՝ հավաքականորեն:

Սամարացի կնոջ հետ խոսելիս Հիսուսը նշեց նոր ժամանակի՝ նոր դարաշրջանի մասին, որում փոխվում է երկրպագության կարգը: Սա պետք է լիներ մի դարաշրջան, որում սուրբերը կկարողանային *Հոգով* և ճշմարտությամբ երկրպագել Աստծուն, քանի որ Աստծո Հոգին պիտի ապրեր նրանց ներսում: Հիսուսն Ինքն էր ուղղորդում երկրպագության այդ նոր կարգի մեջ:

Իր պատասխանով Հիսուսը ցույց էր տալիս այդ կնոջը, որ Աստված Իր հավանությունը չէր տալիս ոչ՛ հրեաների, ո՛չ էլ սամարացիների երկրպագության կերպին, քանի որ ցանկանում էր նոր բան անել այդ օրերում: Հոգևորում եկել էր ժամանակը, որ մարդիկ փոխեին Աստծուն երկրպագելու կարգը: Ժամանակն էր, որ մարդիկ փոխարինեին երկրպագության հինկտակարանյան կերպը նորկտակարանյան կերպով: Հիսուսն ուղղորդում էր Նոր Ուխտի և երկրպագության նոր կարգի մեջ: Ժամանակն էր, որ մարդու մեջ ապրեր Սուրբ Հոգին, և մարդը կարողանար Հոգով երկրպագել Աստծուն:

Նույնիսկ բնականոն կյանքում գալիս է փոփոխությունների ժամանակ: Արդյոք ձեր կյանքում չե՞ն եղել ժամանակներ, երբ իրերի կարգը փոխվել է: Օրինակ՝ երբ ամուսնացել եք, արդյոք ձեր կյանքում փոփոխություններ տեղի չե՞ն ունեցել: Երբ ծնվել է ձեր առաջնեկը, փոփոխություններ տեղի չե՞ն ունեցել: Կա փոփոխությունների ժամանակ թե՛ բնական և թե՛ գերբնական իրականություններում: Իհարկե, այնպիսի արմատական փոփոխությունը, ինչպիսին էր անցումը Հին Ուխտից Նոր Ուխտ, պետք է ազդեցություն ունենար Աստծո հետ մարդու հաղորդակցության և Աստծուն երկրպագության կարգի վրա:

Հիսուսն այդ կնոջն ասաց. *«...ՃՇՄԱՐԻՏ ԵՐԿՐՊԱԳՈՂՆԵՐԸ հոգով և ճշմարտությունով կերկրպագեն Հորը, որովհետև Հայրն էլ այսպես է ուզում Իր երկրպագողներին»* (Հովհ. 4.23): Նոր Կտակարանի իրականության մեջ Աստված *ճշմարիտ* երկրպագողների է փնտրում:

Մենք չենք կարող վերադառնալ Հին Կտակարան, երկրպագել Աստծուն այնպես, ինչպես այն ժամանակ էին դա անում, և դրանով հանդերձ լինել *ճշմարիտ* երկրպագողներ: Ո՛չ, այլ Հիսուսն ասաց. *«...Բայց ժամանակ կգա, և հիմա է, որ ճշմարիտ երկրպագողները հոգով և ճշմարտությունով կերկրպագեն Հորը...»* (խ. 23):

Այո՛, Հին Կտակարանում մարդիկ Աստծուն երկրպագում էին Հին Ուխտում ունեցած իրենց կարողությունների ամբողջ լիությամբ, սակայն մենք Նոր Ուխտ ունենք և կարող ենք Հոգով ու ճշմարտությամբ երկրպագել Աստծուն:

Հին Կտակարանում կարելի է գտնել այնպիսի արտահայտություններ, որտեղ ասվում է, որ մարդիկ իրենց ամբողջ ուժով Տիրոջ *առջև* երկրպագություն էին անում: Դրա պատճառն այն է, որ նրանց երկրպագությունը միայն մարմնի մակարդակում էր. նրանք չունեին Հոգին: Չէին կարող երկրպագել *Հոգով* և Տիրոջ *մեջ*: Կարող էին միայն Տիրոջ *առջև* երկրպագել: Չէին կարող երկրպագել *Սուրբ Հոգու* ուժով և զորությամբ, այլ միայն *իրենց* ամբողջ ուժով: Աստծուն ճշմարիտ երկրպագող լինելու համար մենք պետք է երկրպագենք *Հոգով*, քանի որ *Նա Հոգի է*:

Նոր Ուխտում երկրպագության ամեն քայլ պետք է Հոգով արվի: Չպետք է փորձել հետ գնալ դեպի հին Ուխտը և երկրպագել այնպես, ինչպես նրանք էին երկրպագում: Հին Ուխտում մարդիկ հոգևորապես մեռած էին. վերստին ծնված չէին: Հին Կտակարանի սուրբերի փրկությունը կատարյալ

չէր մինչև Հիսուսի մահը, թաղումն ու հարությունը: Իսկ մենք՝ վերստին ծնվածներս, պետք է երկրպագենք ինչպես Աստծո համար կենդանացածներ: Մենք պետք է երկրպագենք Նրա Հոգու զորությամբ:

«Չպետք է երկրպագել Աստծուն այնպես, ինչպես ձեր նախնիներն էին անում դա այս սարում». ահա թե ինչ էր Հիսուսն ասում այդ կնոջը ջրհորի մոտ: Չպետք է նաև երկրպագել Նրան Երուսաղեմում, ինչպես հրեաներն էին անում:

Հիմա ճշմարիտ երկրպագողները պետք է երկրպագեն Հորը Հոգով և ճշմարտությամբ:

Հին Ուխտից Նոր Ուխտ անցում կատարելիս փոխվել է երկրպագության կարգը: Նոր Ուխտում ճշմարիտ երկրպագող լինելու համար հարկավոր է հետևել Նոր Ուխտի երկրպագության կարգին, այն է՝ *Հոգով* երկրպագել:

7 ՄԱՐՄՆՈՎ ՊԱ՞Ր, ԹԵ՞ ՀՈԳՈՎ ՊԱՐ

Այդ հուլիսյան առավոտը, երբ Հոգու հափշտակության մեջ էի Հիսուսի հետ, տեսա, թե ինչպես եմ Նրա հետ միասին կանգնած Թալսայի համաժողովների կենտրոնի առաստաղից վեր: Երբ նայում էի ներքև՝ հավաքվածներին, տեսնում էի պարող շատ մարդկանց: Հիսուսն ասաց ինձ. «Նոր Կտակարանում Տիրոջ առջև պարելը սուրբգրային չէ: Սուրբգրային *է* Հոգով պարելը»:

Տիրոջ առջև պարելիս մարմնով ենք պարում: Աստված Հոգի է: Մենք չենք կարող մարմնով երկրպագել Նրան, Ով Հոգի է: Հովհաննեսի 4-րդ գլխում Հիսուսն ասում է, որ Հայրը փնտրում է ճշմարիտ երկրպագողների, որոնք Հոգով կերկրպագեն Իրեն:

Իսկ ի՞նչ են անում շատերը, երբ պարում են առանց Հոգու օծության: Ինչպես Հիսուսը երկար բացատրեց ինձ, նրանք ոսկին փոխարինում են պղնձով: Թո՛ւյլ տվեք բացատրել, թե ինչ նկատի ունեմ, երբ ասում եմ, որ ոսկին փոխարինում են պղնձով:

Հին Կտակարանում Սողոմոնը կառուցեց տաճարը կամ Աստծո տունը: Եվ տաճարի բոլոր պարագաները ոսկուց էին:

Հետագայում ոսկե պարագաները հանեցին տաճարից, և Ռոբովամ թագավորը դրանց փոխարեն պղնձե պարագաներ բերեց Տիրոջ տաճար: Նա *մաքուր ոսկին* փոխարինեց *պղնձով*: Ուշադրություն դարձրեք, թե ինչ է Խոսքն ասում Տիրոջ տան կառուցվածքի մասին, այն պատված էր «մաքուր ոսկով»: Ոչ թե պարզապես ոսկի էր, այլ *մաքուր* ոսկի: Իսկ պղինձը մաքուր մետաղ չէ, այն կազմված է պղնձից և ցինկից, և Ռոբովամը *դրանով* փոխարինեց *մաքուր ոսկին*, որ տաճարում էր:

Գ ԹԱԳԱՎՈՐԱՑ 6.20–23, 28, 30

20 Եվ դաբիրը առաջը քսան կանգուն երկար և քսան կանգուն լայն և քսան կանգուն բարձր էր, և նրան ձուլեց մաքուր ՈՍԿՈՎ և սեղանը պատեց եղևնափայտով:
21 Եվ Սողոմոնը պատեց տունը ներսևանց ՄԱՔՈՒՐ ՈՍԿՈՎ և ՈՍԿԻ շղթաներ անցկացրեց դաբիրի առաջով և նրանց ՈՍԿՈՎ պատեց:
22 Եվ բոլոր տունը պատեց ՈՍԿՈՎ, մինչև որ բոլոր տունը վերջացավ, և բոլոր սեղանը [խոսքը վերաբերում է Տիրոջ տանը], որ դաբիրում էր, պատեց ՈՍԿՈՎ:
23 Եվ դաբիրում երկու քերովբեներ շինեց ձիթափայտից՝ բարձրությունը տասը կանգուն...
28 Եվ քերովբեներին պատեց ՈՍԿՈՎ...
30 Եվ տան հատակը պատեց ՈՍԿՈՎ ներսևանց և դրսևանց:

Գ ԹԱԳԱՎՈՐԱՑ 7.48–50

48 Եվ Սողոմոնը շինեց բոլոր այն կարասիները, որ Տիրոջ տանն էին, այսինքն՝ ՈՍԿԻ սեղանը և այն սեղանը, որի վրա լինում էին առաջավորության հացը՝ ՈՍԿՈՒՑ:
49 Եվ ճրագակալները՝ հինգը աջ կողմից և հինգը ձախ կողմից դաբիրի առաջ՝ մաքուր ՈՍԿՈՒՑ, և ծաղիկները և ճրագները և ունելիները՝ ՈՍԿՈՒՑ:
50 Եվ գավաթները, բազմակալները, կոնքերը, խնկաման-

ները և բուրվառները՝ ՄԱՔՈՒՐ ՈՍԿՈՒՑ, և ներքին տան, այսինքն՝ սրբությունների սրբության դռների, տան, այսինքն՝ տաճարի դռների ոսկի ծխնիները:

Բ ՄՆԱՑՈՐԴԱՑ 12.9, 10

9 Եվ Եգիպտոսի Սիսակ թագավորը եկավ Երուսաղեմի վրա և առավ Տիրոջ տան ԳԱՆՁԵՐԸ և թագավորի տան գանձերը [սա Սողոմոնի տունն էր]՝ բոլորը առավ. Սողոմոնի շինած ոսկի ասպարներն էլ առավ:

Այս խոսքերում տեսնում ենք, թե որոնք էին Աստծո տան գանձերը. ամեն բան ոսկուց էր պատրաստված:

10 Եվ Ռոբովամ թագավորը նրանց փոխարեն ՊՂՆՁԻ ասպարներ շինեց և հանձնեց թագավորի տան մուտքը պահպանող սուրհանդակների գլխավորներին:

Երբ ես և Հիսուսը հավաքվածներից վեր կանգնած զրուցում էինք, Նա ասաց ինձ. «Այս խարիզմատիկ շարժման մեջ քրիստոնյաները աշխարհի պղինձը բերել են Տիրոջ տաճար և դրանով են փոխարինել մաքուր ոսկին: Այն, ինչ նրանք ունեն, խառնուրդ է, մաքուր չէ: Եվ քանի որ նրանք ոսկին փոխարինել են պղնձով, ես միայն այդչափ կարող եմ օրհնել նրանց: Նրանք տաճար են բերել աշխարհի ծափերն ու պարերը»:

[Իհարկե հասկանում ենք, որ Նոր Կտակարանում Տիրոջ տաճարը եկեղեցին է՝ Քրիստոսի Մարմինը, և ոչ թե ձեռակերտ շենքը]:

Հիսուսը շարունակեց. «Նոր Կտակարանում տեսնում ենք, որ ամբողջ փառաբանությունն ու երկրպագությունը պետք է *Հոգով* արվի»: Հին Կտակարանում սուրբերն Աստծուն երկրպագել են միայն մարմնով, սակայն մենք՝ Նոր Կտակարանում, պետք է երկրպագենք *Հոգով*:

Մենք ապրում ենք Նոր Ուխտի ներքո, որը հիմնված է

ավելի լավ խոստումների վրա: Հետևաբար չպետք է վերադառնալ Հին Ուխտին և կրկնօրինակել այն, ինչ նրանք էին անում, այդ թվում նաև երկրպագության նրանց ձևը:

Կա մի բան, որը պետք է հասկանանք. թեև Հին Կտակարանի *սկզբունքները* և *օրինակները* կարող են նույնը լինել, ինչ Նոր Կտակարանում, դրանք նույն կերպ չեն *կիրառվում*:

Գուցե ասեք. «Սակայն Դավիթը պարում էր Աստծո առջև»: Այո՛, բայց դա Հին Կտակարանում էր: Նոր Կտակարանում մենք չենք պարում Տիրոջ *առջև*, այլ պարում ենք *Հոգով:*

Թո՛ւյլ տվեք հետևյալ կերպ բացատրել: Հին Կտակարանում կան սուրբգրային խոսքեր պարելու մասին: Օրինակ՝ Սաղմոս 149.3-ում գրված է. *«Թող Նրա անունը օրհնեն ցնծությունով (անգլերենում՝ պարով)...»:* Պարելու մասին գրված է նաև Սաղմոս 150.4-ում. «*Օրհնեցե՛ք նրան թմբուկով և պարով...»:* Աստվածաշնչում գրված է նաև. *«...Եվ Դավիթը Տիրոջ առաջ պարում էր* [Արդյոք գրվա՞ծ է, որ Դավիթը պարում էր Հոգով. ո՛չ] *ԲՈԼՈՐ ՈՒԺՈՎ...»* (Բ Թագ. 6.14): Դավիթը Տիրոջ առջև պարում էր *ԻՐ* ողջ ուժով:

Հիսուսն ասաց ինձ. *«Դավիթը Տիրոջ առջև պարում էր ԻՐ ողջ ՈՒԺՈՎ»:* Ո՞ւմ ուժով՝ Դավթի ուժով: Տիրոջ առջև պարելը հինկտակարանյան երկրպագության մաս էր:

Ինչպես արդեն ասել եմ, Աստվածաշունչը առաջընթաց հայտնություն է: Դավիթը, որ ապրում էր Հին Ուխտի ներքո, պարում էր ուխտի տապանակի առջև, երբ այն վերադարձվել էր փղշտացիների գերությունից: Այդ ժամանակ այդ տապանակը միակ վայրն էր երկրի վրա, որտեղ բնակվում էր Աստծո ներկայությունը:

Աստծո ներկայությունը տապանակի մեջ էր այն ժամանակից, երբ Մովսեսն այն կառուցել էր Աստծո հրամանով:

ԵԼԻՑ 25.1, 2, 8, 17, 21, 22

1 Եվ Եհովան խոսեց Մովսեսի հետ՝ ասելով.
2 «Խոսի՛ր Իսրայելի որդիների հետ, որ Ինձ ընծա բերեն. ամեն մարդուց, որ սիրտը հոժար է, առե՛ք Իմ ընծան...
8 Եվ Ինձ համար մի սրբարան շինեն, որ իրենց մեջ բնակվեմ...
17 Եվ մաքուր ոսկուց մի քավություն շինես. նրա երկարությունը երկու կանգուն ու կես, և նրա լայնությունը՝ մեկ կանգուն ու կես...
21 Եվ քավությունը տապանակի վրա պիտի դնես վերևից և տապանակի մեջ դնես այն վկայությունը, որ քեզ կտամ:
22 Եվ Ես կհանդիպեմ այնտեղ և կխոսեմ քեզ հետ, քավության վրայից վկայության տապանակի վրա եղած երկու քերովբեների մեջտեղից ամեն ինչ, որ պիտի պատվիրեմ քեզ Իսրայելի որդիների համար:

Մովսեսը հետևեց Աստծո ծրագրին ճիշտ այն օրինակով, որ տրվել էր իրեն: Եվ եկավ այն օրը, երբ աշխատանքը ավարտին հասավ:

ԵԼԻՑ 40.33–35

33 ...Եվ խորանի ու սեղանի շուրջը սրահը կանգնեցրեց, և սրահի դռանը վարագույրը դրեց: Այսպես Մովսեսը բոլոր գործերը վերջացրեց:
34 Եվ մի ամպ ծածկեց ժողովքի վրանը: Եվ Եհովայի փառքը լցրեց խորանը:
35 Եվ Մովսեսը չէր կարողանում մտնել ժողովքի վրանը, որովհետև ամպը նրա վրա նստել էր, և Եհովայի փառքը լցրել էր խորանը:

Աստծո ներկայությունը՝ Նրա փառքը, դրսևորվում էր երկրի վրա՝ համաձայն Աստծո ծրագրի և նպատակի:

Սակայն Իսրայելի պատմության մեջ տեսնում ենք, որ իսրայելցիների մեղքի պատճառով նրանց թշնամիները՝ փղշտացիները, կարողացան ավար վերցնել Աստծո տապանակը:

Դավիթը, որ Աստծո սրտի համեմատ մարդ էր, թագավոր դարձավ և Աստծո օգնությամբ հաղթեց փղշտացիներին ու մի քանի մարդու հետ գնաց Աստծո ուխտի տապանակը հետ բերելու (Բ Թագ. 6.1, 2):

Սակայն առաջին անգամ, երբ Դավիթը փորձեց հետ բերել ուխտի տապանակը, նա սխալ թույլ տվեց: Նրա ծրագիրը ճիշտ էր, նույնիսկ այն նպատակը, որ նա հետապնդում էր, ճիշտ էր, սակայն նրա ընտրած կերպը Աստծո կերպը չէր: Տապանակը փոխադրելիս նա Աստծո հայտնի ծրագիրը փոխարինեց մարդու ծրագրով. Աստծո ուխտի տապանակը նոր սայլի մեջ դրեց (Բ Թագ. 6.3):

Աստվածաշնչի *Companion* թարգմանությունը հետաքրքիր ծանոթագրություն ունի այն մասին, թե ինչու էր ուխտի տապանակը նոր սայլի մեջ դնելու Դավթի փորձն անհաջող:

Ծանոթագրություն #3. Նոր սայլ. սա հակասում էր Աստծո տված օրենքին (Թվոց 4.15, 7.9, 10.21, Երկր. օր. 10.8, Հեսու 3.14, Բ Թագ. 15.24, Ա Մնաց. 13.7, 15.2 և այլն): Երբ փղշտացիներն առանց իմանալու արեցին դա (Ա Թագ. 6.7), նրանց վրա դատաստան չեկավ, քանի որ Մովսեսի օրենքը նրանց չէր տրվել: Ինչ վերաբերում է Դավթին, ապա նա պետք է իմանար Օրենքը, ուստի նրա վրա դատաստան եկավ: Այստեղ կարևոր դասն այն է, որ ցանկացած բան, ինչն ավելացվում է Աստծուն մատուցվող երկրպագությանը, սակայն հակասում է Նրա պահանջներին, արժանի է դատաստանի: Սա վերաբերում է ցանկացած բանի, ինչը հակասում է Հովհաննես 4.24-ին, ցանկացած բանի, որ մարմնից է և «ոչինչ օգուտ չի տալիս» (Հովի. 6.64): Այդ ամենը նման է Դավթի «նոր սայլին» և մեղք է Աստծո աչքում*:

Բացի այդ՝ իսրայելցիներին Աստծո Խոսքով հրահանգված էր, որ «սրբարանի ծառայությունը» պատկանում էր Կահաթի

որդիներին: Նրա՛նք պետք է իրենց ուսերի վրա տանեին ուխտի տապանակը (Թվոց 4.15, 7.9):

Առաջին անգամ ուխտի տապանակը բերելիս եզները երերացին և թեքեցին այն: Երբ Ոզան ձեռքը մեկնեց և բռնեց այն, Տիրոջ բարկությունը բորբոքվեց նրա վրա:

Բ ԹԱԳԱՎՈՐԱՑ 6.6, 7

6 Եվ երբ եկան Նաքոնի կալը, Ոզան ձեռքը մեկնեց Աստծո տապանակին և բռնեց նրան, որովհետև եզները ծռել էին նրան:
7 Եվ Տիրոջ բարկությունը բորբոքվեց Ոզայի դեմ, և Աստված զարկեց նրան այնտեղ այս հանցանքի համար: Եվ նա մեռավ նույն տեղը Աստծո տապանակի մոտ:

Տապանակը տեղափոխելու հաջորդ փորձը պսակվեց հաջողությամբ: Դավիթն Աստծո ներկայության տապանակի հետ վարվեց ըստ Աստծո *ծրագրի* և ստացավ Աստծո օրհնությունը: Հին Ուխտի ներքո ապրելով՝ նա իսկապես *իր* ամբողջ *ուժով* պարեց Տիրոջ ներկայության տապանակի առջև:

Ավելի ուշ Դավթի որդին՝ Սողոմոնը, կառուցեց *«...Տիրոջ տունը Երուսաղեմում՝ Մորիա սարի վրա...»* (Բ Մնաց. 3.1), որտեղ՝ Սրբություն Սրբոցում, Տիրոջ ներկայությունն էր: Ինչպես արդեն ասել եմ, երկրի վրա Տիրոջ տաճարը կառուցելիս օգտագործվել է մեծ քանակության մաքուր ոսկի: Ինչպես Մովսեսը, այնպես էլ Սողոմոնն ավարտին հասցրեց իր աշխատանքը:

Բ ՄՆԱՑՈՐԴԱՑ 5.1, 7, 13–14

1 Եվ այսպես վերջացավ այն ամեն գործը, որ Սողոմոնն արեց Տիրոջ տան համար: Եվ Սողոմոնը բերեց իր հայր Դավթի նվերները՝ արծաթը, ոսկին և բոլոր գործիքները, դրեց Աստծո տան գանձերի մեջ:
7 Եվ քահանաները բերեցին Տիրոջ ուխտի տապանակը

իր տեղը՝ տան դաբիրում, սրբությունների սրբության մեջ, քերովբեների թևերի տակ:
13 Եվ էր ինչպես մեկ՝ փող հնչեցնողները և երգողները՝ մեկ ձայն էր լսվում Տիրոջը օրհնելիս և գովելիս: Եվ հենց որ փողերի և ծնծղաների և նվագարանների ձայնը բարձրացրին Տիրոջը օրհնելով, որովհետև բարի է, որովհետև Նրա ողորմությունը հավիտյան է, այն ժամանակ Տիրոջ տունը լցրեց ամպը:
14 Եվ քահանաները չկարողացան կանգնել ծառայելու ամպի պատճառով, որովհետև Տիրոջ փառքը լցրել էր Աստծո տունը:

Եվ Տերը լցրեց Սողոմոնի տաճարը այնպես, ինչպես Մովսեսի ուխտի տապանակը, որը երկրի վրա Աստծո բնակության առաջին վայրն էր:

Տերն Իսրայելի համար հաստատեց «Իր տոները» (Ղևտ. 23.1, 2): Եվ իսրայելցիներից պահանջվում էր հատուկ կերպով պահել այդ տոները. «*Տարին երեք անգամ քո ամեն արուները Տեր Աստծո առաջ պիտի երևան*» (Ելից 23.17):

«Տեր Աստծո առաջ երևալու» համար նրանք պետք է գնային այն վայրը, որտեղ Աստծո տապանակն էր: Ելից գրքի 23.17-ի եբրայերեն բնագրում այդ երեք տոները կոչվում են *ռեգալիզմ*: Եբրայերեն *ռեգալ* նշանակում է «ոտք», իսկ *ռեգալիզմը* հոգնակի թվով է, այսինքն՝ «ոտքեր»: Այլ կերպ ասած՝ ֆիզիկական ոտքերով պետք էր քայլել դեպի այն վայրը, որտեղ Աստծո ներկայությունն էր:

Դա էր պատճառը, որ Սողոմոնի տաճարի կառուցումից հետո պետք է գնային Երուսաղեմ՝ Աստծուն երկրպագելու: Այդ ժամանակ Աստծո սուրբ ներկայությունը Երուսաղեմում կառուցված Սողոմոնի տաճարի Սրբություն Սրբոցում էր: Ոչ ոք՝ բացի քահանայապետից, չէր համարձակվում մոտենալու Սրբություն Սրբոցին, իսկ վերջինս դա պետք է աներ մեծ զգուշությամբ, այլապես կմահանար:

Սակայն երբ Հիսուսը խաչի վրա մահացավ, ինչպես Նոր Կտակարանն է ասում, «...*տաճարի վարագույրը երկու ճղվեց վերևից մինչև ցածը*...» (Մատթ. 27.51): Աստված այլևս չէր բնակվելու ձեռակերտ տաճարներում:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի մահից, թաղումից, հարությունից և համբարձումից հետո եկեղեցուն ուղղված Թղթերը բացահայտում են, որ հիմա *մենք*՝ եկեղեցին է Աստծո տունը:

Ա ԿՈՐՆԹԱՑԻՍ 3.16

16 Չգիտե՞ք, որ դուք Աստծո տաճար եք, և Աստծո Հոգին բնակված է ձեզանում:

Բ ԿՈՐՆԹԱՑԻՍ 6.16

16 Կամ ի՞նչ համաձայնություն ունի Աստծո տաճարը կուռքերի հետ: Որովհետև դուք կենդանի Աստծո տաճարն եք, ինչպես Աստված ասաց, *թե* նրանցում կբնակվեմ և նրանցում ման կգամ և նրանց Աստված կլինեմ, և նրանք՝ Իմ ժողովուրդ:

ԵԲՐԱՅԵՑԻՍ 3.6

6 Բայց Քրիստոսն ինչպես որդի Իր տան վրա, որի տունը մենք ենք...

Ա ՏԻՄՈԹԵՈՍ 3.15

15 Իսկ եթե ուշանամ, որ գիտենաս, թե ինչպես պետք է Աստծո տան մեջ վարվել, որ է կենդանի Աստծո եկեղեցի, սյուն և հաստատություն ճշմարտության:

Հիմա Աստված Իր Հոգով ապրում է մարդկանց և ոչ թե ձեռակերտ շինությունների մեջ:

Դավիթը, որ ապրում էր Հին Ուխտի ներքո, իր ամբողջ ուժով պարում էր Տիրոջ ներկայության *առջև*:

Այսօր կենդանի Աստծո կենդանի տաճարները պարում են *Հոգով*:

Մենք պետք է հստակ տարբերակենք հինկտակարանյան երկրպագությունը, որն արվում էր մարմնով, և նորկտակարանյան երկրպագությունը, որն արվում է Հոգով: Հոգով պարելու և մարմնով ցուցադրություն անելու կամ երաժշտությանը համահունչ շարժվելու մեջ տարբերություն կա: Երբ իսկապես Հոգով եք պարում, նույնիսկ երաժշտության կարիք չկա: Եկեղեցում շատերը պարզապես պարում են *երաժշտության տակ*: Դա նույնը չէ, ինչ Հոգով պարելը, այլ նման է ոսկին պղնձով փոխարինելուն: Հոգով պարելու համար երաժշտությունը պարտադիր պայման չէ:

Պարտադիր չէ նաև ձեր պարը դիտող մարդկանց ներկայությունը ձեր շուրջը, քանի որ այն նախատեսված չէ նրա համար, որ մարդիկ նայեն ձեզ, այլ արտահայտում է ձեր սրտում եղածն Աստծո նկատմամբ:

Լսել եմ, որ կան եկեղեցիներ, որոնք պարի դասեր են անցկացնում, որ մարդիկ սովորեն պարով երկրպագել Աստծուն: Երկրպագության պարը հնարավոր է սովորեցնել մարդկանց այնքան, որքան հնարավոր է սովորեցնել լեզուներով խոսել:

Գուցե ասեք. «Սակայն չէ՞ որ կարելի է մարդկանց երգել սովորեցնել»: Այո՛, սակայն Նոր Կտակարանում կա խոսք, որը վերաբերում է Աստծուն ուղղված երկրպագության երգին: Ճիշտ է, մարդիկ եկեղեցում երգեցողության փորձեր են անում, սակայն երկրպագության ծառայության ժամանակ սատանայական երգեր չեն երգում:

Նկատե՞լ եք, որ երբ ինչ-որ մեկը փառաբանության երգ է երգում՝ երգչախմբում կամ մենակ, կարողանում ես փակել աչքերդ, միտքդ կտրել այդ մարդուց և ուշադրությունդ կենտրոնացնել Աստծուն երկրպագելու վրա: Մինչդեռ չես կարող փակել աչքերդ և երկրպագել Աստծուն, երբ ինչ-որ մեկը պարում է. ընդհակառակը՝ ամբողջ ուշադրությունդ պարողի վրա է:

Մարդկանց՝ Հոգով պարել սովորեցնելը ոչ այլ ինչ է, քան էժանագին պղինձ: Պատկերացնո՞ւմ եք՝ լեզուներով խոսելու դաս լիներ: Հնարավոր չէ մարդկանց լեզուներով խոսել սովորեցնել: Կարելի է մարդուն սովորեցնել ինչպես վերստին ծնվել և հանձնվել Սուրբ Հոգուն, սակայն միայն Սուրբ Հոգին է, որ կարող է տալ լեզուներով խոսելու բառերն ու արտահայտությունները:

Մարդիկ փորձում են պատկերավոր պարով և բալետով եկեղեցում երկրպագել Աստծուն: Ընկերնե՛ր, հնարավոր չէ Աստծո շարժն ու զորությունը արտահայտել պարի միջոցով: Սուրբգրային նման խոսք չկա: Դա նման է ոսկին պղնձով փոխարինելուն:

Հոգու բաները կարող են պատկերվել միայն Հոգով: Եվ Ա Կորնթացիս 12-րդ գլխում Սուրբ Հոգին հստակ ասել է, թե ինչ կերպերով է Նա դրսևորում Իրեն: Աստծո լիակատար օրհնությունն ու բարիքը *չեն կարող* և *չեն* գա մեզ վրա, քանի դեռ Տիրոջ տաճարում ոսկին փոխարինում ենք պղնձով:

Շատ պարողներ և նույնիսկ ծառայողներ կասեն, թե այդպես երկրպագում են Աստծուն, բայց եթե զգայուն լինեին Սուրբ Հոգու նկատմամբ, կհասկանային, որ նման մարմնավոր ցուցադրությունները տրտմեցնում են Նրան: Ես հյուրընկալվել եմ այնպիսի հավաքույթներում, որոնցից հեռացել է Աստծո ներկայությունը նման թատերական պարերից հետո:

Բացի այդ՝ նկատե՞լ եք արդյոք, որ միայն փոքրամարմին կանայք են պարում բալետ և բեմական պարեր: Եթե նման տեսակի պարերը Հոգուց լինեին, ապա ցանկացած մարդ՝ նիհար, թե գեր, կկարողանար պարել դրանք, և բոլորն օրհնված կլինեին: Ներկա եմ եղել նաև այնպիսի ծառայություններ, որոնց ընթացքում գեր մարդիկ Հոգով պարել են, և ամբողջ հարանվանությունն օրհնվել է:

Երբ մարդիկ իսկապես Հոգով են պարում, նշանակություն չունի, թե ով է պարողը, բոլոր հավաքվածների շրջանում ինչ-որ քաղցր բույր է տարածվում: Իսկ երբ նման աշխարհիկ պարեր են սկսվում, հարանվանությունը նայում է պարողներին, նրանց ուշադրությունը շեղվում է Տիրոջից:

Թո՛ւյլ տվեք ևս մեկ բան ասել: Քրիստոնյա տղամարդիկ կարծիք են հայտնել՝ ասելով, որ բեմական պարերի ժամանակ կանանց հագուստը, ինչպես նաև նրանց շարժումներն այնքան զգայական են, որ իրենք ստիպված են եղել հայացքը փախցնել: Սա վերաբերում է նաև շատ կանանց, որոնք երաժշտության ռիթմի տակ շարժվում են եկեղեցում: Չեմ կարծում, թե տղամարդկանց շրջանում նման արձագանք գտնող պարերն Աստծո Հոգուց են: Պարզապես անկեղծ խոսում եմ ձեզ հետ:

Հովիվները պետք է սովորեցնեն իրենց եկեղեցիների անդամներին տաճար վերադարձնել մաքուր ոսկին և հեռացնել պղինձը: Պղինձը նման է ոսկուն (տարբերությունը տեսնելու համար հարկավոր է մոտիկից ուսումնասիրել), սակայն Աստված մաքուր ոսկին է ցանկանում, և մենք նույնպես պետք է դա ցանկանանք:

Չպետք է վերադառնալ Հին Ուխտ, վերցնել նրանց պարերը և Նոր Ուխտում դրանցով երկրպագել Աստծուն: Մենք չպետք է եկեղեցի բերենք աշխարհի պարերի պղինձը:

Կարևոր է նշել, որ Նոր Կտակարանում փառաբանության և երկրպագության նպատակով Տիրոջ *առջև* պարելու մասին մեկ խոսք անգամ չկա: Այդուհանդերձ, Նոր Կտակարանում շեշտադրվում է Սուրբ Հոգով լցվելը, որպեսզի մեր երկրպագությունն ու փառաբանությունը *Հոգով* լինի: Եթե ճանաչում եք Աստծո շարժը, ապա կիմանաք, որ Սուրբ Հոգին երբեմն մղում է *Հոգով* պարելուն և երբեմն իսկապես շարժում է ոտ-

քերդ: Սակայն Նա չէ, որ պարի է մղում այն մարդկանց, որոնք պարզապես *մարմնավոր* ցուցադրություն են կազմակերպում:

Երբ պարը Հոգուց է, այն բոլորին օրհնում է, իսկ երբ մարմնավոր է, ոչ ոք չի օրհնվում: Գուցե այն գեղեցիկ լինի, և մարդիկ հիացմունք արտահայտեն, սակայն իրական Հոգով պարի կեղծված պատճենն է ընդամենը: Կա պարելու իրական օծություն. Սուրբ Հոգին այդ օծությունը տալիս է, ինչպես *Ինքն է կամենում,* ոչ թե ինչպես մենք ենք կամենում: Ճիշտ է, մենք պետք է տեղ տանք Նրան, սակայն պարի արտահայտումը Նրանից է գալիս, արդյունքում *Հոգով* պար է ստացվում:

Ես շատ հաճախ եմ Հոգով պարում, սակայն չեմ ձևացնում: Եթե պարելու օծություն չկա, ապա չեմ պարում: Դա նման կլիներ լեզուներով ուղերձին առանց օծության: Բոլորս էլ ականատես եղել ենք նման բաների: Դա մեռած գործ է և սպանում է ծառայությունը:

Մեր շատ հավաքույթների ժամանակ, երբ Աստված շարժվում է, որ բժշկի և օրհնի մարդկանց, ոմանք չեն կարողանում ոչինչ զանազանել: Նրանք կարող են ինչ-որ բան ասել կամ անել առանց օծության: Եվ եթե մենք չսովորեցնեք նրանց ճիշտ կարգը, ապա թե՛ իրենք իրենց կվնասեն և թե՛ ծառայությունը խառնաշփոթի կվերածեն:

Մի քանի իրական պատմությունների օրինակով բացատրեմ, թե ինչ ազդեցություն է ունենում ծառայության վրա Հոգով պարը՝ ի հակադրություն մարմնավոր պարի:

Տարիներ առաջ, երբ հովիվ էի Տեխաս նահանգի Ֆարմերսվիլ քաղաքի եկեղեցում, տեսա, թե ինչպես մեկ ուրիշ եկեղեցուց մի կին բառացիորեն վեր կացավ մահվան մահճից հինգշաբթի երեկոյան անցկացվող մեր ծառայություններ-

րից մեկի ժամանակ: Բժիշկներն ասել էին, թե նրան մի քանի օրվա կյանք էր մնացել, բայց Աստված բժշկեց նրան: Հաջորդ կիրակի նա եկավ մեր եկեղեցի:

Կիրակի առավոտյան ծառայության ժամանակ խնդրեցի այդ քույրիկին, որ վկայեր և պատմեր մեզ իր զարմանահրաշ բժշկության մասին: Նա եկավ նաև այդ կիրակի երեկոյան անցկացվող մեր ավետարանչական հավաքույթին, որին մասնակցում էին եկեղեցու անդամ չհանդիսացող և մեղավոր մարդիկ: Ես ցանկացա, որ նրանք ևս լսեն այդ կնոջ վկայությունը, ուստի խնդրեցի, որ նա ոտքի կանգնի և պատմի իր վկայությունը:

Նա ոտքի կանգնեց և պատմեց մեզ, թե ինչպես էր իր ամուսինը տարել իրեն երեք տարբեր բժշկական կենտրոններ, և բոլոր բժիշկները նույն բանն էին ասել. «Ոչնչով չենք կարող օգնել քեզ, քանի որ քեզ մի քանի օր է մնացել»: Հետո նա պատմեց, թե ինչպես էր Աստված բժշկել իրեն հինգշաբթի: Երբ ասաց դա, սկսեց պարել: Ա՛յ թե Հոգով պար էր: Ես վեր կացա, մոտեցա ամբիոնին և սկսեցի քարոզել: Նա պարեց քարոզիս ամբողջ ընթացքում: Հետո եկավ մարդկանց խորանի մոտ հրավիրելու պահը, իսկ նա դեռ շարունակում էր պարել: Մենք հատակին գորգ չունեինք (այն ժամանակ նույնիսկ գորգ գնելու գումար չունեինք), իսկ հատակը փայտյա էր: Այդ փոքրամարմին կինը այնպե՛ս էր պարում, որ այդ հավաքույթին ներկա մեղավորները ամիսներ շարունակ դրա մասին էին խոսում:

Հաջորդ շաբաթ օրը նա պատմեց մեզ, որ ստիպված է եղել նոր զույգ կոշիկ գնել, և ցույց տվեց այն կոշիկները, որոնք հագել էր եկեղեցում պարելիս: Դրանք գնել էր եկեղեցում պարելու նախորդ օրը. մաշվել էր կոշիկների 6 մմ հաստությամբ ներբանը, սակայն ոչ ոք ոչ մի ձայն չէր լսել, նա ոչ մի

վայրկյան չէր ընդհատել ծառայությունը: Ես շարունակել էի քարոզս: Նույնիսկ չէիք զգա, որ ինչ-որ մեկը պարում էր, եթե նրան չնայեիք: Դա ինքնին հրաշք էր:

Ոչ այնքան վաղուց՝ մեր արշավներից մեկի ժամանակ, հարանվանությունից մի քանիսը վեր կացան և «Ռեմայի» փառաբանողների մի յուրահատուկ երգի կեսից սկսեցին զույգերով քառակուսի կազմած պարել: Դա անմիջապես կանգնեցրեց Սուրբ Հոգու շարժը: Աստծո Հոգին տրտմեց: Նա հրաշալի ձևով շարժվում էր ծառայության ժամանակ, բայց երբ այդ մարդիկ սկսեցին քառակուսի կազմած պարը, եկեղեցին դադարեց Աստծուն երկրպագելուց և նույնիսկ երգը լսելուց: Դա պարզապես հանգցրեց ամբողջ ծառայությունը:

Սուրբ Հոգին շարժեց մեր փառաբանողներից մեկին, ու նա սկսեց հորդորել մարդկանց՝ ասելով, որ զույգերով քառակուսի կազմած պարը Հոգուց չէ: Այնուհետև Սուրբ Հոգին եկավ նրա վրա, և նա սկսեց Հոգով պարել, ու դա հետ բերեց օծությունը: Այստեղ էլ կարող եք տեսնել, որ մարդիկ ոսկու փոխարեն պղինձն էին բերել Տիրոջ տաճար: Նրանք փոխարինել էին ոսկին պղնձով:

Երբ նայում եք այդ երկուսին՝ պղնձին և ոսկուն, դժվար է տեսնել տարբերությունը: Հարկավոր է մոտիկից ուսումնասիրել՝ տարբերությունը հասկանալու համար: Իսկ Աստված *մաքուր* ոսկի է ուզում:

Մինչ ճամբարային հավաքույթը Հիսուսի այցելության ժամանակ, երբ ես և Հիսուսը հավաքվածներից վեր էինք կանգնած, նայեցի ներքև և տեսա, թե ինչպիսին էր լինելու չորեքշաբթի երեկոյան հավաքույթը: Տեսա Բադդիին՝ փեսայիս, որ Հոգով պարում էր, տեսա, թե ինչպես էի ես Հոգով պարում: Եվս մեկին տեսա, որ հավաքվածներից առանձնացել ու Հոգով պարում էր: Չգիտեի, թե նա ով էր, գիտեի միայն, որ նա

նախկինում երբևէ Հոգով չէր պարել, սակայն միշտ ցանկացել էր:

Հաջորդ շաբաթ՝ ճամբարային հավաքույթին, ամեն բան հենց այդպես էլ տեղի ունեցավ: Բադդին պարեց Հոգով, այնպես, ինչպես տեսել էի: Ես նույնպես արեցի այն, ինչ արդեն տեսել էի: Եվ քանի որ նախապես տեսել էի, թե ինչ էր տեղի ունենալու Հոգում, մարդկանց ասացի. «Այստեղ կա մեկը, որը երբեք Հոգով չի պարել, բայց միշտ ցանկացել է»: Եվ մատնացույց արեցի դահլիճի այն հատվածը, որտեղ Հիսուսի այցելության ժամանակ տեսել էի, որ այդ մարդը պարում էր:

Մի երիտասարդ ոտքի կանգնեց, և ես նրան ասացի. «Ես մատով քեզ ցույց կտամ, և Սուրբ Հոգին կգա քեզ վրա: Պարզապես հանձնվի՛ր Նրան: Երբ Նա գա քեզ վրա, դու Հոգով կպարես»: Մատով ցույց տվեցի նրան, և Սուրբ Հոգին եկավ նրա վրա, ու նա սկսեց Հոգով պարել:

Մարմնավոր պարի և Հոգով պարի միջև տարբերությունն այն է, որ առաջինի դեպքում *դուք եք որոշում պարել*, իսկ երկրորդի դեպքում *Հոգին է դրդում*: Ես պարզապես ասում եմ ձեզ այն, ինչ Տերն է ինձ ասել, սակայն որոշումը ձերն է: Այս հարցի շուրջ ձեր բողոքներն ինձ մի՛ ուղղեք. ես գիտեմ միայն այն, ինչ Հիսուսը՝ եկեղեցու Գլուխն է ինձ ասել. «Նոր Կտակարանում Տիրոջ առջև պարելը սուրբգրային չէ: Մինչդեռ Հոգով պարելը սուրբգրային է»:

Աստծո Հոգով առաջնորդված եմ ասում, որ տաճար պղինձ բերելը տրտմեցնում է Նրան: Երբ նայում էինք, թե ինչպես էին ճամբարային ծառայությունների ժամանակ ոմանք մարմնով պարում, Հիսուսն ինձ ասաց. «Ես նրանց կօրհնեմ, քանի որ Իմ զավակներն են, և Ես սիրում եմ նրանց: Սակայն կարող եմ օրհնել միայն սահմանափակ չափով. նրանք չեն կարող ունենալ Իմ օրհնության ամբողջ լիությունը»:

Չգիտեմ՝ինչպես դուք, բայց ինձ չի բավականացնում այն, ինչն Աստծո լավագույնը չէ: Ամեն ծառայության մեջ ցանկանում եմ այն ամենալավը, որն Աստված ունի: Ես ցանկանում եմ ունենալ Նրա օրհնության ԱՄԲՈՂՋ ԼԻՈՒԹՅՈՒՆԸ: Ցանկանում եմ Աստծո Սուրբ Հոգու լիարժեք շարժն ու դրսևորումը: Իսկ դո՞ւք:

8 ԱԿՆԱԾԱՆՔ. ԱՍՏԾՈ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶՈՐՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԼԻՆ

Այդ հինգշաբթի՝ 1987 թվականի հուլիսի 16-ին, երբ առաջին անգամ գիշերը նայեցի ժամացույցի լուսավորված թվատախտակին, տեսա, որ ժամը երեքն էր: Իսկ երբ այցելությունից հետո նայեցի, վեցից յոթ րոպե էր պակաս:

Այն միջանկյալ ժամերն էին, երբ Հոգու մեջ հափշտակություն էի վերապրել: Հայտնություն 1.10-ում ասվում է, որ Հովհաննեսը *«...կիրակի օրը (անգլերենում՝ Տիրոջ օրը) եղավ Հոգում...»* և տեսավ Հիսուսին:

Մենք շատ քիչ բան գիտենք Հոգում լինելու մասին, որպեսզի ամբողջ ճշմարտությունը ներկայացնենք: Հոգով օծվում ենք աղոթելու կամ քարոզելու համար, բայց դա այն չէր, ինչ Հովհաննեսը նկատի ուներ, երբ ասում էր, որ Տիրոջ օրը Հոգում էր եղել: Երբ Հոգում ես (ես մի քանի անգամ եղել եմ այդ վիճակում), այդ պահին չես գիտակցում, որ բնական իրականության մեջ ես, քանի որ Հոգու՝ հոգևոր իրականության մեջ ես:

Մի առավոտ՝ հուլիսի 16-ին, Հոգում էի և տեսա Հիսուսին: Տեսա Նրան այնքան պարզ, որքան կտեսնեմ ձեզ, եթե իմ

առջև կանգնեք: Նրա հետ միասին հափշտակվեցի մի վայր, որը Թալսայի համաժողովների կենտրոնից վերև էր, և մենք այնտեղից նայում էինք ներքև՝ երկուշաբթի՝ հուլիսի 20-ին մեկնարկող ճամբարային հավաքույթին:

Թեև մենք շենքից վեր էինք, ինձ համար տեսանելի էր դահլիճը:

Տեսա, թե ինչպես մեր առջև բացվեց ծառայություններից մեկը: Մինչ ես հետևում էի բացված տեսարանին, Հիսուսը մեկնաբանում էր այն: Տեսնում էի մեզ բոլորիս դահլիճում ծառայությանը մասնակցելիս: Տեսնում էի, թե ինչպես էինք բոլորս ծափահարում, այնպես, ինչպես սովորաբար անում են խարիզմատիկ շրջանակներում:

Հիսուսը մի բան ասաց, որն ապշեցրեց ինձ: Փորձե՛ք ճիշտ հասկանալ այն, ինչ պատրաստվում եմ ասելու, որպեսզի ձեր մեջ սխալ տպավորություն չձևավորվի: Նա ասաց ինձ. «Ծափերը ո՛չ փառաբանություն են, ո՛չ էլ երկրպագություն»: *Հիսուսն* ինձ ասաց դա: Այնուհետև շարունակեց. «Ծափ տալ նշանակում է հավանություն տալ»:

Առաջին անգամ էի նման բան լսում: Եվ թեև երբեմն ինձ անհանգստացնում էր այն փաստը, որ հարանվանությունն այնքան շատ էր ծափահարում Աստծուց ներշնչված խոսքի ժամանակ, որ օծությունը հեռանում էր, և մենք բաց էինք թողնում Աստծո Հոգու բաները, որոնք Նա կամենում էր տալ մեզ, Հիսուսի այդ խոսքերը գրեթե ցնցեցին ինձ:

Սակայն երբ Նա շարունակեց Իր Խոսքը, ես հասկացա, թե ինչու էր դա ինձ անհանգստացնում: Եվ ամենալավն այն է, որ տեսա, թե ինչ կարելի էր անել Նրա հետ համագործակցելու համար, որպեսզի Նրա օրհնության լիությունը և Հոգու շարժի խորությունը գային եկեղեցու վրա:

ՕՐՀՆՈՒԹՅՈ՞ՒՆ, ԹԵ ԽՈՉԸՆԴՈՏ

Նախ և առաջ մենք պետք է հասկանանք, թե ինչ է ծափահարությունը, որպեսզի ավելի լավ պատկերացնենք, թե այն ինչ տեղ պետք է ունենա մեր ծառայություններում: Հիսուսն ասաց, որ դա ո՛չ փառաբանություն էր, ո՛չ էլ երկրպագություն: Եթե փառաբանություն և երկրպագություն չէ, ապա ի՞նչ տեղ է *առհասարակ* զբաղեցնում մեր ծառայություններում:

Ճամբարային հավաքույթից հետո մի փոքրիկ պատկեր օգնեց ինձ ավելի լավ հասկանալու, թե ինչ է ծափահարությունը, և ես ուզում եմ պատմել ձեզ դրա մասին:

Երբ փոքրիկ տղան իր հայրիկից ծննդյան նվեր է ստանում, նա կարող է ծափ տալ և ցատկոտել: Դա չի նշանակում, որ նա փառաբանում կամ երկրպագում է իր հորը, այլ իր ուրախությունն ու ոգևորությունն է արտահայտում նրանից, ինչ ստացել է: Այդպես դրսևորվում են նրա հույզերը: Ծառայությունների ժամանակ մենք երբեմն ծափահարում ենք, քանի որ ուրախ ենք կամ ոգևորված, սակայն դա փառաբանություն կամ երկրպագություն չէ Աստծուն:

Իր այցելության ժամանակ Հիսուսն ինձ հետ քննարկեց ծափահարության թեման՝ ըստ Սուրբ գրքի: Նա ասաց. «Նոր Կտակարանում մեկ խոսք անգամ չկա ծափահարությունների մասին: Աստվածաշունչը Սաղմոս 47.1-ում ասում է. *«Ծա՛փ տվեք, ամե՛ն ժողովուրդներ. ցնծության ձայնով դեպի Աստված աղաղակե՛ք»*: Այս խոսքում ծափահարությունը հաղթական տրամադրվածության նշան էր, ոչ թե փառաբանության ձև: Սա միակ անգամն է, որ հիշատակվում է ծափահարությունն Աստծո առջև, այն էլ Հին Կտակարանում: Հին Կտակարանում նաև այլ դեպքեր են եղել, երբ մարդիկ այլ պատճառներով ծափ են տվել, բայց դա ոչ մի առնչություն չի ունեցել Աստծուն երկրպագելու հետ: Կան նաև խոսքեր այն մասին,

որ ալիքներն ու հեղեղներն են ծափ զարկում, սակայն հասկանում ենք, որ սա պատկերավոր լեզու է:

Հիսուսն ասաց ինձ. «Նոր Կտակարանում չկա գեթ մեկ սուրբգրային խոսք, որում ինչ-որ մեկը ծափ է տալիս»:

Փոխարենը Նոր Կտակարանում կա խոսք ձեռքերը վեր բարձրացնելու և Տիրոջը երկրպագելու մասին: Իրականում, միակ ցուցումը, որ ստանում ենք Նոր Կտակարանում ձեռքերով ինչ-որ բան անելու մասին, ձեռքերը վեր բարձրացնելն է: Հիշո՞ւմ եք՝ Պողոսը կամ, ինչպես ես եմ սիրում ասել, Սուրբ Հոգին Պողոսի միջոցով ասում է. «*Արդ կամենում եմ, որ մարդիկ ամեն տեղ աղոթք անեն, սուրբ ձեռքեր վեր բարձրացնեն առանց բարկության և երկմտության*» (Ա Տիմ. 2.8):

Բոլորս էլ լսել ենք, որ փառաբանությունը աղոթքի բարձրագույն ձևն է: Աղոթքն իրականում այն չէ, ինչ շատերը կարծում են: Աղոթքը «տո՛ւր, տո՛ւր, տո՛ւրը» չէ: Աղոթքը նաև ընկերակցություն է Աստծո հետ: Աղոթքի տեսակներից մեկն էլ փառաբանությունն ու երկրպագությունն է: Այդ իսկ պատճառով մեղք չենք գործի, եթե Ա Տիմոթեոս 2.8-ն այսպես կարդանք. «*Արդ կամենում եմ, որ մարդիկ ամեն տեղ*... [փառաբանեն]*, սուրբ ձեռքեր վեր բարձրացնեն...»:*

Աշխարհում էլ մարդիկ ծափահարում են, սակայն չեք տեսնի, որ ձեռքերը վեր բարձրացնեն՝ փառաբանելու կամ տոնելու նպատակով: Ո՛չ, Տեր Հիսուս Քրիստոսի եկեղեցին է սուրբ ձեռքեր վեր բարձրացնում՝ Տիրոջը փառաբանելու:

«Աշխարհը ծափահարում է,- ասաց Հիսուսը,- սուրբերը փառաբանում են»:

Հետո Նա հետևյալ օրինակը բերեց. կարող եք անցնել մութ գինետների (գիշերային ակումբներ, գարեջրատներ և այլն) մոտով և ներս նայել՝ տեսնելու, թե ինչ է կատարվում այնտեղ: Գուցե ներսում գտնվողները մերկապարուհիների ինչ-

որ ցուցադրություն դիտելիս լինեն և ծափահարեն: Հնարավոր է՝ էկրանով ինչ-որ մարզական իրադարձության հետևեն, և նորից կտեսնեք, որ ծափ են տալիս: Կարող եք գնալ քաղաքական քարոզարշավի և կտեսնեք, որ մարդիկ սկսում են ծափահարել, երբ հավանում են քաղաքական գործչի խոսքերը: Սակայն այս վայրերից և ոչ մեկում չեք տեսնի, որ հավաքվածները ձեռքերն ուղղեն դեպի վեր:

Սա չի նշանակում, որ ծափահարությունը սխալ բան է: Սակայն մենք պետք է տարբերակենք ծափահարությունը, որն այս աշխարհում բնական արտահայտչամիջոց է, և ձեռքերը վեր բարձրացնելը, որը սուրբգրային արտահայտչամիջոց է այն իրականությունում, որին մենք՝ հավատացյալներս, պատկանում ենք: Պետք է հասկանանք երբ ծափահարել և երբ վեր բարձրացնել ձեռքերը՝ փառաբանելու նպատակով: Սխալ պահին ծափահարություն հնչեցնելու հետևանքով օծությունը կարող է ծառայությունից վերցվել:

Օրինակ՝ շատ անգամներ, երբ Աստծո Հոգին շարժվում է ծառայության ընթացքում ՝ լեզուներով աղոթքի, թարգմանության կամ մարգարեության միջոցով, թարգմանության կամ մարգարեության ուղերձի կեսից սկսում են ծափահարություններ հնչել: Մարդիկ ոգևորվում են ու ծափահարում, ինչի հետևանքով ներկաները չեն կարողանում լսել այն, ինչ Սուրբ Հոգին ցանկանում էր ասել: Նման ծափահարությունը Հոգով չի արվում, քանի որ եթե լեզուներով ուղերձը, թարգմանությունը կամ մարգարեությունը Հոգուց են, ապա ստացվում է, որ Սուրբ Հոգին Ինքն Իրեն ընդհատում է: Եթե Սուրբ Հոգին եկեղեցուն ինչ-որ բան է ասում, սակայն ոչ ոք չի կարողանում լսել դա, ապա մենք ժամանակ ենք վատնում՝ թույլ տալով, որ Սուրբ Հոգու պարգևը դրսևորվի, կամ ժամանակ ենք վատնում ծափահարելով:

Մարգարեությունը ճի՞շտ է, թե՞ ոչ: Սուրբ Հոգի՞ն է ինչ-որ բան ասում, թե՞ ոչ: Արդյոք Սուրբ Հոգին կընդհատե՞ր Ինքն Իրեն: Արդյոք Սուրբ Հոգին կդրդե՞ր մարդկանց ծափահարելու այն ժամանակ, երբ Ինքն ինչ-որ բան է ասում: Ո՛չ, խարիզմատիկ շրջանակներում է, որ մենք որդեգրել ենք «ուրախ ծափահարությունները», իսկ դա տրտմեցնում է Սուրբ Հոգուն:

Երբեմն ինձ՝ որպես ծառայողի, Աստված օգտագործել է մարգարեության կամ լեզուների թարգմանության համար, և մարգարեության կեսից բոլորը սկսել են ծափահարել: Եթե ուշադիր չլինեմ, կարող եմ կորցնել օծությունը, որովհետև ծափահարությունները շեղում են ինձ, և ի վերջո դժվարանում եմ լսել, թե ինչ է Սուրբ Հոգին ասում:

Երբեմն էլ, հակառակ Հոգու հոսանքի մեջ մնալու իմ ջանքերին, օծությունը հեռացել է, քանի որ Սուրբ Հոգին տրտմել է: Սուրբ Հոգու պարգևի դրսևորման ժամանակ ծափահարելը անհարգալից վերաբերմունք է Նրա նկատմամբ:

Մի քանի անգամ պատահել է, որ թեև ես գիտեի՝ Սուրբ Հոգին ավելին էր ցանկանում ասել, և մեզ համար կարևոր էր լսել ամբողջական ուղերձը, բայց ի՞նչ կարող էի անել: Հնարավոր չէր շարունակել առանց Նրա օգնության:

Նույնիսկ երբ օծությունը չի հեռանում, և ես շարունակում եմ խոսել, ոչ ոք չի լսում: Եթե նպատակն այն չէր, որ մարդիկ լսեին, ինչո՞ւ պետք է Սուրբ Հոգին շարժեր ինձ, որ խոսեի:

Եղել են նաև դեպքեր, երբ օծության ներքո քարոզել եմ, և բոլորը սկսել են ծափահարել՝ արտահայտելու իրենց համաձայնությունը, բայց ծափահարության տեղն ու ժամանակը չէին: Նախ և առաջ ծափահարությունների ներքո չէի կարող շարունակել քարոզը, քանի որ մարդիկ բաց կթողնեին խոսքը: Իսկ եթե այն, ինչ ասում եք, Սուրբ Հոգուց է ներշնչված, մարդիկ պետք է լսեն այն: Պետք է հարգենք Սուրբ Հոգուն և չխանգարենք, երբ Նա շարժվում է:

Նույնիսկ երկրպագության ժամանակ ծափահարությունները երբեմն տեղին չեն: Ի վերջո օծությունը հեռանում է, և խաթարվում է այն քաղցր մտերմությունը Նրա ներկայության մեջ, որ բոլորս վերապրում էինք:

Սա հնարավոր է տեսնել նույնիսկ բնական փոխհարաբերություններում, ինչպես, օրինակ՝ կնոջ և տղամարդու միջև: Պատկերացրե՛ք, որ կին ու տղամարդ միասին նստած զրուցում ու փաղաքշանքի խոսքեր են փոխանակում, երբ հանկարծ նրանցից մեկը սկսում է ծափահարել: Արդյոք դա անհարկի չի՞ լինի: Ընկերնե՛ր, մենք փառաբանում և երկրպագում ենք Տիրոջը. *Նա* ներկա է:

Երկար ժամանակ խարիզմատիկ շրջանակներում մենք փառաբանության և երկրպագության ամեն երգից հետո ծափահարելու սովորություն ունեինք: Գուցե սրա պատճառներից մեկն այն էր, որ մարդիկ ցանկանում էին ինչ-որ կերպ արձագանքել, բայց չգիտեին ինչպես դա անել: Ամեն երգից հետո հնչող ծափահարությունները խաթարում են երկրպագության ընթացքը: Դա շեղում է մեր ուշադրությունը Տիրոջից: Որքա՜ն ավելի լավ կլիներ, եթե վեր բարձրացնեինք մեր ձեռքերը ի նշան երկրպագության, և մեր շնորհակալության ու հիացմունքի խոսքերն ասեինք Նրան, ով առաջինը սիրեց մեզ:

ԵՐԲ ԾԱՓԱՀԱՐԵԼ ԵՎ ԵՐԲ ՓԱՌԱԲԱՆԵԼ

Սխալ մի՛ հասկացեք ինձ. եկեղեցական ծառայությունների ժամանակ ծափահարելը որոշ դեպքերում նորմալ է: Ոմանք մեղադրել են ինձ, թե իբր ասում եմ, որ առհասարակ չպետք է ծափահարել: Ես նման բան չեմ ասել, և ոչ էլ Հիսուսն է ինձ նման բան ասել:

Իր այցելության ժամանակ Տերը ծափահարությունների վերաբերյալ հիմնականում ասում էր, որ այսօր մեր եկեղե-

ցիներում դա չափից մեծ տեղ է զբաղեցնում: Խնդիրը ծափահարություններին *առաջնահերթություն* տալն է՝ ձեռքերը վեր բարձրացնելու և մեր շուրթերով Աստծուն փառաբանելու փոխարեն. ծափահարությունները *վերջին* տեղում պետք է լինեն, եթե առհասարակ պետք է տեղ ունենան: Այդ հարցը պետք է կարգավորել՝ ծառայությունների ժամանակ դրանք առավելագույնի փոխարեն նվազագույնին հասցնելով:

Ուստի մենք պետք է հասկանանք, թե երբ են ծափահարությունները տեղին, և երբ տեղին չեն:

Եթե հարանվանությունը արագ ռիթմով երգ է երգում, ապա երաժշտության հետ համընթաց ծափահարությունները նորմալ են: Սակայն երբ երգն ավարտվում է, և փառաբանության առաջնորդը խնդրում է, որ մարդիկ փառաբանեն Տիրոջը, նրանք պետք է վեր բարձրացնեն իրենց ձեռքերը և փառաբանեն Նրան այնպես, ինչպես Նոր Կտակարանն է սովորեցնում:

Բացի այդ՝ եկեղեցում մենք չպետք է ծափահարենք երգողներին, որոնք ինչ-որ հատուկ երգ են կատարում: Նրանց տաղանդը Աստծուց է և պետք է փառք բերի Աստծուն: Նրանք համերգ չեն տալիս (համենայն դեպս այդպես չպետք է լինի), այլ երաժշտությամբ ծառայում են՝ քաջալերելու հարանվանությանը՝ ուղղել իրենց աչքերն Աստծուն, և բարձրացնելու նրանց Նրա ներկայության մեջ: Եթե գնահատում ենք նրանց երաժշտությունը, ապա պետք է բարձրացնենք մեր ձեռքերը և փառաբանենք Աստծուն: Փառաբանողներին ծափահարելը Աստծուն փառաբանել չէ, իսկ մենք պետք է փառաբանենք Աստծուն: Մենք պետք է սուրբ ձեռքեր վեր բարձրացնենք և փառք տանք Նրան: Չպետք է սրտնեղել, եթե սխալ պահերի ծափահարել եք: Ես ինքս էլ, ինչպես բոլորը, այդ հարցում սխալվել եմ, այնպես որ մի՛ հակառակվեք ասածիս:

Երբեմն մենք ծափահարում ենք խոսնակին, որպեսզի նա իմանա, որ մենք ուրախ ենք նրա գալու համար: Սա ողջույնի նշան է այն բանից հետո, երբ վերջինիս ներկայացնում են, և խիստ բնական է: Սրանում խնդիր չկա, եթե չափը չի անցնում: Մենք չենք երկրպագում կամ փառաբանում խոսնակին:

Այնուամենայնիվ, Հիսուսի այցելությունից հետո ես շատ եմ մտածում այն բաների շուրջ, որոնց նախկինում շատ չեմ անդրադարձել: Հիմա մի փոքր խղճի խայթով եմ ասում «Եկե՛ք ծափահարենք Աստծուն»: Չեմ կարծում, թե Աստծուն պետք է ծափահարենք այնպես, ինչպես Միացյալ Նահանգների նախագահին: Չեմ կարծում, թե Աստծուն պետք է «տանք մեր ծափահարությունները»:

Ա Կորնթացիս 2.3-րդ խոսքում Պողոսը կորնթացիներին ասում է. «*Եվ ես... վախով... եղա ձեզ մոտ»:* Նա չի խոսում այնպիսի վախի մասին, ինչպես, օրինակ՝ վախն է պտտահողմից կամ բոժոժավոր օձից: Պողոսը նկատի ունի հարգանքը, Աստծո հրաշափառության գիտակցումը և իր պատասխանատվությունը՝ որպես Աստծո ծառայի:

Հրեա դպիրները, որոնք արտագրում էին Սուրբ գիրքը և պատրաստում դրա ձեռագիր օրինակները, այնպիսի հարգանք ունեին Աստծո նկատմամբ, որ Նրա անունը գրելուց առաջ կանգ էին առնում, ծիսակարգային լոգանք ընդունում և մաքուր հագուստ հագնում:

Մենք հեռացել են այն հարգանքից, որը պետք է ցուցաբերենք Աստծուն: Ես լավ չեմ զգում, երբ Աստծուն ծափահարում եմ այնպես, ինչպես կծափահարեի որևէ քաղաքական գործչի: Չեմ ցանկանում իջեցնել Նրան մարդու մակարդակին: Նա բարձր և սուրբ է: Նոր Կտակարանը սովորեցնում է մեզ վեր բարձրացնել մեր ձեռքերը և ձայները դեպի Աստված և այդպես փառաբանել Նրան:

Հիսուսն ասաց ինձ. «Հովիվները հետզհետե պետք է սովորեցնեն հարանվանություններին Սուրբ Հոգու շարժի մասին, որպեսզի վերջիններս իմանան ինչպես շարժվել Նրա հետ և երբ լուռ մնալ: Չպետք է նախատել կամ վիրավորել մարդկանց, սակայն պետք է սովորեցնել նրանց լուռ և հանգիստ մնալ Սուրբ Հոգու դրսևորման ժամանակ: Հարկավոր է ասել մարդկանց, որ ականջ դնեն և լսեն Սուրբ Հոգուն, իսկ երբ Նա կխոսի, բարձրացնեն իրենց ձեռքերը և փառաբանեն Ինձ»:

ԱԿՆԱԾԱՆՔ

Ծափահարությունների և ձեռքերը վեր բարձրացնելու ու Իրեն փառաբանելու թեման ինձ հետ քննարկելիս Հիսուսն ասաց. «Երբ իսկապես սովորեք ճիշտ ձևով փառաբանել և երկրպագել Ինձ, ավելի զորավոր օծություն կստանաք, և ձեր մեջ ավելի մեծ կլինի Սուրբ Հոգու շարժը»:

Մենք պետք է սովորենք, որ երբ Տիրոջ ներկայությունը որևէ վայրում է, ապա չի կարելի խաթարել այդ ներկայությունը՝ այդ զորությունը: Լռ́ւռ մնացեք և ակնածանքո́վ վերաբերվեք ու կտեսնեք Սուրբ Հոգու այն դրսևորումը, որին ձեր սիրտը ծարավ էր:

Դեռ չեք տեսել նման բան, ինչ կտեսնենք, երբ Քրիստոսի Մարմինը հասնի երկրպագության այդ վայրը:

Մեր արշավներից մեկի ժամանակ նման մթնոլորտում երկրպագում էինք Տիրոջը: Դահլիճում անվասայլակի վրա նստած հինգ մարդ կար: Նրանցից երեքը պարզապես վեր կացան և սկսեցին քայլել առանց որևէ մեկի ձեռք դնելու: Սակայն որպեսզի նման բաներ տեղի ունենան, մենք պետք է սկսենք մտնել Սուրբ Հոգու հոսանքի մեջ:

Երբ մտնում ես ճշմարիտ երկրպագության մթնոլորտի

մեջ, և Աստված սկսում է Իր Հոգով շարժվել, կարողանում ես ձեռքդ մեկնել և վերցնել այն, ինչը քեզ է պատկանում Քրիստոսում: Աստվածաշունչը սովորեցնում է մեզ ձեռք դնելու մասին, սակայն երբ Աստծո ներկայությունը նման զորությամբ է դրսևորվում, ձեռք դնելու կարիք անգամ չի լինում: Ինչի կարիք էլ որ ունենաս, կարող ես մեկնել ձեռքդ, վերցնել ու ասել. «Իմն է»:

Իսկ երբ մարդիկ ինչ-որ մարմնավոր ցուցադրություններ են անում, օծությունը հեռանում է. այն թռչնի պես թռչում գնում է, քանի որ տեղի ունեցածը Սուրբ Հոգուն տրտմեցնում է: Երանի՜ կարողանայի հասցնել սա մարդկանց: Եղել եմ հավաքույթների, որոնց մի քանի հազար մարդ է մասնակցել, որտեղ Սուրբ Հոգու շարժն է եղել, և հանկարծ զգացել եմ Սուրբ Հոգու օծությունը՝ մարգարեության պարգևով մարդկանց ծառայելու համար: Ես պատրաստ էի կանչելու որոշ մարդկանց, մատնացույց անելու նրանց այնտեղ, որտեղ կանգնած էին, և ասել. «Աստծո Հոգին հենց այս պահին ցույց տվեց ինձ, թե որն է ձեր խնդիրը»: Տարիների ընթացքում շատ անգամներ եմ այդպես ծառայել, և ամեն անգամ մարդիկ բժշկվել են: Նմանօրինակ օծության ներքո ծառայելիս չի եղել դեպք, որ մարդը չբժշկվի: Կարող եմ ձեզ հազարավոր մարդկանց մասին պատմել, որոնք տարիների իմ ծառայության ընթացքում հենց այդ կերպ են բժշկվել:

Սակայն պատահել է, որ նման ձևով ծառայելու օծություն է իջել ինձ վրա, իսկ հարանվանության մարդիկ վեր են կացել և սկսել են այս ու այն կողմ գնալ: Ծառայության ընթացքում Աստծո շարժի հանդեպ ակնածանքի պակասը տրտմեցնում է Սուրբ Հոգուն, և Նա հեռանում է: Օծությունը ուսիդ նստած թռչնի նման թռչում, հեռանում է: Իսկ մարդիկ անգամ չեն էլ իմանում դրա մասին. շարունակում են ինչ-որ բաներ խոսել ու շշնջալ: Գուցե նրանք շտապում էին դուրս գալ և ինչ-որ

բան ուտել, բայց չգիտեին, որ հենց այդ պահին խոչընդոտել էին որոշ թանկագին մարդկանց բժշկությունը՝ երբեմն մահացու հիվանդություններից:

Մեկ անգամ գրություն ստացա մի հովվից, նա պատմում էր իր ծառայություններին մասնակցող մի կնոջ մասին, որը մահացու հիվանդություն ուներ: Բժիշկը մահացու քաղցկեղ էր ախտորոշել և ասել, որ նրան իննսուն օր էր մնացել ապրելու: Այդ հովվի նամակում գրված էր, որ իր ծառայություններից մեկի ժամանակ Աստված բժշկել էր նրան: Աստծո Հոգու գերբնական շարժի շնորհիվ կինը բժշկվել էր մահացու հիվանդությունից: Սակայն այն ծառայության ժամանակ, երբ մարդիկ սկսեցին խոսել ու շարժվել, դա տրտմեցրեց Սուրբ Հոգուն, և Նրա շարժը դադարեց: Նման պարագայում չես կարողանում օգտակար լինել մարդկանց, քանի որ լուծը կոտրողը օձությունն է: Աստվածաշունչն ասում է. *«...լուծը պիտի կոտրվի ճարպի պատճառով»* (Ես. 10.27):

Աստված Իր Հոգով ցանկանում է շարժվել այս օրերում: Աստված ցանկանում է ինչ-որ բան անել մեզ համար *այսօր*: Եկե՛ք չխանգարենք Նրան: Եկե՛ք համագործակցենք Նրա հետ, եկե՛ք ակնածանքով վերաբերվենք: Երբ Աստված շարժվում է, եկե՛ք լուռ նստենք և պատվենք Նրան: Հետո, եթե ցանկանանք, կարող ենք նույնիսկ գոռալ: Այն բանից հետո, *երբ հաշմանդամները կսկսեն Հոգով պարել*, մենք էլ կարող ենք ցատկել և նրանց հետ պարել:

Աստված փորձում է մեզ նման բաներ սովորեցնել, և մենք մի քանի տարի է՝ ջանում ենք գործել դրանց համաձայն:

Մի քանի տարի առաջ քարոզում էի արևելյան Տեխասի Ամբողջական Ավետարանի եկեղեցիներից մեկում, և Տերը հրահանգեց ինձ ձեռք դնել մարդկանց վրա, որ լցվեին Սուրբ Հոգով: Մարդկանց վրա ձեռք դնելը, որպեսզի նրանք լցվեն

Սուրբ Հոգով, *Աստծո ծրագիրն* է՝ սուրբգրային է:

Այդուհանդերձ, 1950 թվականին Տեխասում նման բաներ չէին անում, իսկ Աստված ինձ ասել էր, որ անեի: Ամբողջական Ավետարանի մի փոքրիկ եկեղեցում էի և որոշել էի անել այն, ինչ *Աստված* էր ասել: Առաջ կանչեցի նրանց, որոնք ցանկանում էին լցվել Հոգով. յոթ մարդ եկավ խորանի մոտ:

Խնդրեցի, որ նստեին խորանի մոտ, քանի որ ուզում էի նախ մի փոքր սովորեցնել նրանց: Գիտեի, որ եթե չսովորեցնեի, պարզապես սկսելու էին խորանի մոտ աղոթել՝ *երկարուձիգ սպասելով* Աստծուն և փորձելով ստանալ Սուրբ Հոգին. այդպես էին արել տարիներ շարունակ (մեկ անգամ հանդիպել եմ մի մարդու, որը հիսուն տարի փորձում էր մկրտվել Սուրբ Հոգով): Ուստի գիտեի, որ եթե միանգամից իջնեի խորանի մոտ և աղոթեի, նրանք նույն այդ ծիսակարգն էին սկսելու և չէին կարողանալու դադարեցնել այն: Միտումնավոր թույլ չտվեցի, որ միանգամից ծնկի իջնեն, որպեսզի մի փոքր հրահանգավորում տայի նրանց:

Որոշ ժամանակ սովորեցրի, ապա ձեռք դրեցի, և առաջին մարդն անմիջապես խոսեց լեզուներով: Երբ դա տեղի ունեցավ, հարանվանության անդամները ցատկեցին և սկսեցին գոռալ և այս ու այն կողմ վազել: Ես ստիպված էի վերադառնալ ամբիոնի մոտ և բարձր ձայնով գոչել, որ լսեին ձայնս, և կարողանայի գրավել նրանց ուշադրությունը: Ասացի. «Մեկ րոպե սպասե՛ք: ՍՊԱՍԵ՛Ք, ՍՊԱՍԵ՛Ք: Նստե՛ք»: Բոլորը նստեցին: Հետո ասացի նրանց. «Մի՛ խաթարեք զորությունը՝ աղաղակելով և ձեզ անկարգ պահելով: Այստեղ դեռ վեց մարդ կա, որ Սուրբ Հոգով լցվելու կարիք ունի: Թույլ տանք, որ նրանք ևս լցվեն Հոգով, իսկ հետո, եթե ցանկանանք, բոլորս միասին կաղաղակենք և կցատկոտենք»: Նրանք այնպես էին ինձ նայում, կարծես այլմոլորակային տեսած լինեին. այդքան նոր

էր նրանց համար այն ամենը, ինչ ասում էի:

Վերադարձա և շարունակեցի ձեռք դնել մնացած վեցի վրա. բոլորը լցվեցին Սուրբ Հոգով և սկսեցին խոսել լեզուներով: Երբ վերջին մարդը լցվեց Հոգով, ես սկսեցի խոսել լեզուներով, շրջվեցի, վազեցի միջանցքով, այնուհետև հետ վազեցի դեպի բեմը, ուրախությունից թռչկոտելով պարեցի ու նորից միջանցքով վազեցի: Բոլորը նստած ինձ էին նայում:

Ի վերջո ասացի նրանց. «Հիմա է պարելու ժամանակը»: Նրանք ժամանակն էին շփոթել: Ասացի. «Այն բանից հետո, երբ յոթ մարդ լցվեց Սուրբ Հոգով, վազելու և պարելու ժամանակն է»: Սակայն շատ մարդիկ սխալ պահի՝ ուրիշների հաշվին են ցանկանում վազել ու պարել և խաթարում են զորությունը:

1987 թվականի ճամբարային հավաքույթից առաջ կատարած Իր այցելության ժամանակ Տերն ինձ հստակ ասում էր, որ փորձում է Քրիստոսի Մարմինը հասցնել այն կետին, որտեղ կկարողանա Իր Հոգով շարժվել մեր մեջ: Ես աստիճանաբար տեսնում եմ, թե ինչպես է դա տեղի ունենում: Քրիստոսի Մարմինն ի վերջո հասնում է այն կետին, որտեղ Աստված կարող է մեր ծառայությունների ընթացքում շարժվել այնպես, ինչպես կամենում է: Հիմա է ժամանակը: Վերջիվերջո Քրիստոսի Մարմինը հասել է այդ պահին և պատրաստվում է Աստծո շարժին երկրի վրա. փա՛ռք Աստծուն:

Մի քանի տարի առաջ Տերն ասաց ինձ. «Այս սերնդի համար Աստված Իր Հոգու շարժն է պատրաստել, որը կկորչի, եթե նրանց չսովորեցնեն ու չառաջնորդեն դրա մեջ»:

Չգիտեմ՝ արդյոք այս հարցում հաջողության հասել ենք, թե ոչ, սակայն ի վերջո գալիս ենք այն կետին, որտեղ կարող ենք սովորեցնել սրա մասին:

Տերը շարունակեց և ասաց ինձ. «Հին հոգեգալստականները դեռ ինչ-որ բան գիտեին Հոգու այդ խոր շարժի մա-

սին, մինչդեռ ժամանակակից հոգեգալստականները՝ խարիզմատների այդ նոր սերունդը, քիչ բան գիտի կամ ոչինչ չգիտի դրա մասին: Խարիզմատները քիչ բան գիտեն կամ ոչինչ չգիտեն Իմ Հոգու շարժի մասին: Նրանք որոշ բաներ գիտեն Ինձ փառաբանելու մասին, բայց ոչինչ չգիտեն ճշմարիտ երկրպագության մասին»:

Երկրպագության մասին խոսելն անգամ ուղեկցվում է ակնածանքի հոգով: Ինչպես արդեն պատմել եմ, Տեխաս նահանգի Ֆարմերսվիլի եկեղեցում, որտեղ ես հովիվ էի, մենք պարբերաբար վերապրում էինք Աստծո սքանչելի ներկայությունը: Մենք շատ ուշադիր էինք՝ մեր ծառայություններում հարգելու Սուրբ Հոգուն: Այդ իսկ պատճառով հրաշքները մեր առօրյայի մասն էին: Նման փորձառություն չենք ունեցել խարիզմատիկ շարժման մեջ: Խարիզմատիկ ծառայություններում ինչ-որ թեթևություն կա, ինչ-որ «թռի-վռի» մթնոլորտ:

Օ՜, անցյալում ես տեսել եմ, թե ինչպես է Աստծո ներկայությունը գալիս ու լցնում տաճարը: «Տաճար» ասելով՝ նկատի ունեմ հավատացյալներից կազմված մարմինը: Այդ ժամանակներում, երբ ծառայությունների ընթացքում Աստծո ներկայությունն էր գալիս, ոչ ոք չէր շարժվում. սրահը լցվում էր սքանչելի ներկայությամբ: Երանի՜ կարողանայի բացատրել ձեզ, թե ինչ սքանչելի ներկայություն էր դա: Կան բաներ, որոնք այնքան վսեմ են, որ դժվար է դրանց մասին խոսելը, դժվար է դրանք նկարագրելու համար բառեր գտնելը: Սակայն ես տեսել եմ, թե ինչպես է Աստծո սքանչելի ներկայությունը գալիս ու լցնում տաճարը, և փափագում եմ, որ Քրիստոսի Մարմինը շարունակաբար ունենա նման ներկայության վերապրումը:

Գրում եմ 1987 թվականի՝ Հիսուսի այցելությունից մեկ տարի հետո: Մեր ծառայության մեջ ևս սկսել ենք վերապ-

րել Աստծո Հոգու ավելի խոր շարժ, որը Հիսուսը խոստացել էր: Ամառային ճամբարային հավաքույթից կարճ ժամանակ անց մեր արշավական թիմը Դետրոյթում էր: Փառաբանության խմբի երգիչներից մեկը Հոգով մի երգ էր երգում՝ Երկնքից նոր էր ստացել.. այն Հոգուց էր ներշնչված: Երգի տողերից մեկը լսելուց հետո հավաքվածները սկսեցին ծափահարել. երգիչը կանգ առավ և խնդրեց, որ այլևս չծափահարեն: Նրանք լսեցին ու հնազանդվեցին Սուրբ Հոգու հրահանգին, իսկ փառաբանողը շարունակեց կատարել այդ հոգևոր երգը:

Սրահը լցվեց ամպի նմանվող խոր, աննկարագրելի ներկայությամբ: Այդ երեկո քարոզ չեղավ. Սուրբ Հոգին մեծ ուժգնությամբ եկավ ինձ վրա՝ բժշկության և այլ ծառայությունների համար:

Այնուհետև ծառայողներից հարցրի, թե արդյոք նկատեցին՝ ինչպես աճեց օծությունը, երբ դադարեցինք ծափահարելուց և մեր ուշադրությունը կենտրոնացրինք Աստծուն երկրպագելու վրա: Բոլորը գլխով արեցին որպես համաձայնության նշան:

Հարանվանության վրա կարող է իջնել Աստծո սրբության սքանչելի վերապրում՝ ակնածանք: Որպես Քրիստոսի Մարմին՝ մենք պետք է վերադառնանք ակնածանքի այդ կետին:

Երբ մենք հարգում ենք Աստծուն, պատիվ տալիս և երկրպագում Նրան, Նրա ներկայությունը լցնում է այն վայրը, որտեղ հավաքված ենք: Նրա ներկայությունն է, որ լրացնում է մեր սրտերի ամենախոր փափագները և կապյալներին ազատ արձակում:

9 ՇԱՐՈՒՆԱԿԱԲԱՐ ԼՑՎԵԼ ԵՎ ԽՈՍԵԼ

1987 թվականի մեր ճամբարային հավաքույթից հետո ինչ-որ մեկը հարցրեց ինձ. «Իր երեքժամյա այցելության ժամանակ ինչի՞ վրա Հիսուսն ամենաշատը շեշտադրում արեց»:

Այս գլխում քննարկելու ենք այն, ինչ Հիսուսն անկասկած ամենաշատը շեշտադրեց:

Հիսուսն ասաց ինձ. «Նոր Ուխտում Իմ ծրագիրը ամեն հավատացյալի համար Սուրբ Հոգով լցվելն է»:

Ինչպես արդեն նշել ենք, Հին Կտակարանում բոլոր հավատացյալները կամ Աստծո հետևորդները չէ, որ լցված էին Սուրբ Հոգով. միայն մարգարեն, թագավորը և Աստծուց հատուկ հանձնարարական ունեցող մարդիկ ունեին Հոգու օծությունը: Ընդ որում՝ այդ օծությունը գալիս էր նրանց *վրա,* չէր ապրում նրանց *մեջ*: Հին Կտակարանում այսպես կոչված «աշխարհիկները» չունեին Աստծո Հոգին ո՛չ իրենց ներսում, ո՛չ իրենց վրա: Դա էլ պատճառներից մեկն է, թե ինչու է Նոր Ուխտը ավելի լավ ուխտ. այն թույլ է տալիս, որ Աստծո Հոգին բնակվի վերստին ծնված ամեն անձնավորության ներսում:

Նոր Կտակարանը շեշտադրում է մեր անհատական կյանքերում Հոգով լցված լինելը: Հիսուսն ուղղորդեց ինձ դեպի

Եփեսացիս 5.18, 19-րդ խոսքերը, որոնք ես լավ գիտեի: Նա ինձ հետ մանրամասնորեն քննարկեց այն ամենը, ինչ գրված է այդ գլխում:

Հին Կտակարանում Աստծո ժողովուրդը երկրպագում էր Նրան բացառապես *մարմնով*: Սուրբ Հոգին միայն թագավորի, քահանայի և մարգարեի վրա էր: Մյուսները չունեին Սուրբ Հոգին ո՛չ իրենց վրա, ո՛չ իրենց ներսում, այնպես որ նրանց երկրպագության արտահայտման ձևը բնական էր, որ արվում էր մարմնով:

Մինչդեռ Նոր Կտակարանում շեշտադրված է այն, որ երկրպագությունը պետք է արվի *Հոգով*: Ահա թե ինչու է Աստվածաշունչն ասում, որ մենք պետք է լցված լինենք Սուրբ Հոգով: Եկե՛ք ուշադրություն դարձնենք, թե ինչ է ասում Պողոսը, կամ ինչպես ես եմ սիրում ասել, ինչ է ասում Սուրբ Հոգին Պողոս առաքյալի միջոցով:

ԵՓԵՍԱՑԻՍ 5.18
18 Եվ մի՛ արբենաք գինով, որ նրանում անառակություն կա, այլ լցվե՛ք Հոգով:

Այս խոսքը կարելի է կարդալ հետևյալ կերպ. «Մի՛ հարբեք *գինով*, այլ հարբե՛ք *Հոգով*»: Երբևէ եղե՞լ եք Հոգով հարբած: Հնարավոր է այնպես լցված լինել Հոգով, որ հարբածի նման օրորվեք: Հիմա ուշադրությո՛ւն դարձրեք, թե ինչ արեցին, երբ լցվեցին Հոգով. սկսեցին խոսել այլ լեզուներով: Նոր Կտակարանը շեշտը դնում է Սուրբ Հոգով լցվելու և այլ լեզուներով *խոսելու* վրա:

ԳՈՐԾՔ 2.1–4
1 Եվ երբ Պենտեկոստեի օրերը լրացան, ամենքը միաբան մեկտեղ էին:
2 Եվ հանկարծակի երկնքից մի հնչյուն եղավ՝ սաստիկ

փչող քամու պես, և լցրեց բոլոր տունը, ուր նստած էին:
3 Եվ երևացին նրանց բաժանված լեզուներ ինչպես կրակից, և նստեց նրանց ամեն մեկի վրա:
4 Եվ ԱՄԵՆՔԸ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՎ ԼՑՎԵՑԻՆ ԵՎ ՍԿՍԵՑԻՆ ՈՒՐԻՇ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ ԽՈՍԵԼ, ինչպես որ Հոգին նրանց խոսել էր տալիս:

Կարող ենք նաև տեսնել, որ Աստվածաշունչը շարունակում է շեշտադրել Հոգով լցված լինելը և այլ լեզուներով խոսելը դրանից տասը տարի անց: Կոռնելիոսին հրեշտակ է հայտնվում և ասում, որ նա մարդիկ ուղարկի Հոպպա և հարցնի կաշեգործ Սիմոնի տանը հյուրընկալված Պետրոսին: Պետրոսն ուղարկված մարդկանց հետ գնում է Կոռնելիոսի տուն և քարոզում այնտեղ հավաքվածներին:

ԳՈՐԾՔ 10.44–46
44 Եվ Պետրոսը դեռ այս բանը խոսելիս Սուրբ Հոգին իջավ այն խոսքը լսողների բոլորի վրա:
45 Եվ զարմացան Պետրոսի հետ եկող հավատացյալները, որ թլփատությունից էին, որ հեթանոսների ՄԵՋ ԷԼ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՊԱՐԳԵՎԸ ԹԱՓՎՈՒՄ ԷՐ:
46 ՈՐՈՎՀԵՏԵՎ ԼՍՈՒՄ ԷԻՆ, ՈՐ ՆՐԱՆՔ լեզուներով ԽՈՍՈՒՄ և Աստծուն փառավորում էին:

Նույնը տեսնում ենք նաև Գործք 19-րդ գլխում, երբ Պողոսը ձեռք է դնում Եփեսոսի հավատացյալների վրա:

ԳՈՐԾՔ 19.1–6
1 Եվ եղավ, որ... Պողոսը, որ վերի կողմերում ման էր եկել, եկավ Եփեսոս և մի քանի աշակերտների գտնելով՝ ասաց նրանց.
2 «Արդյոք Սուրբ Հոգին ընդունեցի՞ք, երբ հավատացիք»: Նրանք ասացին նրան. «Մենք չենք էլ լսել, թե Սուրբ Հոգի կա»:

3 Եվ ասաց նրանց. «Ապա ինչո՞վ մկրտվեցիք»: Նրանք էլ ասացին. «Հովհաննեսի մկրտությունով»:
4 Եվ Պողոսն ասաց. «Հովհաննեսը ժողովրդին ապաշխարության մկրտությունով էր մկրտում և ասում, թե Նա, որ իր ետևից պիտի գա, Նրան հավատան, այսինքն է՝ Քրիստոս Հիսուսին»:
5 Եվ երբ լսեցին, Տեր Հիսուսի անունով մկրտվեցին:
6 Եվ երբ Պողոսը ձեռք դրեց նրանց վրա, ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԵԿԱՎ ՆՐԱՆՑ ՎՐԱ, ԵՎ ՆՐԱՆՔ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ ԷԻՆ ԽՈՍՈՒՄ...

Աստվածաշնչում գրված է, որ երբ այդ աշակերտների վրա ձեռք դրեցին, նրանք սկսեցին խոսել լեզուներով: Երբ ձեզ վրա ձեռք են դնում, որ ստանաք Սուրբ Հոգին, դուք կարող եք չանել այն, ինչ գրված է Աստվածաշնչում, և դա կտրտմեցնի Սուրբ Հոգուն: Աստվածաշունչն ասում է, որ մենք պետք է *խոսենք լեզուներով*:

Օրինակ՝ երբ Սուրբ Հոգին գալիս է ձեզ վրա, դուք կարող եք պարզապես սկսել ինչ-որ խոսքեր գոչել *ձեր մայրենի լեզվով* և չխոսել լեզուներով. այդ կերպ գոչելով՝ դուք թափ կտաք զորությունը ձեր վրայից: Տեղին գոչելը խնդիր չէ, սակայն երբ ձեզ վրա ձեռք են դնում, որ ստանաք Սուրբ Հոգին, գոչելու ժամանակը չէ: Ո՛չ, փոխարենը զիջե՛ք Սուրբ Հոգուն և սկսե՛ք խոսել լեզուներով:

Նորկտակարանյան բոլոր այս պատմություններում մարդիկ խոսել են լեզուներով, երբ Սուրբ Հոգին եկել է նրանց վրա: Նկատե՞լ եք դա: Սուրբ Հոգով լցվելը և խոսելը նորկտակարանյան օրինաչափություն է:

ԵՓԵՍԱՑԻՍ 5.18, 19
18 Եվ մի՛ արբենաք գինով, որ նրանում անառակություն կա, ԱՅԼ ԼՑՎԵ՛Ք ՀՈԳՈՎ,
19 ԽՈՍԵԼՈՎ ձեր մեջ սաղմոսներով և օրհնություններով

և հոգևոր երգերով, երգե՛ք և սաղմոսե՛ք ձեր սրտերում Տիրոջը:

Ուշադրությո՛ւն դարձրեք այս հատվածի բանալի բառերին. «...*լցվե՛ք Հոգով. խոսե՛ք*...» (խ. 18, 19):

Եփեսացիները մարդկանց այն խմբերից էին, որոնք արդեն ստացել էին Սուրբ Հոգին Պողոսի ծառայության ընթացքում (Գործք 19.1–6): Եվ սակայն Եփեսացիս 5.18, 19-րդ խոսքերում Պողոսը գրում է նրանց, որ նորից լցվեն Հոգով: Ինչո՞ւ է նման բան ասում: Արդյոք նրանք արդեն լցված չէի՞ն Սուրբ Հոգով: Մինչ կմեկնաբանեմ սա, թո՛ւյլ տվեք ասել հետևյալը:

Ես պահում եմ բոլոր այն Աստվածաշունչները, որոնք երբևէ ունեցել եմ. դրանց նայելով՝ հեշտությամբ կարելի է նկատել, թե որոնք են ամենամաշված հատվածները. Թղթերը. ինչո՞ւ: Դրանք նամակներ են, որոնք հասցեագրված են ինձ: Չորս Ավետարանները ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ չեն ԻՆՁ. դրանք գրված են ինձ ՀԱՄԱՐ: Հին Կտակարանը ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ չէ ԻՆՁ, այլ գրված է ինձ ՀԱՄԱՐ: Հասկանո՞ւմ եք, թե որն է տարբերությունը:

Թղթերից ամեն մեկը *հասցեագրված է* ձեզ և ինձ: Դրանք *հասցեագրված են* հավատացյալներին՝ *եկեղեցուն*, քրիստոնյաներին: Ես Թղթերում եմ անցկացրել բոլոր այս տարիներս: Ես ուզում եմ իմանալ, թե ինչ է Աստված գրում Իր եկեղեցուն և ինչ է ասում ինձ: Ինձ նույնքան չի հուզում, թե ինչ է Նա ասել հրեաներին: Առաջինը, որ ինձ հուզում է, այն է, թե ինչ է Նա ասում ինձ:

Թղթերում տեսնում ենք, որ Նոր Կտակարանը շեշտը դնում է Հոգով լցված լինելու վրա:

Եփեսացիս 5-րդ գլխում Պողոսը գրում և հորդորում է եփեսացի քրիստոնյաներին, որոնք սկզբնապես արդեն լցվել էին Սուրբ Հոգով, *լցվել* Հոգով: Առաջին հայացքից սա կարող է շփոթմունքի տեղ տալ, սակայն այն, ինչ Պողոսն ասում

է Եփեսացիս 5.18-րդ խոսքում, ավելին է, քան սկզբնապես Սուրբ Հոգով լցվելն ու լեզուներով խոսելը, ինչն արդեն տեղի էր ունեցել եփեսացիների հետ, երբ Պողոսը նրանց վրա ձեռք էր դրել Գործք 19.1–6-ում:

Հույն գիտնականներն ասում են, որ եթե բառացիորեն թարգմանենք Եփեսացիս 5.18-ի «...լցվեք Հոգով» արտահայտությունը, ապա կտեսնենք, որ այդտեղ բառախաղ կա: Բառացի թարգմանությունը հետևյալն է. «*շարունակաբար* լցվեք Հոգով»: Պողոսը քաջալերում էր եփեսացիներին *շարունակել* խոսել լեզուներով, որպեսզի պահպանեին Սուրբ Հոգու լիությունը՝ Հոգով լցված լինելու շարունակական վերապրումը, ինչպես նաև խոսել գերբնական բաներ՝ Հոգով լցված մնալու համար:

Ուշադրությունն դարձրեք, որ Պողոսը գրում էր Եփեսոսի ամբողջ եկեղեցուն, ոչ թե միայն քարոզիչներին: Աստծո ծրագիրը Նոր Ուխտի ներքո ապրող *ամեն* հավատացյալի, ամեն քրիստոնյայի համար շարունակաբար Սուրբ Հոգով լցվելն է և Հոգով երկրպագելը: Իսկ շարունակական լեցունությունը պահելու և Հոգուն համընթաց քայլելու համար անհրաժեշտ է խոսել Տիրոջից ներշնչված խոսքերով: Սա նորկտակարանյան երկրպագության ձևերից մեկն է:

Այս աստվածային արտահայտչամիջոցները կարող են մի քանի տարբեր կերպերով դրսևորվել: Դրսևորման ձևերից մեկը այլ լեզուներով Աստծուն մեծարելն ու երկրպագելն է: Արդեն տեսանք, թե ինչպես էին դա անում սուրբերը Գործք 10.46-ում. *«Որովհետև լսում էին, որ նրանք լեզուներով խոսում և Աստծուն ՓԱՌԱՎՈՐՈՒՄ էին...»:* Սակայն Պողոսը Եփեսացիս 5.19-ում նշում է նաև մի քանի այլ արտահայտչամիջոցներ:

ՍԱՂՄՈՍՆԵՐ, ՕՐՀՆԵՐԳԵՐ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԵՐԳԵՐ

Մեծ ուշադրություն դարձրեք սուրբգրային հետևյալ երկու խոսքերին: Տեսեք, թե ինչպես էին հավատացյալների շուրթերից դուրս եկող, Սուրբ Հոգուց ներշնչված արտահայտությունները երկրպագության միջոցով բարձրանում *Տիրոջը*:

ԵՓԵՍԱՑԻՍ 5.18, 19
18 ...այլ լցվեք Հոգով,
19 խոսելով ձեր մեջ սաղմոսներով և օրհնություններով և հոգևոր երգերով, ԵՐԳԵՔ ԵՎ ՍԱՂՄՈՍԵՔ ՁԵՐ ՍՐՏԵՐՈՒՄ ՏԻՐՈՋԸ:

Կողոսացիս 3.16-ը ուղեկից խոսք է Եփեսացիս 5.18, 19-ի համար: Այն ևս շեշտադրում է Տիրոջն ուղղված երկրպագությունը:

ԿՈՂՈՍԱՑԻՍ 3.16
16 Քրիստոսի խոսքը բնակվի ձեր մեջ առատապես ամեն իմաստությունով. իրար սովորեցրեք և խրատեք սաղմոսներով և օրհնություններով և հոգևոր ԵՐԳԵՐՈՎ ԵՎ ՇՆՈՐՀՔՈՎ ՕՐՀՆԵՐԳԵՔ ՏԻՐՈՋԸ ՁԵՐ ՍՐՏԵՐՈՒՄ:

Մեր սրտերում սաղմոսներով, օրհներգերով և հոգևոր երգերով խոսելու մասին Պողոսի խոսքն ուղղված է ամեն հավատացյալի: Մենք պետք է բարձրաձայնենք *այդ խոսքերը*: Սա մի բան է, որ պետք է անենք Աստծո հետ հաղորդակցության մեր անձնական և առանձին կյանքերում:

Սաղմոսը հոգևոր բանաստեղծություն է կամ ներբող: Այն կարող է լինել հանգավորված, կարող է նաև հանգավորված չլինել, սակայն պոեզիայի տարր է պարունակում:

Հին Կտակարանում կա 150 սաղմոս: Իրականում Սաղմոսների գիրքը Իսրայելի աղոթագիրքն էր կամ երգարանը: Սաղմոսների մեծ մասի հեղինակը Դավիթն է, որի վրա

Սուրբ Հոգին էր. սաղմոսներից կարող ենք հասկանալ, թե ինչ էր տեղի ունենում Դավթի կյանքում, ինչ փորձություններով և դժվարություններով էր անցնում, երբ նրան տրվում էին այդ սաղմոսները: Թեև որոշ սաղմոսներ Դավթին տրվել են հատուկ նրա բարիքի համար, մենք նույնպես օրհնվում ենք դրանցով, քանի որ դրանք օծված են Հոգով, և մենք էլ գուցե նման իրավիճակներով անցնենք:

Ես հաճախ եմ խոսում սաղմոսներով: Սաղմոսը կարելի է երգել, հռչակել կամ ասմունքել: Երաժշտության հետ առնչվող մարդիկ սովորաբար երգով են արտահայտում Հոգուց տրված սաղմոսը: Նույն այն սաղմոսը, որը ես պարզապես ասում եմ, մեկ ուրիշը, որը երաժշտությամբ է զբաղվում, կարող է երգել: Ես երգիչ չեմ և երգեցիկ ձայն չունեմ, այնպես որ պարզապես բարձրաձայն ասում եմ այն սաղմոսները, որ Սուրբ Հոգին տալիս է ինձ:

Գուցե չհավատաք, բայց նույնիսկ վոկալի դասերի եմ գնացել: Ի վերջո վոկալի ուսուցչուհին ասաց ինձ. «Այսքան տարի երգեցողություն եմ դասավանդել և երբեք ոչ մեկին նման բան չեմ ասել, բայց եթե Ձեր փոխարեն լինեի, չէի շարունակի մասնակցել վոկալի դասերին»: Ես առհասարակ չէի կարողանում որոշակի նոտայից վեր բարձրանալ: Երգեցողությունն իմ ուժեղ կողմերից չէ. դա ուրիշներին պետք է թողնեմ: Ես ուրախ աղմուկ եմ բարձրացնում, ընդամենը այդքանը: Այդպիսով՝ ես բարձրաձայն արտասանում եմ սաղմոսները:

Շատ անգամներ ձեր անձնական աղոթքի կյանքում Աստված ձեզ սաղմոս կտա ձեր բարիքի համար: Իսկ ինչ վերաբերում է օրհներգին, սա փառաբանության և երկրպագության երգ է, որը հասցեագրված և ուղղված է Աստծուն:

Հոգևոր երգը հիմնված է Սուրբ Հոգուց ձեզ տրված Խոսքի հայտնության վրա:

«Քրիստոսի խոսքը բնակվի ձեր մեջ առատապես...»

(Կող. 3.16): Սա պարտադիր կերպով չի վերաբերում միայն գրված Խոսքին: Այն ժամանակ չկար գրված Նոր Կտակարան: Աստվածաշունչը խոսում է այն Խոսքի մասին, որը Սուրբ Հոգին է տալիս ձեզ: Դա կարող է լինել սուրբգրային խոսք, քաջալերանքի խոսք, հորդոր և այլն:

Շատերը կարդացել են Եփեսացիս 5.19-րդ և Կողոսացիս 3.16-րդ խոսքերը և փորձել են մեկնաբանել դրանք արևմտյան մշակույթի լույսի ներքո: Կարծել են, թե խոսքը երգարանում կամ օրհներգերի գրքում գրված երգերի մասին է: Սակայն այն ժամանակ, երբ Պողոսը գրել է այս նամակները, չկային տպագրատներ, ուստի այս խոսքերը չէին կարող նման իմաստ ունենալ:

Եվ թեև կան շատ լավ երգեր, որոնք հավանաբար ներշնչված են Սուրբ Հոգուց, մեր երգարանների երգերի մեծ մասը զմռսված է անհավատությամբ:

Իսկ այն սաղմոսները, օրհներգերը և հոգևոր երգերը, որոնք տրվում են Սուրբ Հոգուց, «թարմ և տաք-տաք» իջած են Երկնքից: Եվ դրանք սուրբգրային են, քանի որ ցանկացած բան, որ Սուրբ Հոգին է տալիս, սուրբգրային է:

Նման արտահայտչամիջոցները Հիսուսը կոչեց նորկտակարանյան երկրպագություն: Իսկ իրական երկրպագությունն արվում է *«հոգով և ճշմարտությամբ»* (Հովհ. 4.23):

Երբ սկզբնապես լցվում ենք Հոգով և խոսում գերբնական կերպով, մենք պետք է շարունակենք խոսել գերբնական կերպով:

Եփեսացիս 5.18, 19-ում և Կողոսացիս 3.16-ում Աստծո Խոսքը նշում է այն գերբնական արտահայտչամիջոցները, որոնք Սուրբ Հոգին տալիս է տվյալ պահին մարգարեության հոգով: Սուրբ Հոգու դրսևորումներից մեկը մարգարեությունն է (Ա Կորնթ. 12.10):

Ինչ է մարգարեությունը:

Սա Հոգուց ներշնչված խոսք է՝ արտահայտված հայտնի լեզվով: Մարգարեության պարզ պարգևը «...*մարդկանց հետ շինություն և մխիթարություն և սփոփություն է խոսում*» (Ա Կորնթ. 14.3): Այն չպետք է շփոթել մարգարեի ծառայության պարգևի հետ, որը հաճախ հայտնություն է տալիս ապագայի մասին:

Ա Կորնթացիս 14.31-րդ խոսքում ասվում է. «...*կարող եք... ամենդ մարգարեանալ...*»: Այլ կերպ ասած՝ բոլոր հավատացյալները պետք է մարգարեանան: Ամեն հավատացյալ Աստծո հետ իր անձնական շփմանը նվիրված ժամանակի մեջ պետք է ինքն իր հետ խոսի սաղմոսներով, օրհներգերով և հոգևոր երգերով:

Սա մարգարեության պարգևի գործառնության մաս է (մարդիկ մտածում են, թե չեն մարգարեանում, քանի դեռ չեն բարձրացել եկեղեցու բեմահարթակ և հանրայնորեն չեն խոսել: Օ՜, ոչ, դա մարգարեության պարգևի դրսևորման միայն փոքր մասն է):

Ես իմ անձնական աղոթքի ժամանակ միշտ սաղմոսներով եմ խոսում: Շատ անգամներ գիշերը մեկ կամ երկու ժամ անցկացնում եմ սաղմոսներ ասելով: Երբեմն ամբողջ գիշերն եմ անցկացնում սաղմոսներ ասելով:

Սաղմոսներով, օրհներգերով և հոգևոր երգերով խոսել կարելի է նաև հանրային հավաքների ժամանակ, եթե նման հնարավորություն ընձեռվում է: Եկեք նորից կարդանք Կողոսացիս 3.16-ը.

ԿՈՂՈՍԱՑԻՍ 3.16

16 Քրիստոսի խոսքը բնակվի ձեր մեջ առատապես ամեն իմաստությունով. ԻՐԱՐ ՍՈՎՈՐԵՑՐԵՔ ԵՎ ԽՐԱՏԵՔ, սաղմոսներով և օրհնություններով և հոգևոր երգերով և շնորհքով օրհներգեք Տիրոջը ձեր սրտերում:

Ինչպես տեսնում եք, սաղմոսները, օրհներգերը և հոգևոր երգերը կարող են նաև օգտագործվել հանրային հավաքների ժամանակ՝ միմյանց սովորեցնելու և խրատելու նպատակով:

Հիմա խորհենք այն մասին, թե ինչ է գրել Պողոսը Կորնթոսի եկեղեցուն. *«...Երբ մեկտեղ ժողովվեք [խոսքը հավատացյալների հավաքույթների մասին է], ձեզնից ԱՄԵՆ ՄԵԿԸ սաղմոս ունի...»* (Ա Կորնթ. 14.26): Ձեզնից քանի՞սը. յուրաքանչյուրը:

Պատճառը, թե ինչու առաջին եկեղեցում բոլորը սաղմոս ունեին, երբ մեկտեղ էին հավաքվում, այն էր, որ նրանք իրենց անձնական աղոթքի կյանքում՝ իրենց տներում, սաղմոսներով էին խոսում:

Ինքներս մեզ սաղմոսներով, օրհներգերով և հոգևոր երգերով քաջալերելու օգուտները մեծ են:

Նախ և առաջ դա թույլ է տալիս իրական հաղորդություն ունենալ Աստծո հետ և Հոգով ու ճշմարտությամբ երկրպագել նրան: Բացի այդ՝ նաև հոգևոր շինության՝ Տիրոջ մեջ քաջալերված և շինված մնալու միջոց է: Ի վերջո, այդ կերպ մենք առանձնանում ենք աշխարհից, գիտակցում ենք Նրա ներկայությունն ու բնակությունը մեր մեջ, իսկ երբ գիտակցում ենք, որ Նա ապրում է մեր ներսում, դա փոխում է մեր ապրելակերպը:

Աստծո ծրագիրն է, որ մենք լցվենք Իր Հոգով և խոսենք սաղմոսներով, օրհներգերով ու հոգևոր երգերով: Գուցե ասեք. «Չգիտեմ ինչպես անել դա. նախկինում երբևէ չեմ արել: Ինչպե՞ս կարող եմ նման ընթացքի մեջ մտնել Հոգու հետ»:

ԲՈՐԲՈՔԵՔ ՊԱՐԳԵՎԸ

Շատ հավատացյալներ լցվել են Սուրբ Հոգով և խոսել լեզուներով, սակայն սկզբնապես Սուրբ Հոգով լցվելուց ի վեր այլևս չեն խոսել լեզուներով: Մեկ անգամ լցվել են, բայց չեն

պահպանել Աստծո հետ թարմ վերապրումները: Նրանք չեն հետևել Եփեսացիս 5.18-ում գրված կարգադրությանը. «...[շարունակաբար] *լցվեք Հոգով»:*

Ոմանք ասել են ինձ. «Չգիտեմ՝ արդյոք կարող եմ նորից խոսել լեզուներով, թե ոչ»: Սակայն Սուրբ Հոգին դեռևս ձեր ներսում է, և Նա է ձեզ խոսք տվողը: Միակ բանը, որ պետք է անեք, սպասելն է, որ Նա ձեր բերանում խոսք դնի, և ապա Նրան տեղի տալը: Այլ կերպ ասած՝ բորբոքեք Աստծո պարգևը ձեր ներսում:

Ուշադրությունն դարձրեք ոչ թե նրան, ինչ մարդն է ասում կամ մտածում, այլ թե ինչ է Սուրբ գիրքն ասում սրա մասին:

Բ ՏԻՄՈԹԵՈՍ 1.6
6 Այդ պատճառով միտքդ եմ բերում, որ ԱՐԾԱՐԾԵՍ *[կամ բորբոքես]* **ԱՍՏԾՈ ԱՅՆ ՇՆՈՐՀՔԸ** *[անգլերենում՝ պարգև]*, **որ քեզանում է իմ ձեռքերը քեզ վրա դնելով:**

Աստծո ո՞ր «պարգևի» մասին է խոսում Պողոսը: Այս խոսքը երկակի կիրառություն ունի: Այս համարում «պարգևը» կարող է վերաբերել նրան, ինչով Սուրբ Հոգին օժտում է մեզ, երբ ծառայության համար ընտրում է: Օրինակ՝ Գործք 13.2-ում Աստվածաշունչն ասում է. «*Սրանք երբ Տիրոջը պաշտոն էին մատուցում և ծոմ էին պահում, Սուրբ Հոգին ասաց. «Ինձ համար որոշեք Բառնաբասին և Սողոսին այն գործի համար, որ ես դրանց կանչել եմ»*»: Սուրբ Հոգին ինչ-որ բանով օժտեց Բառնաբասին և Պողոսին, երբ նրանք ընտրվեցին ծառայության համար:

Նույնը կարող ենք տեսնել այն դրվագում, երբ Տիմոթեոսն է ընտրվում ծառայության համար:

Ա ՏԻՄՈԹԵՈՍ 4.14
14 Անհոգ մի՛ լինիր այն քեզանում եղած շնորհքի *[անգլերենում՝ պարգևի]* **համար, որ քեզ տրվեց մարգարեությունով երիցության ձեռնադրությամբ:**

Երկրորդ կիրառությունն այն *պարգևն* է, որ Տիմոթեոսը ստացավ, երբ Պողոսը ձեռք դրեց նրա վրա՝ Սուրբ Հոգու պարգևը: Սուրբ գրքից գիտենք, որ Պողոսը շատերի վրա էր ձեռք դրել, և նրանք ստացել էին Սուրբ Հոգին:

Ուշադրությո́ւն դարձրեք, թե Բ Տիմոթես 1.6-ում ինչ է Պողոսն ասում, որ Տիմոթեոսն անի այդ պարգևի հետ: Նա ասում է. «Արծարծի՛ր [կամ բորբոքի՛ր] Աստծո այն շնորհքը, որ քեզանում է»: Դուք պետք է բորբոքեք ձեր ներսում գտնվող Սուրբ Հոգուն:

Դուք ինքներդ կարող եք ձեր հոգում բորբոքել Սուրբ Հոգուն՝ այլ լեզուներով աղոթելով: Որոշ ժամանակ այլ լեզուներով աղոթելուց հետո կարող եք սկսել *«...սաղմոսներով և օրհնություններով և հոգևոր երգերով երգել և սաղմոսել ձեր սրտերում Տիրոջը»* (Եփես. 5.19): Ահա այսպես են մտնում նորկտակարանյան երկրպագության մեջ:

Եթե սաղմոսներով, օրհներգերով և հոգևոր երգերով ինքներս մեզ քաջալերելը Աստծո ծրագիրն է Նոր Ուխտի ներքո ապրող հավատացյալների համար, ապա արդյոք չպե՞տք է որոշում կայացնենք և հետևենք այդ ծրագրին:

Ես ցանկանում եմ ապրել այնպիսի կյանքով, որը կհաճեցնի Աստծուն. ցանկանում են Նրա ծրագրի համաձայն շարժվել և ոչ թե իմ: Ցանկանում եմ նաև մտնել այն լիության մեջ, որ Նա ունի ինձ համար, իսկ դո՞ւք: Նա ասել է մեզ, թե ինչպես կարող ենք անել դա, և գոնե ես մտադրված եմ հնազանդվելու Աստծուն:

10 ՀՈԳՈՒ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ

Երբ Հիսուսն ինձ հետ կանգնած էր Թալսայի համաժողովների կենտրոնից վեր և պատմում էր Նոր Կտակարանի հավատացյալների համար Իր ծրագրի մասին, շրջվեց դեպի ինձ և ասաց. «Ցո՛ւյց տուր մարդկանց. երբ ուսուցումդ կավարտես, ասա՛ նրանց. «Պետք է սովորեցնեմ ձեզ ո՛չ միայն հրահանգներ տալով, այլև օրինակով»: Աստվածային օրինակներին հետևելը սուրբգրային է»:

Հետո Նա ուղղորդեց ինձ դեպի հետևյալ սուրբգրային խոսքը և ցույց տվեց, թե ինչպես էր, որ այդ խոսքի իմ մեկնաբանությունը ճշգրիտ չէր:

Ա ԿՈՐՆԹԱՑԻՍ 2.4
4 Եվ իմ խոսքը և քարոզությունը ոչ թե մարդկային իմաստության պատիր խոսքերով եղավ, այլ Հոգու և զորության ապացուցությամբ:

Նկատի՛ առեք, թե ինչպես է Պողոսն ասում. «*...իմ խոսքը և քարոզությունը... եղավ... Հոգու և զորության ապացուցությամբ»,* ոչ թե զորության և Հոգու դրսևորմամբ, այլ Հոգու ԵՎ զորության դրսևորմամբ: *Զորության* դրսևորումները զորության պարգևներն են՝ արտահայտված գործողությամբ՝ հատուկ հավատք, հրաշագործություններ և բժշկությունների պարգևներ:

Սակայն Սուրբ Հոգին նաև գործում և դրսևորվում է հայտնության և խոսքի պարգևներով: Պողոսն ասում է. «Քարոզում եմ Հոգու ապացուցությամբ *[անգլերենում՝ դրսևորմամբ]*»:

Այսպիսով՝ Պողոսն իրականում երկու բան է ասում. ա) ես գալիս եմ *զորության դրսևորմամբ*, բ) ես գալիս եմ *Հոգու դրսևորմամբ*:

Զորության դրսևորումը վերաբերում է զորության պարգևների դրսևորմանը՝ հատուկ հավատք, հրաշագործություններ, բժշկությունների պարգևներ: Այդ պարգևներն արտահայտում են Սուրբ Հոգու զորությունը. այդ պատճառով էլ կոչվում են «զորության պարգևներ»;

Սակայն Պողոսը նաև ասում է. «Քարոզում եմ Հոգու ապացուցությամբ *[դրսևորմամբ]*»: Սուրբ Հոգին *դրսևորում է* Իրեն նաև այլ կերպերով, ինչպես, օրինակ՝ հայտնության պարգևներով և խոսքի պարգևներով:

Մենք կարծում էինք, թե «*Հոգու և զորության ապացուցությամբ քարոզությունը*» վերաբերում էր միայն զորության պարգևների դրսևորմամբ քարոզելուն կամ նրան, ինչ մենք կոչում ենք «նշաններով և հրաշքներով» ուղեկցվող քարոզ, որի ընթացքում զարմանահրաշ բժշկություններ են տեղի ունենում: Սակայն այս խոսքը վերաբերում է նրան, թե ինչպես է Սուրբ Հոգին *դրսևորում* կամ *արտահայտում* Իրեն:

Կարող ենք ասել, որ Սուրբ Հոգին Իրեն *դրսևորում* է՝ ա) զորության պարգևներով, բ) խոսքի և հայտնության պարգևներով և գ) ծառայության պարգևներով:

Աստված ցանկանում է բերել մեզ այն կետին, որտեղ մենք *կդրսևորենք* Սուրբ Հոգուն և կդրսևորենք Սուրբ Հոգու զորությունը:

Մենք բոլորս կարող ենք ներգրավված լինել Հոգու դրսևորումներում մարգարեության միջոցով, քանի որ Աստվածա-

շունչն ասում է, որ բոլորս կարող ենք օգտագործել մարգարեության պարզ պարգևը. *«...կարող եք մեկ մեկից հետո ամենքդ մարգարեանալ...»* (Ա Կորնթ. 14.31): Մեկ այլ խոսք, որտեղ ասվում է, որ բոլորս կարող ենք ներգրավվել Հոգու դրսևորման մեջ մարգարեության միջոցով, Եփեսացիս 5.18, 19-ն է. *«...մի՛ արբենաք գինով, այլ լցվե՛ք Հոգով՝ ԽՈՍԵԼՈՎ ձեր մեջ...»:* Ինչպես տեսանք, սաղմոսներով, օրհներգերով և հոգևոր երգերով խոսելը մարգարեության և գերբնական խոսքերի պարզ պարգևն է գործողության մեջ: Այնպես որ մարգարեությունը ևս «*Հոգու* դրսևորում է»:

Հիսուսի այցելության ժամանակ տեսնում էի, որ մենք դրսևորում *էինք* Սուրբ Հոգուն: Այդ այցելության ընթացքում ոչ միայն Հիսուսն ինձ ասաց *դրսևորել* Հոգուն, այլև ես տեսա, որ մենք անում էինք դա: Ճամբարային հավաքույթի ժամանակ ես պարզապես արեցի այն, ինչ արդեն տեսել էի:

Երբ կանգնած էի Հիսուսի հետ և նայում էի Թալսայի համաժողովների կենտրոնի առաստաղից ներքև՝ ճամբարային հավաքույթի երկուշաբթի երեկոյան ծառայությանը, տեսա, թե ինչպես եմ դրսևորում Հոգուն՝ սաղմոսներ ասելով: Ես չլսեցի, թե դրանք ինչ սաղմոսներ էին, մինչև չհասավ այդ երեկոյան ծառայության իրական պահը: Տեսա նաև, թե ինչպես էին մեր ծառայողական խմբի այլ անդամներ, որոնց ես ճանաչում էի, դրսևորում Սուրբ Հոգուն սաղմոսներով, օրհներգերով և հոգևոր երգերով: Իրական ծառայության ժամանակ ամեն բան տեղի ունեցավ այնպես, ինչպես տեսել էի:

Ստորև ներկայացված է սաղմոսների մի շարք, որոնք ես հռչակել էի ճամբարային համաժողովի այդ ծառայության ընթացքում, ինչպես Հոգին առաջնորդել էր: Կային նաև այլ մարդիկ, որոնք Հոգուն դրսևորում էին երաժշտության միջոցով. նրանք երգում էին այն, ինչ Սուրբ Հոգին տվել էր իրենց:

Հիմա կբացատրեմ, թե ինչպես եմ սաղմոսներ ստանում, նրանց համար, որոնք երբեք սաղմոսներով չեն խոսել: Ես զգում եմ՝ ինչպես է սաղմոսը հոգուցս՝ ներսիցս բխում: Սովորաբար ստանում եմ վերնագիրը, բայց երբեմն՝ միայն առաջին մեկ կամ երկու բառերը: Երբևէ երկու տողից ավելի չեմ ստացել: Դրանից հետո չեմ իմացել ինչ ասել: Եթե կանգնած եմ հանրային հավաքույթում և խոսք չի գալիս, ապա կորցնում եմ ինքս ինձ:

Սաղմոսներով խոսելու համար հավատք է պետք: Ամբողջ քրիստոնեական կյանքն է հավատքի ընթացք, քանի որ առանց հավատքի անհնար է Աստծուն հաճեցնել: Եթե Նա ձեզ միանգամից ամբողջ սաղմոսը տար, ապա դուք կշարժվեիք երևույթով և չէիք կարողանա հաճեցնել Նրան՝ դա բարձրաձայնելով:

Այն բանից հետո, երբ ասում եմ այն, ինչ հավատքով ունեմ, մնացածը գալիս է մարգարեության հոգով: Եվ ես ընկնում եմ դրա հոսանքի մեջ:

Վստահ եմ, որ շատ քրիստոնյաների հետ է սա պատահել իրենց անձնական աղոթքի ժամանակ, և չիմանալով, թե դա ինչ է, նրանք տեղ չեն տվել դրան:

Հետևյալ սաղմոսները ստացել եմ, երբ սովորեցնում էի Հոգու դրսևորմամբ: Երբ սկսեցի խոսել, միայն մի բառ ունեի՝ սաղմոսի վերնագիրը: Մնացածը բարձրանում էր իմ հոգուց, երբ շարունակում էի հավատքով խոսել:

ԵՐԵԿ

Երեկն անցել է ու պետք է մոռացվի.

Հաճախ սատանան (ու նույնիսկ ընկերներդ)

Կհիշեցնի քեզ երեկվա մասին:

Սակայն դու պետք է հիշես մեկ բան.

Քո բոլոր երեկները,
Երեկների բոլոր մեղքերը
Ծածկված են Արյամբ:
Ասա՛ այն, ինչ լավ է.
Ասա՛ այն, ինչ ճիշտ է:
Քայլի՛ր լույսի մեջ ու հաստատ իմացի՛ր՝
Երեկները հավիտյան ջնջվել են,
Այլևս չկան:
Գեղեցիկ է այս օրը,
Տիրոջ հետ քայլի՛ր,
Օրհնությունները Նրա վայելի՛ր:
Երեկներն այլևս չկան:

ԱՅՍՕՐ

Այսօրն այնքան մութ չէ,
Որքան ասում են քեզ:
Այսօրն այնքան թշվառ ու անհույս չէ,
Որքան լուրերն են հայտնում:
Այսօր Տիրոջ օրն է,
Օր է ազատության,
Օր օրհնության,
Օր Նրա այցելության:
Երբ Տիրոջ հետ ես քայլում,
Ճանապարհիդ լույս է փռվում:
Ու այլևս դու տեսածիդ չես հենվում,
Այլ հավատքով ես ճանապարհդ գնում:
Խավարի մեջ, սակայն,
Կուրություն է տիրում:

Այս աշխարհի աստվածը
Կուրացրել է միտքը նրանց,
Որոնք խավարն են ընտրում:
Նրանք միայն անապատ, մթություն
Ու վախճան են տեսնում:
Աշխարհի վախճանը հաստատ պիտի գա,
Սակայն պետք է հիշել,
Թե այս օրերում ապրողներիս
Ինչ է Տերն ասել:
«Երբ աշխարհի վախճանը մոտենա,
Ձեր աչքերը պարզե՛ք վեր:
Ցնծացե՛ք,
Քանզի մոտ է փրկությունը»:
Այս օրը խավար չէ,
Այս օրը պայծառ է,
Լուսավոր է օրն այս:
Քայլե՛ք լույսի մեջ,
Եվ ուղիները ձեր բոլոր
Կլինեն պայծառ ու լուսավոր:

ՎԱՂԸ

Շատերն են մտահոգ,
Շատերն են ընկճված,
Շատերն են ուզում լինել ինքնասպան.
Վախը վաղվա ճնշում է նրանց:
Ի՞նչ կլինի վաղը,
Կգա՞ վաղն արդյոք,
Իսկ վաղն ի՞նչ,

Կլինենք արդյոք կենդանի:
Իսկ վաղն ինչ,
Կբերի՞ մեզ փառք, կբերի՞ հարստություն,
Կբերի՞ մեզ վաղն օրհնություն:
Լա՞վ կլինի վաղը,
Թե՞ վատին սպասենք:
«Վաղը սուրբերին է պատկանում»,-
ասում է Տերը Զորաց:
Վաղը կարող է լինել օրը քո հաղթության,
Վաղը օր է հաղթանակի,
Այնպես, ինչպես այսօր,
Եթե քայլդ դնես դու հավատքով:
Ընդունի՛ր վաղը՝ որպես աստիճան,
Որը պիտի տանի քեզ մեծ հաջողության
Հանուն Աստծո Արքայության:
Վաղը պայծառ է,
Վաղը պատկանում է սուրբերին,
Որոնք լույսի մեջ են քայլում:
Վաղը բարի է,
Լույսերի Հայրը Մեզ Իր
Բարիքն է ուղարկում:
Աստված բարի է,
Ողորմությունն է Նրա հավիտյան:
Հոգ մի՛ արա վաղվա համար:
Վստահի՛ր այն Նրան,
Դի՛ր Տիրոջ ձեռքերի մեջ:
Քայլի՛ր հավատքով և
Գոչի՛ր բարձր,

Բարձր ամեն աղմուկից ու իրարանցումից.
Ամեն բան լավ է,
Ամեն բան պայծառ է,
Քանի որ մենք զավակներ ենք լույսի:
Խավարն ու մութը կպատեն նրանց,
Որոնք հանձնվել են սատանային
Ու հավանություն տվել
Նրա ճանապարհին:
Խավարն ու մութը,
Կասկածն ու սուտը,
Վախն է ղեկավարում նրանց,
Որոնք չգիտեն իմաստն ամենի:
Իսկ նրանք, որոնք լուսավորված են Խոսքով,
Գիտեն, որ իրենց հավատքի փորձությունը
Թանկ է ոսկուց:
Ուստի, երբ դժվարություն է պատահում,
Երբ փորձության ես հանդիպում,
Իմացի՛ր, որ դրանք
Քո հաղթանակն են ազդարարում:
Ցնծա՛, ուրախացի՛ր,
Նրանք լավ գիտեն, որ
Հաղթանակն Աստծո զավակին է պատկանում:
Նրանք լավ գիտեն,
Որ Հայրը Երկնքից
Այստեղ՝ քեզ մոտ, քեզ համար
Իր Չեմպիոնին է ուղարկել:
Ու խավար այս աշխարհում
Նա հետևյալն է հռչակել.

«Ես եմ Լույսն աշխարհի,
Ինձ հետևեք,
Եվ խավարի մեջ չեք քայլի»:
Մութն ու խավարը անցյալին են պատկանում:
Հիմա դու լույսն ես աշխարհի:
Այո՛, հիմա դու քայլում ես Հոր լիության մեջ
Ու փառքի:
Ամենն, ինչ Նա տվել է,
Քոնն է:
Այնպես որ գոչի՛ր,
Բարձրաձայն աղաղակի՛ր՝
Ավելի, քան թշնամին:
Տե՛ս, Աստծո ամեն ասածը
Վեր է ամենից:

ՀԱՂԹԱՆԱԿ

Հաղթանակը չունի հասցե,
Այն առարկա չէ,
Հաղթանակը մարդկանց մեջ չէ,
Մարդկային ծրագիրը հաղթական չէ:
Հաղթանակը Նրանում է,
Ով կա հավիտյան:
Նրանն է ծրագիրը մեծ փրկության,
Նա է, որ Իր Զեմպիոնին
Երկնքից ուղարկել է երկիր՝
Իր Գրկից
Այստեղ՝ ներքև:
Թշնամու հետ Նա մտավ մարտի

Եվ հաղթական հարությամբ
Ջախջախեց մահ, դժոխք ու գերեզման:
Բարձրացավ վեր ու գերությունը գերի առավ:
Նրանում է հաղթանակը,
Նա է հաղթական:
Եթե ապրում ես Նրանում,
Իսկ Նա՝ քո մեջ,
Ապա հաղթանակը քո ներսում է,
Բորբոքի՛ր այն:
Գոչի՛ր թշնամու երեսին.
«Հաղթությո՛ւն, հաղթությո՛ւն, հաղթությո՛ւն,
Ամեն օր՝ հաղթությո՛ւն,
Ամեն գիշեր՝ հաղթությո՛ւն,
Ամեն վայրկյան՝ հաղթությո՛ւն»:
Քանզի իմ մեջ է ապրում Նա,
Ով միշտ է հաղթական:
Մեծ է դժոխքի բոլոր ուժերից,
Մեծ է Նա ամեն փորձությունից,
Մեծ է Նա ամեն-ամեն բաներից,
Որ կարող են դեմ դուրս գալ ինձ:
Սրա համար ես հանգիստ կառնեմ,
Սրա համար կցնծամ ամեն օր:
Իմն է հաղթանակը,
Ես եմ հաղթողն այսօր:

ՎԱԽ ՈՒ ԿԱՍԿԱԾ

Վախն ու կասկածը
Այստեղ՝ երկրի վրա,

Թշնամու զենքերն են տանջալից:
Դրանք ուղարկված են՝
Գողանալու օրհնությունները քեզնից:
Իսկ սերն ու հավատքը
Երկնքից են ուղարկված:
Սերն ու հավատքը միասին,
Հավատքը սիրով,
Սերը հավատքով
Ուս ուսի
Կտան քեզ հաղթանակ,
Ինչ էլ որ լինի,
Կազատեն ամեն խնդրից,
Ակոսից, փոսից,
Սերն ու հավատքը՝
Ուղարկված Երկնքից:
Սերն ու հավատքը քո հոգում,
Որ նոր է՝ վերստին ծնված:
Աստծո սերը քո հոգում է սփռված,
Իսկ հավատքը Խոսքից է բարձրանում,
Երբ կարդում ես այն և դրա շուրջ խորհում:
Դեմն նետիր ամեն վախ ու կասկած,
Դրանք տեղ չունեն
Կյանքիդ մեջ փրկագնված:
Նա մեզ չի տվել վախի հոգի,
Այլ ողջամտության, սիրո և զորության:
Դեմն նետիր ամեն վախ ու կասկած,
Ինչպես կնետեիր վերարկուդ մաշված:
Վեր կաց, քայլիր սիրո մեջ,

Հավատքո՛վ վարվիր,
Եվ օրհնությունները բոլոր երկնային
Կթափվեն գոգդ, զավա՛կ սիրելի:
Կապրես Նրա հրաշալի ծրագրով,
Կվայելես օրհնություններն Արքայի:
Կցնծաս և ուրախ կլինես,
Հիմա՛ է քո ժամը,
Ժամը հաղթանակի:

Այս սաղմոսները ծնվել են ճամբարային հավաքույթի ժամանակ՝ բազմաթիվ մարդկանց առջև, և հիմնված են Կողոսացիս 3.16-ի վրա: Տեսնո՞ւմ եք, թե ինչպես են դրանք սովորեցնում և խրատում մեզ: Եթե այս սաղմոսների բովանդակությունը ձեզ ծանոթ չլիներ, ապա դրանք ձեզ համար ուսուցողական կլիներին: Իսկ եթե արդեն իսկ գիտեք, թե ինչի մասին է խոսքը, ապա դրանք ձեզ համար խրատական կլինեն:

Սաղմոսներով, օրհներգերով և հոգևոր երգերով կարելի է խոսել նաև ձեր անձնական աղոթքներում՝ որպես հավատացյալ՝ Աստծո հետ հաղորդակցության ժամանակ: Ինչպես տեսանք 9-րդ գլխում, նման կերպ խոսելը հատկապես համապատասխանում է Եփեսացիս 5.19-ին:

Գուցե ասեք. «Իսկ ինչպե՞ս հասնենք դրան, եղբա՛յր Հեգին. ես երբեք ինքս ինձ չեմ խոսել սաղմոսներով, օրհներգերով և հոգևոր երգերով»:

Նախ և առաջ պետք է վերստին ծնված հավատացյալ լինեք, ընդունած լինեք Հիսուսին՝ որպես ձեր Փրկչի: Այնուհետև պետք է մկրտված լինեք Սուրբ Հոգով, ինչի նշանը լեզուներով աղոթքն է՝ ըստ Աստվածաշնչի:

Երբ սկսեք ավելի երկար ժամանակ անցկացնել այլ լե-

զուներով աղոթքի մեջ, ձեր հոգին համընթաց կլինի Աստծո Հոգու հետ: Սաղմոսները գալիս են ձեր հոգուց, որտեղ էլ բնակվում է Սուրբ Հոգին: Նա ձեր գլխում չէ, և ձեր գլուխը ոչ մի կերպ չի կարող ձեզ օգնել սաղմոսներ «հորինելու»: Սաղմոսները մարդկային ստեղծագործություն չեն, դրանք Սուրբ Հոգուց են:

Երբ տևական ժամանակ Հոգով աղոթեք այլ լեզուներով, կտեսնեք, որ ձեր ներսից՝ ձեր հոգուց խոսքեր են բարձրանում:

Գուցե երգեք լեզուներով, այնուհետև գուցե երգեք դրա թարգմանությունը: Սակայն միշտ չէ, որ պարտադիր է երգել թարգմանությունը, պարզապես շարունակեք երգել լեզուներով և երկրպագել Տիրոջը:

Երբ ինքներդ ձեզ վարժեցնեք այս բաներում, ձեր ներսից գուցե ինչ-որ խոսք կամ արտահայտություն բարձրանա ձեր մայրենի լեզվով:

Հավատքի քայլ արեք և բարձրաձայնեք դա: Եթե այս ոլորտում գործի դնեք ձեր հավատքը, ապա դա կհարստացնի ձեր հոգևոր կյանքը, կփոխադրվեք մեկ այլ հարթություն՝ հոգևոր ավելի բարձր մակարդակ:

Երբ Հոգով լցված հավատացյալներն անում են սա իրենց տներում՝ Աստծո հետ իրենց անձնական հաղորդակցության ժամանակ, ապա երբ մեկտեղ են հավաքվում, Աստծո զորությունն այնպես է դրսևորվում, ինչպես նախկինում չէին տեսել:

Աստված ցանկանում է հասցնել մեզ այն կետին, որտեղ մենք կկարողանանք դրսևորել Նրա փառքը:

1987 թվականի ճամբարային հավաքույթի երկուշաբթի երեկոյան ծառայության ժամանակ ես հավաքվածներին պատմեցի այն, ինչը բացատրեցի այս գլխում: Մենք բարձրացրինք մեր ձեռքերը և երկրպագեցինք Աստծուն, և ես լսե-

ցի, որ Աստծո Հոգին ասում էր. «Մի փոքր ժամանակ կպահանջվի, որ փոխվեք: Եվ մի փոքր ժամանակ անց կտեսնեք արդյունքները: Զորությունը կդրսևորվի, և փառքը կգա ձեր մեջ բնակվելու: Այն մերթընդմերթ չի դրսևորվի, այլ կբնակվի ձեր մեջ: Եվ Տիրոջ փառքը կհայտնվի ձեզ, և դուք օրհնություն կդառնաք շատերի համար»:

11 ՃՇՄԱՐԻՏ ՆՈՐԿՏԱԿԱՐԱՆՅԱՆ ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆ

Մենք պետք է գիտակցենք, որ Հին Կտակարանի սուրբերը *հոգևոր* տաճար չէին: Իսրայելը կոչվում էր Իսրայելի «տուն», և «տուն» բառն օգտագործվել է Հին Կտակարանում, սակայն այդ մարդիկ հոգևոր առումով մահացած մարդիկ էին, նրանք վերստին ծնված չէին: Հին Կտակարանի քահանաները միայն ֆիզիկական զոհաբերություններ էին անում: Հետևաբար նրանք «հոգևոր» տաճար չէին:

Նոր Կտակարանում՝ Ա Պետրոս 2-րդ գլխում, Աստվածաշունչը հավատացյալներին կոչում է. *«...ԿԵՆԴԱՆԻ քարեր... շինված ՀՈԳԵՎՈՐ տաճար»:*

Ա ՊԵՏՐՈՍ 2.5
5 Դուք էլ կենդանի քարերի պես շինվեք հոգևոր տաճար, սուրբ քահանայություն [Քրիստոսի ամբողջ Մարմինը], որ ՀՈԳԵՎՈՐ ՊԱՏԱՐԱԳՆԵՐ ՄԱՏՈՒՑԵՔ Աստծուն ընդունելի՝ Հիսուս Քրիստոսի ձեռով:

Այս խոսքում ասվում է, որ որպես սուրբ քահանայություն՝ մենք պետք է. *«....հոգևոր պատարագներ մատուցենք»*: Որո՞նք են այն հոգևոր պատարագները *(կամ զոհաբերությունները),* որ մենք պետք է մատուցենք:

ՄԵՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԿԵՆԴԱՆԻ ՊԱՏԱՐԱԳՆԵՐ ԵՆ

ՀՌՈՄԵԱՑԻՍ 12.1
1 Արդ աղաչում եմ ձեզ, եղբայրնե՛ր, Աստծո ողորմությունով, որ ձեր մարմինները ներկայացնեք կենդանի, սուրբ և Աստծո ընդունելի պատարագ, որ է ձեր բանավոր պաշտոնը:

Իրական նորկտակարանյան երկրպագությունը ներառում է մեր մարմինները որպես կենդանի պատարագ Աստծուն ներկայացնելը: Աստվածաշունչն ասում է, որ *սա* է այն հոգևոր պատարագը, որն ընդունելի է Աստծո համար որպես *հոգևոր փառաբար* և *հոգևոր քահանայություն*. «*Դուք էլ կենդանի քարերի պես շինվեք հոգևոր փառաբար, սուրբ քահանայություն [Քրիստոսի ամբողջ Մարմինը], որ ՀՈԳԵՎՈՐ ՊԱՏԱՐԱԳՆԵՐ մատուցեք Աստծո ընդունելի՝ Հիսուս Քրիստոսի ձեռով*» (Ա Պետր. 2.5):

Աստվածաշնչի «King James» թարգմանությունում ասվում է, որ մենք պետք է մեր մարմինները ներկայացնենք որպես *«կենդանի պատարագ»*: Այլ թարգմանություններում գրված է, որ մեր մարմինները պետք է ներկայացնենք որպես «հոգևոր երկրպագություն» կամ «երկրպագության հոգևոր ծառայություն»: Եվ Աստվածաշունչը սա անվանում է «բանավոր պաշտոն»:

Նորկտակարանյան հավատացյալների համար *իրական* հոգևոր երկրպագության մաս է մեր մարմիններն Աստծուն որպես հոգևոր պատարագ ներկայացնելը: Իրական երկրպագությունն այն է, երբ եկեղեցին սկսում է երկրպագել Աստծուն՝ ըստ նորկտակարանյան երկրպագության Նրա ծրագրի:

Իր այցելության ժամանակ Հիսուսն ասաց ինձ. «Եթե մարդկանց չսովորեցնեն հոգևոր երկրպագության՝ նորկտակարանյան երկրպագության մասին, նրանք չեն հասկանա դա: Նրանք չգիտեն, թե որն է իրական երկրպագությունը: Մի

փոքր բան գիտեն Ինձ փառաբանելու մասին, սակայն ոչինչ չգիտեն իրական երկրպագության մասին»:

Քրիստոնյաների մեծ մասը ոչինչ չգիտի իրենց մարմիններ-ը որպես կենդանի, սուրբ ու ընդունելի պատարագ Աստծուն ներկայացնելու հոգևոր երկրպագության մասին:

Գիտեմ դա, քանի որ շփվել եմ նրանց հետ: Հասկանում եմ, թե ինչու Տերն ասաց, որ խարիզմատները շատ քիչ բան գիտեն Իրեն փառաբանելու մասին և ոչինչ չգիտեն իրական երկրպագության մասին: Որոշ խարիզմատներ այստեղից այնտեղ են գնում՝ լեզուներով խոսելով, ծխախոտ ծխելով և կոկտեյլներ ըմպելով: Նման կերպ վարվելով՝ նրանք ցույց են տալիս, որ ոչինչ չգիտեն *իրական հոգևոր երկրպագության* մասին:

Երբ մարդիկ միացան խարիզմատիկ շարժմանը, այնպիսի տպավորություն էր, որ նրանք ամեն բանից ազատվեցին՝ բոլոր օրենքներից, կարգուկանոնից, պատասխանատվությունից և սահմանափակումներից: Սակայն մենք չպետք է թույլ տանք, որ մեր ազատությունը վատ համբավ ձեռք բերի: Աստված ցանկանում է, որ մեր մարմինները վերափոխվեն՝ ներկայացվեն որպես *«կենդանի, սուրբ և Աստծո ընդունելի պատարագ, որ է ձեր բանավոր պաշտոնը»* (Հռոմ. 12.1): Ձեր հոգևոր երկրպագությունը ձեր մարմիններն Աստծուն ներկայացնելն է:

Եկեք տեսնենք, թե էլ ինչ է Աստված ցանկանում, որ անենք որպես նորկտակարանյան իրական երկրպագության մաս:

ՀՌՈՄԵԱՑԻՍ 12.2
2 Եվ մի՛ կերպարանվեք այս աշխարհի կերպարանքով, այլ նորոգվե՛ք ձեր մտքի նորոգությամբ...

Աստված ցանկանում է, որ մեր մարմինները վերափոխվեն, և Նա ցանկանում է, որ մեր մտքերը նորոգվեն: Սրանք հոգևոր պատարագներ *(կամ զոհաբերություններ)* են, որոնք, ըստ Աստվածաշնչի, հավատացյալը պետք է մատուցի Աստծուն:

Շատերը փորձում են ծառայել Աստծուն նույն հին մտածելակերպով, որ ունեցել են մինչև վերստին ծնվելը: Զարմանալի չէ, որ դեռևս իրենց մարմիններն և մտքերին առնչվող խնդիրներ են ունենում: Միտքը նորոգելու համար պահանջվում են *ջանք* և *կարգապահություն*: Դա տեղի չի ունենում պարզապես եկեղեցի գնալով կամ աղոթելով, ինչպես նաև տեղի չի ունենում մեկ օրում: Դրա համար անհրաժեշտ է ջանասիրաբար ուսումնասիրել Աստծո Խոսքը և սովորել փոխել սեփական մտածելակերպն ըստ նրա, ինչ Աստծո Խոսքն է ասում: Մտքի նորոգությունը, սակայն, *այլընտրանքային տարբերակ չէ,* եթե ցանկանում ենք լինել *իրական նորկտակարանյան երկրպագող*: Նորոգված միտքը այն հոգևոր երկրպագության մասն է, որը մենք պետք է ներկայացնենք Աստծուն:

ՓԱՌԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՐԱԳԸ

Եբրայեցիս 13.15-ում ասվում է, որ մենք պետք է Աստծուն ներկայացնենք փառաբանության *(կամ օրհնության)* պատարագ, որը մեր շուրթերի պտուղն է, այսինքն՝ գոհություն տանք Նրա անվանը: Սա Աստծուն ընդունելի պատարագ է, որն *իրական* նորկտակարանյան երկրպագության մաս է:

ԵՓԵՍԱՑԻՍ 5.20
20 Ամեն ժամանակ ամեն բանի համար գոհացե՛ք Աստծուց և Հորից՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունով:

ԵԲՐԱՅԵՑԻՍ 13.15
15 Ուստի Նրա [Հիսուսի] ձեռով ամեն ժամանակ Աստծուն օրհնության պատարագ մատուցենք [Ի՞նչ պետք է անենք Նոր Ուխտի ներքո], այսինքն՝ Նրա անունը դավանող շրթունքների պտուղ:

Ինչ նկատի ունի Աստվածաշունչը «օրհնության պատարագ» ասելով, և ինչպե՞ս կարող եք մատուցել այն Աստծուն: Եկե՛ք նորից նայենք այդ խոսքին. *«…ամեն ժամանակ Աստծուն օրհնության պատարագ մատուցենք, այսինքն՝ Նրա անունը դավանող (անգլերենում՝ Նրա անվանը ԳՈՀՈՒԹՅՈՒՆ տվող) շրթունքների պտուղ»:*

Հետևաբար Աստվածաշունչն ասում է, որ նորկտակարանյան փառաբանությունը.

«…Նրա անվանը գոհություն տվող շրթունքների պտուղն է»:

Եկե՛ք տեսնենք, թե ինչ է ասում Աստվածաշունչը մեր շրթունքների պտղի մասին:

ՓԻԼԻՊԵՑԻՍ 3.1
1 Այսուհետև, իմ եղբայրնե՛ր, ՈՒՐԱ՛Խ ԵՂԵՔ Տերում…

ՓԻԼԻՊԵՑԻՍ 4.4
4 ՈՒՐԱ՛Խ ԵՂԵՔ Տերում ամեն ժամանակ: Դարձյալ ասում եմ՝ ուրա՛խ եղեք:

Ա ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ 5.16, 18
16 Ամեն ժամանակ ՈՒՐԱ՛Խ ԵՂԵՔ…
18 Ամեն բանի մեջ ԳՈՀԱՑԵ՛Ք, որովհետև սա է Աստծո կամքը ձեզ վրա Քրիստոս Հիսուսում:

Չպետք է Աստծուց գոհանալ սատանայի արածի *համար*: Դա սուրբգրային չէ: Չպետք է Աստծուն շնորհակալություն հայտնել նրա համար, ինչ սատանան է անում, սակայն այդ ամենի մեջ մենք կարող ենք փառաբանել Աստծուն:

Երբ նոր էի սկսել ծառայել և քարոզում էի բարգավաճման մասին՝ իմանալով, որ դա է ճիշտը, դա Աստծո Խոսքն է, ես ամենաանհավանական թեկնածուն էի, ով կարող էր բարգավաճման մասին քարոզել: Մի հին ու մաշված մեքենա էի վարում, որն ի վերջո վաճառեցի որպես թափոն, քանի որ չէի կարող վաճառել որպես որևէ այլ բան: Մի գրպանս ծակ էր,

մյուս գրպանումս մի մետաղադրամ կար և փոքրիկ դանակ, սակայն ես վարում էի մայրուղով և գոհանում ու օրհնում էի Աստծուն: Արդյոք գոհանո՞ւմ էի Աստծուց այն բանի *համար*, որ գումար չունեի: Ո՛չ, այլ գոհանում և օրհնում էի Նրան այն ընթացքում, որ գումար չունեի, քանի որ Նրա Խոսքը ճշմարիտ է, և դա ինձ համար ևս մեկ առիթ է հավատալու Նրան և ապացուցելու, որ Նրա Խոսքը գործում է: Ես շնորհակալություն էի հայտնում Աստծուն այն իրավիճակում, որով անցնում էի:

«Այո՛, սակայն Դուք չես հասկանում, եղբա՛յր Հեգին, ինձ թույլ չեն տալիս երգչախմբում երգել»:

Փա՛ռք Աստծուն:

«Ինձ երբեք չեն կանչում եկեղեցում որևէ գործ անելու»:

Փա՛ռք Աստծուն: *Եթե* դուք լցված եք Հոգով, ապա կարող եք գոհանալ Նրանից և *կգոհանաք Նրանից*:

9-րդ գլխի այն պարբերությունում, որն ուսումնասիրեցինք, ևս մի բան կա, որի վրա ուզում եմ հրավիրել ձեր ուշադրությունը: Այս անգամ ընթերցելիս հատուկ ուշադրությո՛ւն դարձրեք մեծատառերով գրված բառերին:

ԵՓԵՍԱՑԻՍ 5.18–20
18 ...ԼՑՎԵՔ ՀՈԳՈՎ,
19 ԽՈՍԵԼՈՎ ձեր մեջ սաղմոսներով և օրհնություններով և հոգևոր երգերով, ԵՐԳԵՔ և ՍԱՂՄՈՍԵՔ ձեր սրտերում Տիրոջը:
20 ԱՄԵՆ ԺԱՄԱՆԱԿ ամեն բանի համար ԳՈՀԱՑԵՔ Աստծուց և Հորից՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունով:

Հիշո՞ւմ եք՝ ինչ էր ասել Հիսուսը. «Նոր Կտակարանում շեշտադրումը անհատ հավատացյալի Հոգով լցվելու և Աստծուն Հոգով երկրպագելու վրա է»: Դա ասելով՝ Նա ուղղորդեց ինձ դեպի այս խոսքերը:

Տեսնո՞ւմ եք, որ Եփեսացիս 5.20-ում խոսվում է փառաբանության հոգևոր պատարագ ներկայացնելու մասին, որը մեր գոհացող շուրթերի պտուղն է:

Հոգով լցված անձնավորությունը լցված է նաև գոհությամբ, շնորհակալություն է հայտնում Աստծուն փրկագնման Նրա մեծ ծրագրի համար, որը Նա իրագործեց Հիսուս Քրիստոսին երկիր ուղարկելով, շնորհակալություն է հայտնում ամեն բարի ու կատարյալ պարգևի համար: Իրական նորկտակարանյան երկրպագությունը գոհության *կյանքով* ապրելն է: Միայն թե պատկերացնեք, թե ձեր մեջ ինչ փոփոխություն կբերի գոհություն տալը:

Ո՞րն է *Աստծո ծրագիրը* նորկտակարանյան հավատացյալի համար. այն, որ նա լցված լինի Հոգով, երգի և սաղմոս ասի ու շնորհակալություն հայտնի: Սա է ճշմարիտ նորկտակարանյան երկրպագությունը:

Նոր Կտակարանը շեշտը դնում է Հոգով լցված լինելու և Աստծուն *Հոգով* երկրպագելու վրա: Այն ոչինչ չի ասում ծափ զարկելու մասին: Չեմ կարծում, թե հնարավոր է Հոգով ծափահարել: Հնարավոր է Հոգով պարել, հնարավոր է նույնիսկ Հոգով ծիծաղել: Հոգու մեջ ծիծաղելը ազատագրում է բերում:

ՀՈԳՈՎ ԾԻԾԱՂԵԼԸ

Մեկ անգամ հավաքույթ էի անցկացնում մի եկեղեցում, որի հովիվն ինչ տեսակի խնդիր ասես, որ չուներ: Հետագայում նա մեզ ասաց, որ տասներեք տարի կապված է եղել թմրության ոգով: Այդ հավաքույթի ժամանակ «Ռեմայի» փառաբանողներից մեկը սկսեց ծիծաղել, և մեզնից ոմանք ևս սկսեցին ծիծաղել: Որոշ ժամանակ անց այդ հովիվն ասաց ինձ. «Երբ տեսա, թե ինչպես էին ծիծաղում փառաբանողները, ես ևս ծիծաղեցի՝ բնական ծիծաղով, պարզապես որով-

հետև նրանք ծիծաղում էին: Սակայն հանկարծ սկսեցի Հոգով ծիծաղել. Ծիծաղում, ծիծաղում ու ծիծաղում էի: Հաջորդ առավոտյան երբ արթնացա, տասներեք տարվա մեջ առաջին անգամ թմրության ոգին հեռացել էր, և ես նորից սկսեցի ծիծաղել»:

Ահա մեկ օրինակ, թե ինչ էր արել Հոգով ծիծաղելը մի հովվի կյանքում: Սակայն ոչինչ արհեստականորեն անելու կարիք չկա: Ինչ որ անում ենք, Հոգով պետք է անենք:

Եթե օծություն չկա, կարիք չկա փորձել ինչ-որ բան ձևացնելու, քանի որ դա մարմնով կլինի: Այո՛, գոյություն ունի ծիծաղ Հոգու մեջ և պար Հոգու մեջ, սակայն Հոգով պարելն ու ծիծաղելը Հոգով *լցված* լինելու *արդյունք* են: Հարկավոր է հիշել, որ Աստվածաշունչը նման բաների մասին մասնավորապես չի խոսում: Սակայն գիտենք նաև, որ Նոր Կտակարանում ասում է մեզ ուրախ լինել Տիրոջ մեջ, *լցված* լինել Հոգով և *շարժվել* Հոգով: Որպեսզի ճշմարիտ նորկտակարանյան երկրպագություն մատուցենք, ապա ինչ էլ անենք, պետք է *Հոգով* անենք:

Նոր Կտակարանում *ճշմարիտ* երկրպագության վրա շեշտադրումը Հոգով լցված լինելու, սաղմոսներով և օրհներգերով խոսելու, շնորհակալ լինելու և մեր մարմիններն ու նորոգված մտքերը որպես կենդանի պատարագ Աստծուն մատուցելու վրա է: Աստված սա մեր հոգևոր ծառայությունն է համարում: Սա է ճշմարիտ երկրպագության Աստծո *ծրագիրը*:

Իսկ ո՞րն է Աստծո *նպատակն* այդ ծրագրում: Նրա նպատակն է օգնել և շինություն բերել մեզ: Քանի որ սա է Աստծո ծրագիրը, ապա մենք պետք է ձգտենք և հետևենք *դրան*: Պողոսն ասում է. *«...ետևի բաները մոռանալով՝ դեպի առաջի լինողներն եմ նկրտում: Հետևում եմ դեպի նպատակը՝ Աստծո վերին կոչումի մրցանակին Քրիստոս Հիսուսում»* (Փիլիպ. 3.13, 14):

Քրիստոսի Մարմնի համար վերին կոչում կա: Մենք կանգնած ենք Աստծո Հոգու զորավոր շարժի շեմին: Աստված բացահայտել է Իր ծրագիրը, որով կարող ենք մուտք գործել Նրա օրհնության լիության մեջ: Հիմա մեր հերթն է՝ ձգտելու Աստծո ծրագրին Աստծո նպատակով և մուտք գործելու այս հաջորդ հեղման մեջ...

Սակայն մենք պետք է պատրաստակամ լինենք գին վճարելու...

12 ԳԻՆԸ, ՈՐ ՊԵՏՔ Է ՎՃԱՐԵՆՔ

Նվիրման հետևյալ աղոթքն արվել է Սուրբ Հոգու ներշնչմամբ 1987 թվականի «Տունդարձի» հավաքույթի ժամանակ՝ այն բանից հետո, երբ ես հավաքվածներին սովորեցրել էի այս գրքում տեղ գտած մի քանի թեմաների մասին: Թող որ մեզնից յուրաքանչյուրը սա դարձնի իր շարունակական աղոթքը, և թո՛ղ որ մենք ընտրենք վճարել այն գինը, որն անհրաժեշտ է Աստծո ծրագրի համաձայն քայլելու համար, ոչ միայն մեր անձնական կյանքերում Նրա ծրագրի, այլև այս օրերում աշխարհի համար ունեցած Նրա ծրագրի:

Թանկագի՛ն Հայր, ինչպես Պողոսն է ասում, «Խոնարհում եմ ծնկներս մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հոր առջև, ում անունով կոչված է ամբողջ ընտանիքը Երկնքում և երկրի վրա»: Մենք խոնարհվում ենք Քո առջև:

Ների՛ր մեզ, Տե՛ր: Մենք կարծում էինք, թե չափից մեծ էր գինը, և պատրաստակամ չէինք այն վճարելու:

Կարծում էինք, թե չափից մեծ էր գինը: Սակայն դա այդպես չէ: Դա այդպես չէ: Ների՛ր մեզ: Մենք մուտք չենք

գործել այդ բանի մեջ, չենք արել այն ամենը, ինչ Դու ասել էիր: Ների՛ր մեզ: Ների՛ր մեզ: Դու մեզ ցույց տվեցիր այդ բաները, իսկ մենք կարծեցինք, թե դրանք *հնարավոր չեն, նման բան լինել չի կարող, և չվճարեցինք գինը: Մենք կարծեցինք, թե գինը չափից մեծ է, չափից բարձր է, շատ թանկ է:*

Թո՛ղ որ մեզնից ոչ մեկը, որևէ մեկը հետ չքաշվի նրանից, ինչ Դու ես ասում մեզ: Հա՛յր, թեև միշտ չենք լիարժեքորեն հասկանում ամեն բան, այսօր ցանկանում ենք ընծայվել, նվիրվել Քո կամքը կատարելուն, որպեսզի այս ժամում իրականանա Քո ծրագիրը, որպեսզի Աստծո գործը կատարված լինի երկրի վրա: Օ՜, Հա՛յր Աստված, մենք ընծայվում և նվիրվում ենք Քո կոչմանը, Քո հրամանին՝ ոչ թե իմ ծրագրերին, ոչ թե մեր ծրագրերին, այլ Քո ծրագրերին: Հա՛յր Աստված, Հոգու շարժ կա, և Հոգու աշխատանք կա: Կա ծառայություն Հոգում և Հոգուց, կա Աստծո զորության դրսևորում և Սուրբ Հոգու դրսևորում, որոնք Դու կամենում ես, որ ցուցաբերվեն, բայց որոնք մենք չենք կարողացել ցուցաբերել, քանի որ մեզնից ոմանք պատրաստակամ չեն եղել վճարելու գինը: Բայց մենք կվճարենք այն, Տե՛ր: Մենք կանենք դա, Տե՛ր: Մենք կվճարենք գինը:

Սա շրջադարձային կետ կլինի մեզնից ոմանց կյանքերում, Տե՛ր: Փա՛ռք Աստծուն: Ամեն: Մեզնից ոմանք հետ կնայեն, կհիշեն այս երեկոն և կասեն. «Դա էր ժամը, դա էր պահը, դա էր վայրը»: Փա՛ռք Աստծուն:

Կան բաներ, որոնք դժվար են մարմնի համար, սակայն

մենք կինազանդվենք, մենք կանենք դա: Այո՛: Օ՜, Աստվա՛ծ իմ: Մենք այնպես ենք խճճվում, մենք միահյուսում ենք Քո ծրագրերը մեր ծրագրերի հետ, և Դու միայն որոշ չափով ես կարողանում օրինել դրանք, քանի որ դրանք մեր ծրագրերն են և ոչ թե Քոնը. Դրանք մեր ընտրություններն են, ոչ թե Քոնը: Թո՛ղ որ սովորենք լսել Քեզ:

Թանկագի՛ն Հայր Աստված, մեզնից շատերը գիտեն ավելին, քան կիրառում են: Մեզնից շատերը ունեն գիտություն, սակայն չեն ապրում իմացածին համապատասխան: Օգնի՛ր մեզ, Հա՛յր Աստված, որ արձագանքենք նրան, ինչ Դու ասում ես մեր հոգիներին: Կյանքը կարող է փոխվել և *կփոխվի*: Ծառայությունը կարող է փոխվել և *կփոխվի:*

Շատերը ամբողջությամբ կփոխվեն. նրանք մասամբ էին քայլում լույսի մեջ, շատ քիչ բան էին անում, բայց հիմա կանեն այնքա՛ն շատ, կանեն ավելին: Շնորհակալ ենք Քեզնից դրա համար:

Օ՜, Տե՛ր Աստված. լույսը կշողա, փառքը կգա և կդրսևորվի: Աստծո փառքի ամպը, Աստծո ներկայության ամպը կծածկի մեզ: Աստծո փառքը կիջնի, և մենք կնվիրվենք դրան: Այս օրում և ժամում մենք դրա վրա ենք կենտրոնանում: Հիսուսի անունով: Փա՛ռք Աստծուն, ալելուիա, շնորհակալություն, Տե՛ր:

Թո՛ղ որ մենք ոչ մի կերպ հետ կքաշվենք Քո կամքից: Թող որ հետ չպահենք այն գնի մի մասը, որը պետք է վճարենք: Թո՛ղ որ վճարենք Քո կամքը կատարելու գինը: Թո՛ղ որ այլևս չպահենք մեզ այնպես, կարծես Աստված

նկատի չուներ այն, ինչ ասել է: *Նա նկատի ուներ հենց այն, ինչ ասել է:* Օ՜, այո՛: Եվ Նրա ճանապարհը լավագույն ճանապարհն է: Նրա ճանապարհը լավագույն ճանապարհն է: Եվ վերջում դուք չեք ասի՝ «Դա ինձ համար այս գինն արժեցավ», այլ կասեք՝ «Դա տվեց ինձ: Հարուստ շահաբաժին տվեց»:

Այս պահին կարող է թվալ, թե Աստծո կամքին ամբողջովին հետևելը ինչ-որ բան է խլում, ոմանց դեպքում այդ գինը սարսափելի կթվա: Օ՜, այո՛, Հա՛յր, սակայն մեր խղճուկ մարդկային մտքերը շատ անգամներ կանգնում են մեր ճանապարհին և խանգարում մեզ: Ո՛չ, մենք այդ կերպ չենք մտածի: Մենք չենք մտածի, թե Աստծուն հնազանդվելը թանկ գին ունի: Մենք դրան տեղ չենք տա մեր մտքերի ընթացքի մեջ:

Եթե թշնամին դրա պատկերը բերի մեր մտքերի մեջ, մենք պարզապես կասենք. «Սատանա՛, դա պարզապես մտապատկեր է: Ես դա Աստծուն եմ հանձնել: Հիմա դա Նրա ձեռքերում է, և Նա է լուծում այդ հարցը: Ամեն բան լավ է լինելու: Եվ ես կգոհանամ, ինչ ընթացք էլ որ ստանա դա, ինչ էլ որ պատահի: Ես կգոհանամ»: Քանի որ Քո ճանապարհը, Հա՛յր, լավագույնն է: Քո ճանապարհը ճիշտ է: Փա՛ռք Աստծուն:

Այո՛, Տե՛ր, մենք ուրախանում ենք դրանով: Այո՛, ես գիտակցում եմ, որ Դու շատերին ես բարձրացնում: Նրանք դեռ սկզբնական փուլերում են միայն: Այո՛, սակայն եթե հավատարիմ լինեն, եթե հավատարիմ մնան, ապա Դու կբարձրացնես նրանց, և էլ ավելի զորավոր օծություն

կգա նրանց վրա, որը մեծապես կաճի: Նրանք ծառայության մեջ կբարձրանան, քանի որ միևնույն ծառայության պարգևի մեջ շատ հարթություններ կան: Միևնույն ծառայության պարգևի մեջ կան տարբեր չափեր ու տարբեր հարթություններ: Նրանք, որոնք հավատարիմ կմնան, մուտք կգործեն այդ ծառայության ավելի բարձր հարթություն: Այո՛, նրանցում առավել կատարելագործված դրսևորում կստանա գիտության հոգին:

Նրանք կխոսեն, ու շատ բարի բաներ կկատարվեն: Այո՛, հայտնի կդառնա Աստծո ծրագիրը: Մենք ցնծում ենք, մենք ուրախ ենք:

Հովիվներն այնքա՛ն կարևոր դերակատարում ունեն Աստծո ծրագրերի և նպատակների մեջ, քանի որ գառներին հովիվ է պետք: Այս օրերում հովիվները պետք է ավելի շատ լինեն, քան որևէ այլ ծառայության պարգևով օժտվածները: Սա խիստ կարևոր պահ է, որոշիչ պահ է. մենք սա շատ ենք ասում: Սակայն իրապես պահը շատ-շատ կարևոր է: Հիմա ժամն է, որ հովիվն իր ամբողջական ներուժով և ծառայության պարգևով գործի: Օ՜, Հա՛յր Աստված, թո՛ղ որ հովիվներին նոր հոգի տրվի: Թո՛ղ նրանցից յուրաքանչյուրը զորանա հայտնության պարգևներով, գիտության հոգով և հասկացողության հոգով:

Ո՛չ, անպայման չէ, որ հովիվները մարգարեի ծառայության պարգևն ունենան, սակայն նրանք կզորանան գիտության հոգով և հատկապես իմաստության հոգով: Օ՜, Հա՛յր Աստված, այն ամենը, ինչ նրանց խնդիր է թվացել, այլևս խնդիր չի լինի, քանի որ պատասխանը կիմանան:

Նրանք կունենան պատասխանը: Տպավորություն կլինի, թե նրանք կանգնած են եղել դաշտավայրի եզրին, սակայն հիմա կկանգնեն սարի գագաթին: Նրանք կկանգնեն սարի գագաթին, և նրանցից ոմանց համար ամբիոնն այլևս բանտ չի լինի, այլ կլինի գահ:

Քանի որ սատանան պարտված թշնամի է, նա չի հաղթելու ոչ մի իրավիճակում: Պարտվելու է ամեն անգամ, քանի որ պարտված թշնամի է: Հովիվները ցնծալու շատ պատճառներ ունեն:

Օ՜, Տեր Աստված: Թո՛ղ հատուկ խոսք տրվի նրանց, որոնք գնում են օտար դաշտեր, Տեր, որտեղ խավարն անթափանց է: Թո՛ղ լույսն ավելի պայծառ շողա, և նրանց կյանքերը հարստանան Քո փառքով:

Թո՛ղ որ մեզնից ամեն մեկը՝ ծառայության որ ոլորտից էլ լինենք, կյանքի որ ոլորտում էլ լինենք, օ՜, թանկագի՛ն Աստված, թո՛ղ որ մեզնից ամեն մեկը պատրաստակամ լինի վճարելու գինը, քանի որ այդ ամենը գին ունի: Փա՛ռք Աստծուն, որ Հիսուսը վճարել է մեր փրկագնման ու փրկության գինը, սակայն Քեզ հնազանդվելու և Քո հանձնարարած ծառայությունն անելու համար պետք է գին վճարել: Երբեմն դա կարող է նշանակել, որ մենք պետք է զրկենք մեր մարմինը օրինավոր հաճույքներից անգամ՝ բաներից, որոնք վատը չեն, սակայն մենք պետք է Քեզ հետ լրացուցիչ ժամանակ անցկացնենք:

Օ՜, Հա՛յր Աստված, թո՛ղ որ մեզնից որևէ մեկը չմոռանա այս երեկոն և այս օրը, այլ ամեն մեկս մեր ներսից, մեր սրտի խորքից ասենք. «Տեր, ես կվճարեմ գինը՝ անկախ

նրանից, թե ինչ կանեն ուրիշները: Ես կանեմ Քո գործը, Քո կամքը: Իմ կյանքում պետք է իրագործվի Քո ծրագիրը: Իմ կյանքի և ծառայության մեջ պետք է կատարված լինի Քո կամքը: Հիսուսի անունով»:

Ինձ հետ արեք այս դավանությունը.

Թանկագին Հայր Աստված

Ես պատրաստակամ եմ, ոչ միայն միտքս է պատրաստակամ, այլև սիրտս և հոգիս. հոգիս պատրաստակամ է: Ես *կանեմ* ՔՈ կամքը՝ կհետևեմ Քո ծրագրին: Թեև մարմնիս համար կարող է դժվար լինել, ես կվճարեմ գինը և կկատարեմ Քո կամքը: Իմ կյանքում պետք է կատարված լինեն Քո կամքը և Քո ծրագիրը Հիսուսի անունով: Ես հետ չեմ քաշվի: Ես չեմ ուրանա այն խոսքերը, որոնք ասել եմ այստեղ այս երեկո՝ անկախ նրանից, թե ինչ գին կպահանջվի դրա համար: Որքան էլ ցավոտ թվա, ես գիտեմ, որ վարձքը մեծ է, և Աստծուն հնազանդվելը վարձատրվում է:

Շնորհակալություն, որ գործում ես իմ կյանքում: Շնորհակալություն, որ նախապատրաստում ես ինձ նրան, ինչ պատրաստել ես ինձ համար: Շնորհակալություն, որ ցույց ես տալիս ինձ այն ամենը, ինչ չեմ տեսնում: Շնորհակալություն, որ սովորեցնում ես այն, ինչ չգիտեմ: Շնորհակալություն, որ նախապատրաստում ես ինձ նրան, ինչ պատրաստել ես ԻՆՁ համար: Քո կամքը կկատարեմ: Ալելուիա:

Ես որոշում եմ կայացնում լինելու հավատարիմ, ճշմարիտ, նվիրված, ընծայված՝ ոչ միայն այս երեկո և ոչ միայն խոսքով, այլև գործով: Վաղը, հաջորդ շաբաթ, հաջորդ

տարի և հավիտյան ես Քոնն եմ: Օգտագործի՛ր ինձ, Տե՛ր: Օրհնությո՛ւն դարձրու ինձ մարդկության համար:

Թո՛ղ որ ինձանում ի կատար ածվեն Քո ծրագիրն ու նպատակը իմ կյանքի և ծառայության համար: Աստված՝ մեր Հայր Աստված է գործում իմ մեջ: Ալելուիա: Հանձնվում եմ Քեզ, վստահում եմ Քեզ. թույլ չեմ տա, որ իմ բնական միտքը ղեկավարի ինձ: Ես կպահպանեմ տեսիլքս, կպահպանեմ կրակը, կպահպանեմ նվիրումը և չեմ մոռանա, որ Քեզ հետ եմ առաջ շարժվում:

Ինչո՞ւ սովորել
«Ռեմա» Աստվածաշնչյան դպրոցում

Դուք կստանաք.

- Վերապատրաստում Սուրբ Հոգով լցված, առաջատար աստվածաշնչյան դպրոցներից մեկում
- Ուսուցում՝ հիմնված Աստծո Խոսքի հանդեպ ամուր հավատքի վրա
- Աճ հոգևոր ընթացքի մեջ՝ համակցված արդյունավետ ծառայության գործնական դասընթացների հետ
- Մասնագիտացում ձեր ընտրած ոլորտում՝ երիտասարդական կամ մանկական ծառայություն, ավետարանչություն, հովվական ծառայություն, միսիա, Աստվածաշնչի ուսումնասիրություն կամ օժանդակ ծառայություններ
- Կամընտրական խտացված ծրագիր երրորդ կամ չորրորդ տարիների համար. երկրպագության դպրոց, հովվական ծառայության դպրոց, համաշխարհային միսիայի դպրոց, աստվածաշնչյան ուսումնասիրությունների դպրոց և ընդհանուր ընդլայնված ուսումնասիրություններ
- Համաշխարհային ծառայության հնարավորություններ՝ դպրոցում ուսումնառելու տարիներին
- Եկեղեցիների և ծառայությունների ցանց ամբողջ աշխարհում, որոնց «Ռեման» է տրամադրում ամբողջական դրույքով աշխատակիցներ և օժանդակ ծառայողներ

Մանրամասներին և հայտադիմումին ծանոթանալու համար զանգահարե՛ք այսօր կամ անցե՛ք առցանց հղումով.

1-888-28-FAITH (1-888-283-2484)

www.rbtc.org

«Ռեմա» Աստվածաշնչյան ուսուցման կենտրոնն ընդունում է ցանկացած ռասա, մաշկի գույն և ազգային պատկանելություն ունեցող ուսանողների:

RHEMA Europe

Ինչո՞ւ արժե մտածել

«Ռեմա»
Աստվածաշնչյան ուսուցման կենտրոն ընդունվելու մասին

Սիա մի քանի հիմնավոր պատճառ.

- Ուսուցում աշխարհի առաջատար Հոգով լցված Աստվածաշնչյան դպրոցներից մեկում
- Ուսմունք, որի հիմքն Աստծո Խոսքի հանդեպ հաստատուն հավատքն է
- Աճ ձեր հոգևոր ընթացքի մեջ և արդյունավետ ծառայության գործնական ուսուցում
- Ընտրովի երրորդ և չորրորդ տարվա ինտենսիվ ծրագրեր. Երկրպագության դպրոց, Հովվական ծառայության դպրոց, Համաշխարհային միսիոներության դպրոց, Աստվածաշնչի ուսումնասիրության դպրոց և Ընդհանուր երկարացված ուսուցում

Ավելին իմանալու համար այցելե՛ք մեր կայքը.

www.rhema.eu
www.rbtc.org

«Ռեմա» Աստվածաշնչյան ուսուցման կենտրոնն ընդունում է ցանկացած ռասա, մաշկի գույն և ազգային պատկանելություն ունեցող ուսանողների:

ՈՍԿԻՆ ՎԵՐԱԴԱՐՁՐԵ՛Ք ՏԱՃԱՐ

Այսօր մարդիկ անում են նույնը, ինչ Ռոբովամ թագավորի օրերում էին անում: Հին Կտակարանում թշնամին մտավ և Տիրոջ տաճարից գողացավ ոսկին: Ապա Ռոբովամ թագավորը գահը բարձրանալուց հետո ոսկին փոխարինեց պղնձով: Քրիստոնյաներն այսօր նույնն են արել: Նրանք տաճարի ոսկին, այն է՝ Նոր Կտակարանի եկեղեցու համար Աստծո ծրագրերը, նպատակները և ձգտումները, փոխարինել են աշխարհի պղնձով: Եկեղեցի են բերել աշխարհային և մարմնական ցուցադրություններ և դրանցով փոխարինել Աստծո Հոգու իրական շարժը:

Հոգու հաջորդ մեծ հեղման համար, որն Աստված ցանկանում է բերել երկրի վրա, մարդիկ պետք է մի կողմ դնեն սեփական ծրագրերը, նպատակները և ձգտումները և ձգտեն ճշմարիտ երկրպագություն մատուցելու Աստծուն: Քրիստոսի Մարմինը երկրի վրա Աստծո փառքի դրսևորման սկզբնական փուլի ծանծաղ ջրերում է. Աստծո օրհնության այդ նոր ալիքը կգա, միայն եթե Քրիստոսի Մարմինը պղինձը հեռացնի տաճարից:

Գրքում քննարկվում են հետևյալ թեմաները.

- Ծրագրեր, նպատակներ, ձգտումներ
- Ո՞րն է քո նպատակը
- Փոփոխություն երկրպագության կարգի մեջ
- Ակնածանք. Աստծո ներկայության և զորության բանալին
- Գինը, որ պետք է վճարենք

Քենեթ Է. Հեգինը գրեթե յոթանասուն տարի ծառայության մեջ է եղել՝ այն բանից հետո, երբ տասնյոթ տարեկանում Աստված հրաշքով բժշկել է նրան սրտի արատից և արյան անբուժելի հիվանդությունից: 2003 թվականին վերապատվելի Հեգինը գնացել է Տիրոջ մոտ, սակայն նրա հիմնած ծառայությունը շարունակում է օրհնություն լինել բազում մարդկանց համար ամբողջ երկրագնդի վրա:

Քենեթ Հեգինի ծառայությունը ներառում է «Հավատքի խոսքը» անվճար ամսագիրը, «Ռեմա» աստվածաշնչյան դպրոցը, «Ռեմա» շրջանավարտների ընկերակցությունը, «Ռեմա» միջազգային ծառայողական ընկերակցությունը, «Ռեմա» առցանց աստվածաշնչյան դպրոցը և «Ռեմա» բանտերի ծառայությունը: Վերապատվելի Հեգինի որդին և վերջինիս կինը՝ Քենեթ Վ. և Լիննեթ Հեգինները, վարում են «Ռեմա փառաբանություն» ամենշաբաթյա հեռուստահաղորդումը, «Այսօրվա Ռեման» ամենշաբաթյա ռադիոհաղորդաշարը և «Կենդանի հավատքի արշավներն» ամբողջ աշխարհում: